

ISSN 1829 – 0043

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԼՐԱԲԵՐ

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ВЕСТНИК

ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ

**СБОРНИК НАУЧНО-ТЕХНИЧЕСКИХ
СТАТЕЙ**

PROCEEDINGS

OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA

**SCIENTIFIC AND TECHNOLOGICAL
COLLECTED ARTICLES**

XV

ՀԱՏՈՐ TOM VOLUME

№ 3

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN

2018

Հրատարակվում է Հայաստանի Ճարտարագիտական ակադեմիայի (ՀՃԱ) և Միջազգային Ճարտարագիտական ակադեմիայի (ՄՃԱ) Նախագահությունների որոշմամբ, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ՀՀ ԲՈՀ) կողմից **06.03.2012 վերանայված ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ՈՒՄ** (<http://www.boh.am/periodicals.php?langid=1>)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ (ՀՃԱԼ) ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր՝
Գլխ. խմբագրի
առաջին տեղակալ՝
Գլխ. խմբագրի
տեղակալներ՝
Պատ. քարտուղար՝

տ.գ.դ., պրոֆ. Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ (ՀՀ)

տ.գ.դ., պրոֆ. Ս. ՄԻՆԱՍՅԱՆ (ՀՀ)
տնտ.գ.դ., պրոֆ. Ա. ԳՅՈՒՐՁՅԱՆ (ՀՀ),
ճարտ. դ., պրոֆ. Յու. ՍԱՖԱՐՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ., պրոֆ. Ս. ՍՏԱԿՅԱՆ (ՀՀ)
տ.գ.թ., դոց. Ռ. ԲԱՐՍԵԴՅԱՆ (ՀՀ)
տ.գ.դ., պրոֆ. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ (ՀՀ), տնտ.դ., պրոֆ. Վ. ԲՈՍՏԱՆՁՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ. Վ. ԳԱԲԶԻՄԱԼՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ., պրոֆ. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ,
տ.գ.դ., պրոֆ. Բ. ԳՈՒՄԵՎ (ՈՂ), ճարտ. դ. Գ. ԴԻԲԱՆ (ՍԱՀ), տ.գ.դ.,
պրոֆ. Ն. ԵՖԻՄՈՎ (ՈՂ), ք.գ.դ., պրոֆ. Գ. ԹՈՐՈՍՅԱՆ (ՀՀ), կ.գ.դ.,
պրոֆ. Ա. ԹՈՂՈՒՆՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ., պրոֆ. ԻՆ ՍԱՄՈՒԵԼ ԻԵՆ-ԼՅԱՆ (Թայվան), տ.գ.դ., ԿԱԶՈՒՐՈՒՄՅԱՆ (Ճապոնիա), պրոֆ. Ռ. ԿԱԼԼԵՆԲՈՐՆ (Նորվեգիա), տնտ.դ. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (ՀՀ), պրոֆ. Պ. ՀԼԱՎԻՆԵԿ (Չեխիա), ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ (ՀՀ), տ.գ.թ. Ի. ՄԱՀՐԻԿՈՎԱ (Սլովենիա), պրոֆ. Հ. ՄԱՐԳՈՒԼՈՎ (ՈՂ), պրոֆ. Ո. ՄԱՐՈՒԽՅԱՆ (ՀՀ), մանկ. գ.դ. Ս. ՄԿՐՏՅԱՆ (ՀՀ), պրոֆ. Զ. ՄՈՍՁՅԱՆ (Գերմանիա), Է. ՄՈՈՈՅԱՆ (ԱՄՆ), տնտ.դ. ԶԺԵՆ ՎԵՆՏԱՆ (Չինաստան), տ.գ.դ., պրոֆ. Վ. ՉԵՐԴԻՆՅԵՎ (Բելառուս), ք.գ.դ., պրոֆ. Գ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ (ՀՀ), պրոֆ. Ս. ՊԱԳԼԻԱՐԱ (Իտալիա), տ.գ.դ., պրոֆ. Բ. ՊԱՏՈՆ (Ուկրաինա), ՊԱՌԻԼՈՂԵԼ-ԲԻԱՆԿՈ (Իտալիա), տ.գ.դ., պրոֆ. Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ., պրոֆ. Ի. ՊԵՇԿՈՎ (ՈՂ), ճարտ. թ. պրոֆ. Ն. ՍԱՐԳՍՅԱՆ (ՀՀ), տ.գ.դ., պրոֆ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ (ՀՀ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ»-ի խմբագրական խորհուրդը շնորհակալություն է հայտնում «ՎիվաՍել-ՄՏՍ» ՓԲԸ գլխավոր տնօրեն **ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆԻՆ ԼՐԱԲԵՐԻ** հրատարակման գործում ցուցաբերած օգնության համար:

Редакционный совет **“ВЕСТНИКА ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ”** благодарит Генерального директора ЗАО “ВиваСелл-МТС” **РАЛЬФА ЙИРИКЯНА** за оказанную помощь при издании **ВЕСТНИКА**.

Editorial council of **“PROCEEDINGS OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA”** expresses gratitude to the General Manager of CJSC “VivaCell-MTS” **RALPH YIRIKIAN** for the help in publishing **“PROCEEDINGS”**.

<http://www.engineeracademy.am>

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ (ՀՃԱԼ), 2018

Печатается согласно решению Президиумов Инженерной академии Армении (ИАА) и Международной инженерной академии (МИА), включен в список публикаций, принятых Высшей аттестационной комиссией (ВАК) РА

(<http://www.boh.am/periodicals.php?langid=1>).

**ВЕСТНИК ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ (ВИАА)
РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

Главный редактор

д.т.н., проф. **С. Амбарцумян (РА)**

Первый заместитель

д.т.н., проф. **С. Минасян (РА)**

гл. редактора

д.экон.н., проф. **А. Гюрджян (РА)**, д. архит., проф. **Ю. Сафарян (РА)**,

Заместители гл.

д.т.н., проф. **М. Стакян (РА)**

редактора

к.т.н., доц. **Р. Барсегян (РА)**

Отв. секретарь

д.т.н., проф. **А. Аракелян (РА)**, д.экон.н., проф. **В. Бостанджян (РА)**, д.т.н., проф. **А. Варданын (РА)**, д.т.н. **В. Габзималян (РА)**, д.т.н., проф. **Г. Галстян (РА)**, д.ф-м.н., проф. **А. Гукасян (РА)**, д.т.н., проф. **Б. Гусев (РФ)**, д.архит. **Г. Дибан (САР)**, д.т.н., проф. **Н. Ефимов (РФ)**, д.т.н., проф. **Ин Самуэл Иен-Лянь (Тайвань)**, **Казуро Имаи (Япония)**, проф. **Р. Калленборн (Норвегия)**, д.экон. наук **К. Карапетян (РА)**, проф. **Г. Маргулов (РФ)**, проф. **В. Марухян (РА)**, к.т.н. **И. Махрикова (Словения)**, д.пед.н. **М. Мкртчян (РА)**, проф. **Дж. Момджян (Германия)**, **Э. Мороян (США)**, проф. **С. Паглиара (Италия)**, **Паоло Дель-Биянко (Италия)**, д.т.н., проф. **Б. Патон (Украина)**, д.т.н., проф. **В. Петросян (РА)**, д.т.н., проф. **И. Пешков (РФ)**, канд. архит., проф. **Н. Саргсян (РА)**, д.хим.н., проф. **Г. Торосян (РА)**, д.биол.н., проф. **А. Трчунян (РА)**, проф. **П. Хлавинец (Чехия)**, д.т.н., проф. **В. Чердынцев (Беларусь)**, д.экон.наук **Чжэн Веньтан (КНР)**, д.хим. н., проф. **Г. Чилингарян (США)**

Printed according to the Decision of Engineering Academy of Armenia (EAA) and International Academy of Engineering (IAE), included into the list of publication accepted by the Highest Certifying Commission (HCC RA) (<http://www.boh.am/periodicals.php?langid=1>)).

**PROCEEDINGS OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA (PEAA)
EDITORIAL COUNCIL**

Editor-in-chief

doctor of tech. sci., prof. **S. Hambartsumyan (RA)**

First deputy Editor-in-

chief

doctor of tech. sci., prof. **S. Minasyan (RA)**

Editor-in-chief deputies

doctor of econ. sci., prof. **A. Gyurjyan (RA)**,

doctor of architecture, prof. **Yu. Safaryan (RA)**,

doctor of tech. sci., prof. **M. Stakyan (RA)**

Responsible secretary

candidate of tech. sci. **R. Barseghyan (RA)**

doctor of tech. sci., prof. **A. Arakelyan (RA)**, doctor of econ. sci., prof. **V. Bostanjyan (RA)**, doctor of tech. sci., prof. **V. Cherdintsev (Belarus)**, doctor of chem. sci., prof. **G. Chilingaryan (USA)**, doctor of architecture **G. Diban (SAR)**, doctor of tech. sci., prof. **N. Yefimov (RF)**, doctor of tech. sci. **V. Gabzimalyan (RA)**, doctor of tech. sci., prof. **G. Galstyan (RA)**, doctor of phys.-math. sci., prof. **A. Ghukasyan (RA)**, doctor of tech. sci., prof. **B. Gusev (RF)**, prof. **P. Hlavinek (Czech republic)**, prof. **R. Kallenborn (Norway)**, cand. of tech. sci. **I. Mahrikova (Slovak republic)**, doctor of econ. sci. **K. Karapetyan (RA)**, **Kazuro Ima (Japan)**, doctor of tech. sci., prof. **H. Margulov (RF)**, prof. **V. Marukhyan (RA)**, doctor of ped. sci. **M. Mkrтчян (RA)**, prof. **J. Momjyan (Germany)**, **A. Moroyan (USA)**, doctor of tech. sci. **Paolo Del-Biyanko (Italy)**, prof. **S. Pagliara (Italy)**, doctor of tech. sci., prof. **B. Paton (Ukraine)**, doctor of tech. sci., prof. **V. Petrosyan (RA)**, doctor of tech. sci., prof. **I. Peshkov (RF)**, doctor of tech. sci., prof. **Samuel Yen-Liang Yin (Taiwan)**, candidate of arc., prof. **N. Sargsyan (RA)**, doctor of chem. sci., prof. **G. Torosyan (RA)**, doctor of biol. sci., prof. **A. Trchunyan (RA)**, doctor of tech. sci., prof. **A. Vardanyan (RA)**, doctor of econ. sci. **Wentang Zheng (PRC)**

Համարի թողարկման պատասխանատու
տ.գ.թ., դոց. **Ռ.Ն. Բարսեղյան**

Բաժինների պատասխանատուներ՝

Էկոնոմիկա և կառավարում՝ տնտ.դ., պրոֆ. **Ա. Գյուրջյան**, տ.գ.դ., պրոֆ. **Ս. Սիմոնյան**
Էլեկտրատեխնիկա և սարքաշինություն՝ տ.գ.դ., պրոֆ. **Մ. Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Գ. Այվազյան**
Էներգետիկա՝ տ.գ.դ., պրոֆ. **Ս. Մինասյան**
Լեռնահանքային արդյունաբերություն՝ երկ.գ.թ. **Հ. Ալոյան**
Ճարտարապետություն, քաղաքաշինություն և շինարարություն՝ ճարտ.դ., պրոֆ. **Յու. Սաֆարյան**
Մեքենաշինություն և մետալուրգիա՝ տ.գ.դ., պրոֆ. **Մ. Ստակյան**, տ.գ.դ., պրոֆ. **Ս. Աղբալյան**
Սննդի և թեթև արդյունաբերության տեխնոլոգիա՝ տ.գ.դ. **Վ. Գաբզիմալյան**
Ինֆորմատիկա, էլեկտրոնիկա և գիտական սարքաշինություն՝ տ.գ.դ., պրոֆ. **Ա. Առաքելյան**,
տ.գ.դ., պրոֆ. **Ռ. Վարդանյան**
Քիմիական, կենսաբանական և բնապահպանական տեխնոլոգիաներ՝ ք.գ.դ., պրոֆ. **Գ. Թորոսյան**
Ռազմաճարտարագիտական հիմնահարցեր և կոլեկտիվ անվտանգության քաղաքական
հայեցակարգեր՝ տ.գ.թ. **Ն. Թորոսյան**

Ответственные по секциям:

Экономика и управление – д.экон.н., проф. **А. Гюрджян**, д.т.н., проф. **С. Симонян**
Электротехника и приборостроение – д.т.н., проф. **М. Багдасарян**, к.т.н., доц. **Г. Айвазян**
Энергетика – д.т.н., проф. **С. Минасян**
Горнорудная промышленность – к.геол.наук **Г. Алоян**
Архитектура, градостроительство и строительство – д.архит., проф. **Ю. Сафарян**
Машиностроение и металлургия – д.т.н., проф. **М. Стакян**, д.т.н., проф. **С. Агбалин**
Технология пищевой и легкой промышленности – д.т.н. **В. Габзимальн**
Информатика, электроника и научное приборостроение – д.т.н., проф. **А. Аракелян**,
д.т.н., проф. **Р. Варданян**
Химическая, биологическая и природоохранная технологии – д.хим.н., проф. **Г. Торосян**
Военно-инженерные проблемы и политические аспекты коллективной безопасности – к.т.н. **Н. Торосян**

Responsibles for sections:

Economics and Management – doctor of econ. sci., prof. **A. Gyurjyan**, doctor of tech. sci., prof. **S. Simonyan**
Electrotechnology and Instrumentation – doctor of tech. sci., prof. **M. Baghdasaryan**,
cand. of tech. sci., Assoc. prof. **G. Ayvazyan**
Energetics – doctor of tech. sci., prof. **S. Minasyan**
Mining-Ore Industry – cand. of geol. sci. **H. Aloyan**
Architecture, Civil Engineering and Construction – doctor of architecture, prof. **Yu. Safaryan**
Mechanical Engineering and Metallurgy – doctor of tech. sci., prof. **M. Stakyan**,
doctor of tech. sci., prof. **S. Aghbalyan**
Technology of Food and Light Industry – doctor of tech. sci. **V. Gabzimalyan**
Information Systems, Electronics and Scientific Instrumentation – doctor of tech. sci., prof. **A. Arakelyan**,
doctor of tech. sci., prof. **R. Vardanyan**
Chemical, Biological and Nature Protection Technologies – doctor of chem. sci., prof. **G. Torosyan**
Military-Engineering Problems and Political Aspects of Collective Security – candidate of tech. sci. **N. Torosyan**

Հրատարակչական գործունեություն իրականացնող
Հայաստանի ճարտարագիտական ակադեմիա
Հ/Կ

Վկայական 03Ա 083738 / 15.12.08 /
Երևան, Տերյան 105
հեռ (010) 564 207
E-mail: lraber@academy.am
Տպաքանակ՝ 110
Տպագրված է



հրատարակչությունում

Ամսագիրը վաճառքի ենթակա չէ

Խմբագիրներ՝ **Ժ.Ս. Սեյրանյան**
Ն.Ա. Խաչատրյան
Ն.Հ. Զաքարյան

Համակարգչային ձևավորումը՝
Լ.Բ. Մարտիրոսյան

Редакторы – **Ж.С. Сейранян**
Н.А. Хачатрян
Н.А. Закарян

Компьютерное оформление – **Л.Б. Мартиросян**

Editors – **Zh.S. Seyranyan**
N.A. Khachatryan
N.H. Zakaryan

Computer design – **L.B. Martirosyan**

Ա.Գ. Գևորգյան, Ա.Հ. Առաքելյան, Ն.Գ. Գևորգյան

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կատարվել է հետազոտություն առևտրային բանկի վարկավորման գործընթացի ուսումնասիրության շրջանակներում: Ուսումնասիրվել է բանկի շահույթի կախվածությունը հաճախորդներին տրամադրված վարկերից, ինչպես նաև բանկում ներգրավված ավանդներից: Այնուհետև հետազոտվել է շահույթի կախվածությունը վարկերի տեսակներից:

Առանցքային բառեր. առևտրային բանկի չբաշխված շահույթ, հաճախորդներին տրամադրված վարկեր, բանկում ներգրավված ավանդներ, գծային ռեգրեսիա:

Վարկային գործառնությունները տնտեսության բնականոն գործունեության ապահովման նախադրյալներից են: Շուկայական տնտեսության անխափան գործունեությունն ապահովելու տեսանկյունից վարկը կատարում է մի քանի գործառնություն՝ վերաբաշխման, միջոցների շրջանառության ապահովման, կապիտալի և արտադրության կենտրոնացման ու տնտեսության վարկային կարգավորման: Վարկերի տրամադրումը առևտրային բանկերի ավանդական գործառնություններից է, ակտիվային գործառնությունների կարևորագույն հատվածը, իսկ դրանից ստացված տոկոսներից գոյանում է բանկի տոկոսային եկամուտների զգալի մասը, հետևաբար, բանկերի համար առանձնապես կարևորվում է վարկային գործունեության ողջ գործընթացի կառավարումը: Բանկի կողմից որդեգրված խելամիտ վարկային քաղաքականության դեպքում կարելի է ակնկալել նրա հիմնական տոկոսային, եկամուտների ստացում, վճարունակության և կայունության ցուցանիշների բարելավում և, ընդհակառակը, վարկային ռիսկի կառավարման բնագավառում բացթողումները կարող են դառնալ զգալի կորուստների պատճառ [1]:

Եկամտաբերության առումով ոչ պակաս կարևոր դեր ունեն բանկի կողմից ներգրավված ավանդները: Ինչպես ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, այնպես էլ առևտրային բանկերը, իրենց գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսները հավաքագրում են պասիվային գործառնությունների միջոցով: Դրանց շարքին դասվում են ֆիզիկական և իրավաբանական անձանցից ավանդների ներգրավումը, սեփական բաժնետոմսերի թողարկումը, կազմակերպությունների կողմից բանկում բանկային հաշիվների բացումը և այլն: Բանկերի պասիվային գործառնությունները ստորաբաժանվում են երկու խմբի. գործառնություններ, որոնց արդյունքում ձևավորվում են բանկի սեփական միջոցները կամ կապիտալը, և գործառնություններ, որոնց արդյունքում ձևավորվում են բանկի ներգրավված միջոցները կամ պարտավորությունները: Ընդ որում, հանդիսանալով ֆինանսական շուկայի մասնագիտացված կառույց, որի հիմնական խնդիրը հաճախորդների ժամանակավորապես ազատ դրամական միջոցների ներգրավումն է և դրանց հետագա տեղաբաշխումը, առևտրային բանկերի պասիվների կառուցվածքը էապես տարբերվում է այլ տնտեսվարող սուբյեկտների պասիվներից [2]:

Կատարվում է ռեգրեսիոն վերլուծություն, որի նպատակն է՝ պարզել, թե բանկի ստացած շահույթը որքանով է կախված բանկի տրամադրված վարկերի և ավանդների պորտֆելից: Պետք է նշել, որ ռեգրեսիայի վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ փոփոխականների կապը վիճակագրական է, ոչ թե՝ ֆունկցիոնալ, այսինքն փոփոխականները պատահական բնույթ ունեն:

Ռեգրեսիոն վերլուծության համար ներմուծենք հետևյալ փոփոխականները.

Profit – չբաշխված շահույթ,

Vark – տրամադրված վարկեր,

avand – ներգրավված ավանդներ:

Մոդելի ընդհանուր տեսքը հետևյալն է.

$$\text{Profit} = C(1) + C(2) \cdot \text{vark} + C(3) \cdot \text{avand}; \quad (1)$$

Շահույթի կախվածությունը վերը նշված փոփոխականներից բազմակի փոփոխականներով ռեգրեսիայի մոդել է, որտեղ profit –ը կախյալ փոփոխական է, vark, avand –ն անկախ փոփոխականներ են: C(1)-ը կոչվում է ազատ անդամ: Ընդունված է այս գործակիցը ներկայացնել որպես կախյալ փոփոխականի միջինացված արժեք, երբ անկախ փոփոխականները հավասար են զրոյի կամ ֆիքսված

են: Անկախ փոփոխականների բազմապատկիչները, տվյալ դեպքում՝ C(2), C(3)-ը կոչվում են ռեգրեսիայի գործակիցներ: Ռեգրեսիայի գործակիցների հաշվարկման համար կիրառվում է փոքրագույն քառակուսիների մեթոդը (OLS): Ընդհանուր առմամբ մոդելի կառուցումը ենթադրում է որոշակի քայլերի հաջորդականություն, ինչն էլ հենց կատարվել է աշխատանքում [2]:

1. Կատարվում է մոդելի գործակիցների նշանակալիության ստուգում՝ վարկածի ստուգումով (t-statistic-ի միջոցով):

2. Կատարվում է ամբողջական մոդելի նշանակալիության ստուգում, այսինքն՝ անկյունային գործակիցների՝ 0-ի հավասար լինելու կամ դետերմինացիայի գործակցի (R^2)՝ 0-ի հավասար լինելու ստուգում:

Էվոկաբանկի վարկային գործընթացի քաղաքականությունը: Տվյալ աշխատությունում հետազոտվում է բառևտրային բանկի շահույթի կախվածությունը հաճախորդներին տրված վարկերից և նրանցից ներգրավված ավանդներից:

Վերցված են Էվոկաբանկի 2017 թվականի օրական տվյալները [3]: Որպես կախյալ փոփոխական վերցված է բանկի չբաշխված շահույթը: Կախյալ փոփոխականներն են ավանդներն ու վարկերը:

Հետազոտության արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Շահույթի կախվածությունը հաճախորդներին տրված վարկերից և ավանդներից

Dependent Variable: PROFIT

Method: Least Squares


Date: 08/31/18 Time: 22:14

Sample: 1/01/2016 12/31/2016

Included observations: 366

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
AVAND	0.090403	0.007409	12.20096	0.0000
VARK	0.103105	0.014223	7.248950	0.0000
C	1358807.	438284.3	3.100287	0.0021
R-squared	0.558952	Mean dependent var		7793057.
Adjusted R-squared	0.556522	S.D. dependent var		497720.5
S.E. of regression	331452.7	Akaike info criterion		28.26852
Sum squared resid	3.99E+13	Schwarz criterion		28.30051
Log likelihood	-5170.139	F-statistic		230.0200
Durbin-Watson stat	0.053133	Prob(F-statistic)		0.000000

Աղյուսակից երևում է, որ մոդելում առկա փոփոխականները նշանակալի են և ունեն դրական ազդեցություն շահույթի վրա: Այստեղ երևում է, որ վարկերի գործակիցը ավելի մեծ է ավանդների գործակցից, ինչը նշանակում է, որ տրված վարկերի աճը ավելի մեծ ազդեցություն ունի շահույթի վրա քան ավանդները, ինչը բնական է: Adjusted R-squared 0,55 է, այսինքն՝ մոդելում կախյալ փոփոխականը 55%-ով կախված է անկախ փոփոխականներից (նկ.)



Նկ. Իրական և ռեգրեսիոն հավասարման միջոցով չբաշխված շահույթի կորերի համեմատությունը, որտեղ Actual-ը դա իրական կորն է, Fitted-ը ռեգրեսիոն հավասարման միջոցով ստացված շահույթի կորը, իսկ Residual-ը ռեգրեսիոն հավասարման մնացորդն է

Այնուհետև հետազոտվել է շահույթի կախվածությունը վարկերից՝ ըստ նրանց տեսակի:
Որպես կախյալ փոփոխական վերցված է բանկի չբաշխված շահույթը այդ ժամանակահատվածում: Կախյալ փոփոխականներն են՝ irav- իրավաբանական անձանց և հիմնարիկներին տրված վարկերը, Fiz- ֆիզիկական անձանց տրված վարկերը, bankanz- Բանկի հետ կապված անձանց տրված վարկեր և ավանդները, bank- Բանկի աշխատակիցներին տրված վարկերը: Օգտագործելով գծային ռեգրեսիոն մոդելը՝ ստացել ենք հետևյալ կախվածությունը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Շահույթի կախվածությունը հաճախորդներին տրված վարկերից

Dependent Variable: PROF
Method: Least Squares
Date: 08/30/18 Time: 17:15
Sample: 1/01/2017 12/31/2017
Included observations: 365

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
IRAV	0.084336	0.017937	4.701777	0.0000
FIZ	-0.477843	0.195733	-2.441297	0.0151
BANKANZ	-4.564844	0.510346	-8.944601	0.0000
BANK	31.17168	2.033123	15.33192	0.0000
C	5430955.	1333219.	4.073565	0.0001
R-squared	0.644251	Mean dependent var		7793057.
Adjusted R-squared	0.640309	S.D. dependent var		497720.5
S.E. of regression	298504.2	Akaike info criterion		28.06452
Sum squared resid	3.22E+13	Schwarz criterion		28.11784
Log likelihood	-5130.808	F-statistic		163.4398
Durbin-Watson stat	0.103007	Prob(F-statistic)		0.000000

Մոդելում Adjusted R-squared-ը 0,64 է, այսինքն՝ կախյալ փոփոխականը 64%-ով կախված է անկախ փոփոխականներից: Գործակիցների t-Statistic-ը մոդելով մեծ է երկուսից, այսինքն՝ փոփոխականները նշանակալի են: Իրավաբանական անձանց տրված վարկերի գործակիցը դրական է, ինչը վկայում է, որ

նրանց տրված վարկերը դրական նշանակություն ունեն շահույթի համար: Ֆիզիկական անձանց տրված վարկերի գործակիցը բացասական է: Այս փաստը կարելի է բացատրել հետևյալ կերպ. ֆիզիկական անձանց պարագայում բարձր է վարկերի չվերադարձելիության ցուցանիշը: Վարկը վերցվում է, չվերադարձնելու պայմաններում դրված գրավը՝ օրինակ տունը, բռնագրավվում է բանկի կողմից, սակայն բռնագրավված գույքը այս ժամանակահատվածի համար չի կարող համարվել շահույթ, ուստի ֆիզիկական անձանց տրված վարկերը բացասական ազդեցություն ունեն շահույթի վրա:

Այստեղ հետաքրքիր է բանկի աշխատակիցներին տրված վարկերի մեծ ազդեցությունը շահույթի վրա: Հետազոտման արդյունքում պարզել ենք, որ աշխատակիցների կողմից վերցված վարկերը մշտապես ապահովում են վերադարձելիություն, այսինքն՝ դրական ազդեցություն ունեն շահույթի վրա [3]:

Եզրակացություն: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում ստացել ենք շահույթի կախվածությունը ներգրավված ավանդներից և հաճախորդներին տրամադրած վարկերից: Երկու փոփոխականն էլ ունեն դրական ազդեցություն շահույթի վրա, սակայն վարկերի ազդեցությունն ավելի մեծ է, քան ավանդների: Այնուհետև կատարելով հետազոտություն՝ ստացել ենք, որ շահույթի վրա դրական ազդեցություն ունեն իրավաբանական անձանց տրամադրած վարկերը և բանկի աշխատակիցներին տրամադրած վարկերը: Քանի որ ֆիզիկական անձանց տրամադրած վարկերը հաճախ չեն ապահովում վերադարձելիություն և բանկին է մնում գրավ դրված գույքը, ապա ժամանակի նույն պահի շահույթի վրա այն ունենում է բացասական ազդեցություն:

Գրականություն

1. Բանկային գործ. Ուսումնական ձեռնարկ / Բ. Ասատրյան, Վ. Գաբրիելյան, Ն. Երիցյան և ուրիշ. - Երևան, 2004.- 718 էջ:
2. Դուշյան Լ., Թերզյան Ս., Դավթյան Լ. Տարրական էկոնոմետրիկա. - Երևան: ԶԵՄԹ, 2002. - 279 էջ:
3. <https://www.evocabank.am>

11.09.2018.

Ա.Գ. Գեվորգյան, Ա.Ա. Արակելյան, Ն.Գ. Գեվորգյան

ПОЛИТИКА РЕГУЛИРОВАНИЯ ПРОЦЕССА КРЕДИТОВАНИЯ КОММЕРЧЕСКОГО БАНКА

Проведено исследование процесса кредитования коммерческого банка. Изучена зависимость прибыли банка от кредитов, предоставленных клиентам, а также от привлеченных банком депозитов. Исследована зависимость прибыли от видов кредитов.

Ключевые слова: *нераспределенная прибыль коммерческого банка, кредиты клиентам, депозиты в банке, линейная регрессия.*

A.G. Gevorgyan, A.H. Arakelyan, N.G. Gevorgyan

THE POLICY OF THE CREDIT PROCESS SETTLEMENT OF THE COMMERCIAL BANK

A study of the commercial banking lending process was conducted. The dependence of the bank's profits on loans extended to clients, as well as deposits attracted by the bank has been studied. The profit dependence of loans on their types was investigated.

Keywords: *commercial bank's retained earning, loans to customers, deposits in the bank, linear regression.*

Գևորգյան Աննա Գեղամի – տնտես. գիտ. թեկնածու (ԵՊՀ)

Առաքելյան Արամ Հմայակի – տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (ԵՊՀ)

Գևորգյան Նունե Գեղամի – հայցորդ (ԵՊՀ)

Ն.Մ. Զրբաշյան, Լ.Հ. Զիլֆինյան

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿՐԱ


Վերլուծվում է դրամական փոխանցումների ազդեցությունը ՀՀ համախառն ներքին արդյունքի վրա: Ստուգվել են դրամական փոխանցումների՝ ՀՆԱ-ի ու սպառման վրա երկարաժամկետ ու կարճաժամկետ ազդեցության մասին վարկածներ: Գնահատվել է սխալի ճշգրտման վեկտորական մոդել, ըստ որի՝ դրամական փոխանցումները նպաստում են ՀՆԱ-ի աճին թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում, և դրանց միջև կա երկարաժամկետ դինամիկ հավասարակշռություն: Փոխանցումներն ազդում են սպառման վրա միայն կարճաժամկետ հեռանկարում:

Առանցքային բառեր. *դրամական փոխանցումներ, ՀՆԱ, երկարաժամկետ դինամիկ հավասարակշռություն, սխալի ճշգրտման վեկտորական մոդել, սխալի ճշգրտման գործակից:*

Դրամական փոխանցումները միջազգային ֆինանսական հոսքերի կարևոր մասն են: Դրանք հաշվարկվում են ըստ միջազգայնորեն ընդունված ստանդարտ մեթոդաբանության, որն առաջարկվել է Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից՝ երկրների վճարային հաշվեկշիռների ու ներդրումային դիրքի հաշվարկման ուղեցույցում, և ընդգրկում են տվյալ երկրից դուրս աշխատող միգրանտների աշխատանքի գուտ փոխհատուցումը (առանց եկամտահարկի, սոցիալական վճարների և տրանսպորտային ծախսերի), այլ երկրների ռեզիդենտների անձնական տրանսֆերտները և կապիտալ տրանսֆերտները ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնային տնտեսությունների միջև: Ամբողջ աշխարհում դեպի միգրացիոն արտահոսք ունեցող երկրներ կատարված դրամական փոխանցումները 2017թ.-ին կազմել են 593,8 մլրդ ԱՄՆ դոլար, որի գերակշիռ մասը՝ շուրջ 75%-ը ներհոսել է դեպի զարգացող երկրներ:

Դեպի ՀՀ դրամական փոխանցումների ներհոսքը պայմանավորված է մի կողմից՝ սփյուռքի գոյությամբ, իսկ մյուս կողմից՝ ՀՀ-ից արտաքին միգրացիայի աճով: ՀՀ մշտական բնակչության թվաքանակը վերջին մոտ երեք տասնամյակում (1990–2016թթ.) նվազել է 15%-ով, ինչը պայմանավորված է եղել միայն արտաքին միգրացիայի բացասական մնացորդով, որի գումարային մեծությունը նշված ժամանակահատվածում կազմել է շուրջ մեկ միլիոն մարդ:


Միգրանտների ու սփյուռքի կողմից ուղարկվող դրամական փոխանցումները դեպի ՀՀ մեծ ծավալներ ունեն: Ըստ ԿԲ տվյալների՝ 2004–2017թթ. ընթացքում դրանց ծավալները կրկնապատկվել են և 2017թ.-ին կազմել 1,494.6 մլն. դոլար, կամ ՀՆԱ-ի 13%-ի չափ գումար (տե՛ս նկ. 1): Ըստ որում, այդ գումարի կեսից ավելին՝ 52%-ը ստացվել է դրսում աշխատողների աշխատանքի փոխհատուցումից: Ըստ Համաշխարհային բանկի 2015 և 2016 թթ.-ի տվյալների, Հայաստանն իր՝ ՀՆԱ-ի նկատմամբ դրամական փոխանցումների ունեցած հարաբերակցության ցուցանիշով աշխարհի 200 երկրների շարքում զբաղեցրել է 20-րդ տեղը, ԱՊՀ երկրների խմբում՝ 4-րդ տեղը, ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների խմբում՝ 9-րդ տեղը, ԵԱՏՄ երկրների խմբում՝ 2-րդ տեղը:



Նկ. 1. Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի և դրանց հարաբերակցությունը ՀՆԱ նկատմամբ, 2004-2017թթ.

Աղբյուր՝ ՀՀ ԿԲ՝ Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի՝ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> և ՀՀ ԱՎԾ հրապարակումներ

2004-2017թթ. ընթացքում դրամական փոխանցումները շարունակաբար գերազանցել են երկիր մտնող օտարերկրյա ուղղակի ներդրումների, ինչպես նաև զարգացմանն ուղղված պաշտոնական օժանդակության գուտ ներհոսքի ծավալները (տե՛ս նկ. 2): Ավելին, այդ ընթացքում այն միջին հաշվով երկու անգամ գերազանցել է նաև վերջին երկուսի ծավալին՝ միասին վերցրած (բացի 2009թ.-ից, երբ տնտեսական ճգնաժամի ազդեցության տակ այն կտրուկ անկում է ապրել), այսինքն՝ դրամական փոխանցումները եղել և մնում են դեպի ՀՀ ֆինանսական հոսքերի կարևորագույն բաղկացուցիչը, ուստի դրանց ազդեցությունը Հայաստանում մակրոտնտեսական իրավիճակի ու տնտեսական աճի վրա դժվար է թերագնահատել:




Նկ. 2. Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումները, օտարերկրյա ուղղակի ներդրումների և զարգացմանն ուղղված պաշտոնական օժանդակության գուտ ներհոսքի ծավալները 2004-2017թթ.

Աղբյուր՝ ՀԲ՝ “World Development Indicators 2017” տվյալների շտեմարան՝ <http://data.worldbank.org/data-catalog/world-development-indicators>, և ՀՀ ԿԲ՝ Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի՝ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

Դրամական փոխանցումների ազդեցությունը՝ դրանք ընդունող երկրների մակրոտնտեսական իրավիճակի վրա տնտեսագիտական գրականության մեջ գնահատվում է ոչ միաբեկորաբար: Մի շարք հեղինակներ, ելնելով էմպիրիկ տվյալների վերլուծություններից, պնդում են, որ դրամական փոխանցումները նպաստում են ընդունող երկրի տնտեսական աճին՝ սպառման, խնայողությունների ու ներդրումների աճի միջոցով: Ադելմանն ու Թայլորը ցույց են տվել, որ յուրաքանչյուր դոլար, որն ուղարկվում է միգրանտի կողմից, ավելացնում է Մեքսիկայի համախառն ազգային արդյունքը 2,69-ից

3,17 դոլարով՝ կախված այն ստացող տնային տնտեսության եկամտային խմբից [1]: Ռապոպորտն ու Դոնքուերը ցույց են տվել, որ դրամական փոխանցումները նպաստում են ինքնագրավածության աճին և ավելացնում փոքր բիզնեսում ներդրում իրականացնելու հավանականությունը [2]: Ջոզվանիչն ուսումնասիրել է դրամական փոխանցումների ազդեցությունը աղքատության և տնտեսական աճի վրա ասիական և խաղաղօվկիանոսյան զարգացող երկրներում և հանգել նրան, որ դրանք միայն սահմանային ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա՝ ներդրումների աճի ու մարդկային կապիտալի զարգացման միջոցով [3]: Մպատաֆորան չի տեսել անմիջական կապ դրամական փոխանցումների և ՀՆԱ-ի միջև [4]: Չամիի հետազոտություններում դրամական փոխանցումների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա նույնիսկ բացասական է [5]: Հետազոտողների մի մասը պնդում է, որ դրամական փոխանցումները պարտադիր չէ, որ ուղղվեն երկարաժամկետ ներդրումների, քանի որ ստացողները մեծապես ծախսում են այդ միջոցները առօրյա սպառման նպատակով: Ռասելը պնդում է, որ դրամական փոխանցումների ազդեցությունը զարգացման վրա դրական է՝ *երկարաժամկետ* հատվածում [6]: Դրամական փոխանցումներն ի սկզբանե ֆինանսավորում են կարճաժամկետ ներդրումները, երկարաժամկետ ներդրում իրականացնելու մոտիվներն առաջանում են ավելի ուշ:


Հայաստանում դրամական փոխանցումների մակրոտնտեսական ազդեցություններին նվիրված հետազոտությունները փաստում են, որ դրանք գերազանցապես ուղղվում են սպառմանը և այդպիսով միջնորդավորված կերպով դրականորեն ազդում ՀՆԱ-ի աճի վրա [7]: Մի շարք հետազոտություններ վկայում են, որ դեպի Հայաստան հոսող դրամական փոխանցումները դրական ազդեցություն են ունենում տնտեսական աճի վրա [8], մյուսները՝ դրական ազդեցությունը հատուկ է կարճաժամկետ հեռանկարին, իսկ երկարաժամկետ հեռանկարում ազդեցությունը բացասական է և առաջացնում է նույնիսկ «Հոլանդական ախտի» նախանշաններ [9, 10]: Այսինքն, այս հարցը Հայաստանի համար նույնպես գնահատվում է ոչ միաթեքորեն: Նկատի ունենալով, որ Հայաստանում փոխանցումներն ուղղվում են գերազանցապես սպառմանը՝ կարևոր է դիտարկել սպառման, դրամական փոխանցումների ու ՀՆԱ-ի փոխադարձ կապը թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում, ինչը դեռևս բավականաչափ ուսումնասիրված չէ: Տարեկան կտրվածքով այս երեք ցուցանիշների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ժամանակի մեջ ունեն իրար նման վարք (տե՛ս նկ. 3):



Նկ. 3. Դրամական փոխանցումների, հաստատուն գներով ՀՆԱ-ի և սպառման հավելաճի տեմպերի շարժը 2005-2016թթ.

Աղբյուր՝ ՀՀ ԿԲ՝ Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի՝ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> և ՀՀ ՍՎԾ հրապարակումներ

Մեր կողմից գնահատվել է սպառման, դրամական փոխանցումների և ՀՆԱ-ի միջև կապի գնահատման՝ սխալի ճշգրտման վեկտորական մոդել (այսուհետ՝ VECM)՝ օգտագործելով նշված ցուցանիշների 2004-2017թթ. եռամսյակային ժամանակային շարքերի ապասեզոնայնացված (հարթեցված) և բնական հիմքով լոգարիթմված տվյալները (տե՛ս նկ. 4): Գնահատումն իրականացվել է EViews փաթեթի միջոցով: Վերլուծությունը ցույց է տվել, որ նշված բոլոր շարքերն ունեն ստոխաստիկ տրենդ և I(1) գործընթացներ են, ըստ որում, ունեն բեկում՝ 2009թ.-ի առաջին և 2014թ.-ի առաջին եռամսյակներում: Այս արդյունքները ստացվել են Դիկի-Ֆուլերի՝ ընդլայնված, բեկումով միավոր արմատ թեստի կիրառման միջոցով:



Նկ. 4. ՀՆԱ-ի, սպառման և դրամական փոխանցումների հարթեցված շարքերի բնական հիմքով լոգարիթմները եռամսյակային կտրվածքով 2004-2017թթ.

Աղբյուր՝ ՀՀ ԿՔ՝ Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի՝ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> և ՀՀ ԱՎԾ հրապարակումներ

VECM մոդելավորման տեխնիկան ընտրվել է այն հիմնավորմամբ, որ դիտարկվող ժամանակային շարքերը $I(1)$ գործընթացներ են և կոինտեգրվող են, այսինքն՝ դրանց գծային կոմբինացիան ստացիոնար՝ $I(0)$ գործընթաց է, և շարքերը երկարաժամկետ դինամիկ հավասարակշռության մեջ են: Դրամական փոխանցումների, սպառման և ՀՆԱ-ի շարքերի միջև կոինտեգրացիոն կապի գոյությունը ստուգվել է Յոհանսենի թեստի միջոցով, որի արդյունքները բերված են աղյուսակում: Այն վկայում է, որ երեք փոփոխականները երկարատև հավասարակշռության մեջ են, և դրանց միջև կա երկու կոինտեգրող հավասարում:

Աղյուսակ

Յոհանսենի կոինտեգրացիոն թեստի արդյունքները

Կոինտեգրացվող վեկտորների քանակ	Հետքի թեստի արդյունքները		Առավելագույն սեփական արժեքի թեստի արդյունքները	
	λ_{trace} վիճականի		λ_{max} վիճականի	
$r = 0^*$	58,07413	$(p = 0,0000)$	36,37594	$(p = 0,0003)$
$r \leq 1$	21,69819	$(p = 0,0315)$	19,54736	$(p = 0,0127)$
$r \leq 2$	2,150836	$(p = 0,7475)$	2,150836	$(p = 0,7475)$

Ընդհանուր դեպքում VECM մոդելի տեսքը k լագի դեպքում հետևյալն է՝

$$\Delta y_t = \mu + \sum_{j=1}^{k-1} \Gamma_j \Delta y_{t-j} + \Pi y_{t-k} + \varepsilon_t, \quad (1)$$

որտեղ Δ -ն տարբերական օպերատոր է, y_t -ն՝ $p \times 1$ չափանի փոփոխականների վեկտորն է, Γ_j - ն $p \times p$ չափանի մատրից է, որը նկարագրում է փոփոխականների կարճաժամկետ կապը, $\Pi = \alpha\beta'$ մատրիցը նկարագրում է երկարաժամկետ կախվածությունները, որտեղ α -ն ցույց է տալիս սխալի ճշգրտման արագությունը և կոչվում է սխալի ճշգրտման գործակից, իսկ β' -ը կոինտեգրող վեկտորների մատրիցն է: Մոդելի մեջ մտնող լագային արժեքների քանակը գտնելու համար մեր կողմից գնահատվել է առանց սահմանափակումների վեկտորական ավտոռեգրեսիայի մոդել ստացիոնարացված փոփոխականներով, և արդյունքների նկատմամբ կիրառվել է լագերի որոշման թեստը: Արդյունքում պարզվել է, որ VECM մոդելի գնահատման համար նպատակահարմար է մեկ լագի ներառումը: Ուստի գնահատվելիք մոդելը երեք հավասարումների համակարգ է, որոնք, նկատի ունենալով շարքերի բեկումներին համապատասխանող երկու էկզոգեն երկարժեք կեղծ փոփոխականները և գոյություն ունեցող երկու կոինտեգրող հավասարումները, ունեն հետևյալ տեսքը՝

$$\Delta LN_GDP_t = \mu_1 + \alpha_1 Z_{t-1}^{(1)} + \beta_1 Z_{t-1}^{(2)} + \gamma_1 \Delta LN_GDP_{t-1} + \delta_1 \Delta LN_CONS_{t-1} + \theta_1 \Delta LN_REMIT_{t-1} + \varphi_1 DUM_{2009} + \rho_1 DUM_{2014} + \varepsilon_1, \quad (2)$$

$$\Delta LN_CONS_t = \mu_2 + \alpha_2 Z_{t-1}^{(1)} + \beta_2 Z_{t-1}^{(2)} + \gamma_2 \Delta LN_GDP_{t-1} + \delta_2 \Delta LN_CONS_{t-1} + \theta_2 \Delta LN_REMIT_{t-1} + \varphi_2 DUM_{2009} + \rho_2 DUM_{2014} + \varepsilon_2, \quad (3)$$

$$\Delta LN_REMIT_t = \mu_3 + \alpha_3 Z_{t-1}^{(1)} + \beta_3 Z_{t-1}^{(2)} + \gamma_3 \Delta LN_GDP_{t-1} + \delta_3 \Delta LN_CONS_{t-1} + \theta_3 \Delta LN_REMIT_{t-1} + \varphi_3 DUM_{2009} + \rho_3 DUM_{2014} + \varepsilon_3, \quad (4)$$

որտեղ՝ Δ -ն տարբերական օպերատոր է, LN_GDP_t -ն ՀՆԱ-ի, LN_REMIT_t -ն՝ դրամական փոխանցումների, իսկ LN_CONS_t -ն՝ սպառման հարթեցված և լոգարիթմված արժեքն է t -րդ եռամսյակում ($t=1, \dots, 55$), DUM_{2009} -ը և DUM_{2014} -ը կեղծ փոփոխականներ են՝

$$DUM_{2009} = \begin{cases} 1, t = 1 \dots 20, \\ 0, t = 21 \dots 55, \end{cases} \quad (5)$$

$$DUM_{2014} = \begin{cases} 1, t = 1 \dots 41, \\ 0, t = 42 \dots 55, \end{cases} \quad (6)$$

իսկ $Z_{t-1}^{(1)}$ -ը և $Z_{t-1}^{(2)}$ -ը կոինտեգրացնող հավասարումներն են, որոնք բնութագրում են սխալի ճշգրտման արագությունները:

Մոդելի գնահատումը տվել է հետևյալ արդյունքները.

$$\widehat{\Delta LN_GDP}_t = -0.013 - 0.52Z_{t-1}^{(1)} - 0.70Z_{t-1}^{(2)} + 0.27\Delta LN_GDP_{t-1} - 0.14\Delta LN_CONS_{t-1} + 0.28\Delta LN_REMIT_{t-1} + 0.12DUM_{2009} - 0.02DUM_{2014}, \quad (7)$$

$$\widehat{\Delta LN_CONS}_t = 0.03 + 0.11Z_{t-1}^{(1)} - 0.28Z_{t-1}^{(2)} + 0.05\Delta LN_GDP_{t-1} - 0.18\Delta LN_CONS_{t-1} + 0.16\Delta LN_REMIT_{t-1} - 0.03DUM_{2009} - 0.003DUM_{2014}, \quad (8)$$

$$\widehat{\Delta LN_REMIT}_t = -0.12 - 0.5Z_{t-1}^{(1)} + 1.1Z_{t-1}^{(2)} + 0.34\Delta LN_GDP_{t-1} - 0.81\Delta LN_CONS_{t-1} + 0.19\Delta LN_REMIT_{t-1} + 0.14DUM_{2009} + 0.12DUM_{2014} : \quad (9)$$

Գնահատված կոինտեգրող հավասարումներն են.

$$\widehat{Z}_{t-1}^{(1)} = LN_GDP_{t-1} - 0.82LN_REMIT_{t-1} - 3.98, \quad (10)$$

$$\widehat{Z}_{t-1}^{(2)} = LN_CONS_{t-1} - 0.82LN_REMIT_{t-1} - 4.26 : \quad (11)$$

Մոդելի բնութագրիչների վերլուծությունը՝ բոլոր համապատասխան թեստերի իրականացման միջոցով, վկայել է, որ մոդելը վիճակագրորեն նշանակալի է, և դրա արդյունքներն արժանահավատ են:

Մոդելի կայունության համար անհրաժեշտ է, որ սխալի ճշգրտման գործակիցը լինի բացասական և վիճակագրորեն նշանակալի: Մեզ հետաքրքրում են ՀՆԱ-ի և սպառման հավասարումները: ՀՆԱ-ի (7) հավասարման մեջ առաջին կոինտեգրող հավասարման գործակիցը բացասական է՝ -0,52 և այն վիճակագրորեն նշանակալի է, ինչը նշանակում է, որ դեպի ՀՀ դրամական փոխանցումները և ՀՆԱ-ն երկարաժամկետ դինամիկ հավասարակշռության մեջ են: Գործակիցի արժեքը փաստում է, որ դրամական փոխանցումների տատանման արդյունքում ՀՆԱ-ն հաջորդ եռամսյակում իր հավասարակշռության վիճակին վերադառնում է 0,52 գործակցով, այսինքն, 52%-ով ճշգրտվում և վերադառնում իր հավասարակշռային արժեքին: Նույն հավասարման երկրորդ կոինտեգրող հավասարման գործակիցը դրական է՝ 0,7, ինչը նշանակում է, որ չկա երկարաժամկետ հավասարակշռություն միասին վերցված սպառման, փոխանցումների ու ՀՆԱ-ի միջև: Այս արդյունքը ստացվում է նաև սպառման հավասարումից (8), որտեղ առաջին կոինտեգրող հավասարման գործակիցը դրական է՝ 0,11: Իսկ երկրորդ կոինտեգրող հավասարման գործակիցը բացասական է (-0,28), բայց վիճակագրորեն ոչ նշանակալի, ինչից հետևում է, որ չկա երկարաժամկետ հավասարակշռություն փոխանցումների և սպառման միջև: Մոդելի մնացած պարամետրերի հետազոտությունը ցույց է տալիս, որ կարճաժամկետ հեռանկարում ՀՆԱ-ն չի ազդում սպառման վրա, սակայն փոխանցումներն ազդում են: Կարճաժամկետ հեռանկարում դրամական փոխանցումների 10% աճը բերում է սպառման 1,6% աճի, իսկ ՀՆԱ-ի՝ 2,8% աճի: Կոինտեգրող հավասարումներից երկուսն է, որ երկարաժամկետ հեռանկարում դրամական փոխանցումների 10% աճը հանգեցնում է ՀՆԱ-ի 8,2% աճի: Մոդելն այսպիսով վկայում է, որ դրամական փոխանցումների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում դրական է եղել:

1. Ամփոփելով կարելի է նշել, որ կա երկարաժամկետ հավասարակշռություն ՀՆԱ-ի և դրամական փոխանցումների միջև: Փոխանցումները ավելացնում են ՀՆԱ-ն՝ թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում: Ըստ որում, դրամական փոխանցումների փոփոխության պայմաններում ՀՆԱ-ն իր հավասարակշռային արժեքին վերադառնում է 50%-ից բարձր արագությամբ: Փոխանցումների ազդեցությունը սպառման վրա միայն կարճաժամկետ հեռանկարում վկայում է, որ դրամական փոխանցումները ՀՆԱ-ի վրա հիմնականում ազդում է սպառման միջոցով:

Գրականություն

1. **Adelman I., and Taylor J.E.** Is Structural Adjustment with a Human Face Possible? The Case of Mexico // Journal of Development Studies. - 1990. - № 26(3). - P. 387-407.
 2. **Rapoport H. and Docquier F.** The Economics of Migrants' Remittances // Discussion Paper. - 2005. - N1531. - P. 8-11.
 3. **Jongwanich J.** Workers' Remittances, Economic Growth and Poverty in Developing Asia and the Pacific Countries: UNESCAP Working Paper. - 2007. - P. 11.
 4. **Spatafora N.** Two Current Issues Facing Developing Countries// In World economic outlook: a survey by the staff of the International Monetary Fund. Chapter Two. - 2005. - P. 94-97.
 5. **Chami R., Fullenkamp C. and Jahjah S.** Are Immigrant Remittance Flows a Source of Capital for Development?// IMF Staff Papers. - 2005.- Vol. 52, N. 1. - P. 1-12.
 6. **Russell S.S.** International Migration: Implications for the World Bank// Human Resources Development and Operations Working Paper. - 1995. - P. 17-18.
 7. **Atoyan R. and Oomes N.** Remittances to Armenia: Size, Sources, and Macroeconomic Implications/ Republic of Armenia: Selected Issues. IMF Country Report 06/434. - 2006. - P. 10.
 8. **Grigorian, D., Melkonyan, T.** Destined to Receive: The Impact of Remittances on Household Decisions in Armenia// Review of Development Economics. - Wiley Blackwell. - February 2011. - Vol. 15(1). - P. 139-153.
 9. **Karapetyan, I., Harutyunyan L.** The Development and the Side Effects of Remittances in CIS Countries: the Case of Armenia: CARIM-East Research Report 2013/24/ Robert Schuman Centre for Advanced Studies. - 2013.
 10. **Айвазян С.А., Березняцкий А.Н., Бродский Б.Е.** “Голландская болезнь” в экономиках России и Армении // Прикладная эконометрика. - 2014. - № 36 (4). - С. 32-60.
- 14.06.2018.

Н.М. Джрбашян, Л.А. Зилфимян ВЛИЯНИЕ ДЕНЕЖНЫХ ПЕРЕВОДОВ НА ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Анализируется влияние денежных переводов на валовой внутренний продукт (ВВП) Армении. Тестируется гипотеза о краткосрочном позитивном и долгосрочном негативном влиянии денежных переводов на ВВП и потребление. Оценена векторная модель коррекции ошибок (VECM), согласно которой денежные переводы способствуют росту ВВП как в краткосрочной, так и в долгосрочной перспективе, и между ними существует долгосрочный динамический баланс. Денежные переводы влияют на потребление только в краткосрочном периоде.

Ключевые слова: денежные переводы, валовой внутренний продукт, долгосрочный динамический баланс, векторная модель коррекции ошибок, коэффициент коррекции ошибок.

N.M. Jrbashyan, L.H. Zilfimian THE IMPACT OF REMITTANCES ON ECONOMIC GROWTH OF THE REPUBLIC OF ARMENIA

The impact of remittances on gross domestic product (GDP) in Armenia is analyzed. A hypothesis about a long-term negative and a short-term positive impact of remittances on GDP and consumption is tested. According to the estimated vector error correction model, based on the multivariate time series data, remittances promote the growth of GDP both in the short-term and long-term horizons, and there is a long-term dynamic balance between them. Remittances influence consumption only in the short-term horizon.

Keywords: remittances, gross domestic product, long-term dynamic equilibrium, vector error correction model, error correction factor.

Ջրբաշյան Նաիրուհի Մխիթարի – տ.գ.թ., դոցենտ (ԵՊՀ)

Զիլֆիմյան Լուսինե Հակոբի – տնտեսագիտության մագիստրոս (ԵՊՀ)

A.H. Hakobjanyan, S.H. Nakashian

THE ENTREPRENEURIAL ORIENTATION AND EMPLOYABILITY RELATIONS TO INDIVIDUAL AND ORGANIZATION SUCCESS MEASUREMENT

The empirical study of entrepreneurial characteristics and employability relations to organizational and individual success is presented. Features of entrepreneurial characteristics and employability are presented and the system of hypothesis and questions allowing the study of hypothesis acceptance are proposed.

Keywords: *entrepreneurial, orientation, measurement, individual and organizational success assessment.*

Introduction. The study of entrepreneurial orientation problems has been implemented in [1] utilized data from 1,067 firms in six countries. As the result mentioned authors clarified the psychometric properties of the entrepreneurial orientation (EO) measure. Questions highlighted in presented researchers were devoted to the study of three sub-dimensions: innovation, proactiveness, and risk-taking. They showed that correlation analysis revealed that the three sub-dimensions of EO are able to vary independently of one another in many situations.

Further progress of results according to [1] the most widely utilized operationalization of EO in both the entrepreneurship and strategic management literature was implemented by [2].

The results of the empirical study conducted by [1] suggests that the [2] EO scale can be effectively employed when conducting research on the topic of entrepreneurial orientation.

Similarly, there exists a set of dimensions of the strategic decision-making process which is underlying in almost all entrepreneurial processes. This involves the intentions of an individual or team in a dynamic process.

Present paper is devoted to the study of the approach providing empirical measurement of entrepreneurial orientation and employability and analyses both dependent and independent variables.

1. Variables providing empirical measurement for the individual and organizational success assessment

1.1. Career Success. *Career success* is the concept mostly associated with the notion of career [3-5]. "It reflects the accumulated interaction between a variety of individual, organisational and societal norms, behaviours, and work practices" [6], p. 54. Career success refers to real or objective, and perceived or subjective accomplishments of individuals in their work lives e.g. [7,8].

From an *objective* perspective, career success is evaluated with the use of external reference points or norms ([4,8,9]) and is operationalized by means of quantifiable employment history criteria that includes promotion rate.

On the other hand, from a *subjective* perspective, career success is evaluated by individuals themselves, utilizing their own personal criteria of success [4, 9]. Hence, subjective career success is typically operationalised by means of attitude scales [4,10].

Empirical evidence has suggested that subjective perceptions of one's own career do not always correspond to external objective criteria (e.g. Korman, Wittig-Berman & Lang, 1981) [11].

1.2. Measurement of variables. *Objective career success* developed by [12] will be measured with three single items. Both objective hierarchical success, measured as number of promotions, and objective financial success, measured, as current gross income (including the employee's basic salary, but excluding any bonuses) in Jordanian Dinars will be assessed. Next, we will assess how much the employee has earned beyond his/her basic salary (e.g. bonuses, share options, etc.) last year.

As far as hierarchical success is concerned, success within the organization the respondent is currently employed, and success in the employee's entire career history will be assessed.

General subjective career success will be measured with 7 items from [13]. The items require responses on a 5-point format: (1) does not apply at all, to (5) applies a great deal. The scale is based upon the

subjective career success scales from Gattiker and Larwood (1986, 1988) [4,14]. Most recently [13] has been reported an internal consistency reliability of .72 for the scale. The items are given below:

1. *I am in a job that offers me the chance to learn new skills.*
2. *I am in a position to do mostly the work that I really like.*
3. *I am respected by my peers.*
4. *I am receiving fair compensation compared to my peers.*
5. *I am drawing a high income compared to my peers.*
6. *I am pleased with the promotions I have received so far.*
7. *I am going to reach all of my career goals.*

1.3. Organizational Success. A problem frequently discussed by researches in entrepreneurship is the measurement of success. [15] proposes the use of profitability, cost, productivity and market share as indicators for competitiveness. [16] measures the competitiveness quantitatively by the ability to raise capital and cash flow in terms of liquidity. Other authors [17], agree that growth variables are the best indicators to measure venture performance.

When studying SMEs in developing countries a distinction has been shown by [18], the size of SMEs in advanced countries has been interlinked with the size of the international niche market where they compete. In contrast the size of the SMEs in developing countries is mostly determined by the domestic markets where they operate. In addition to limited access to capital R&D and many other requirements.

Measurements: *Employment Growth* will be measured using 2 single items developed by [18]; the first, average percentage performance growth over years; and the second, average absolute employment growth since the business was founded.

Measurements: *Profit Growth* will be measured using 3 items developed by Utsch & Rauch (2000) [19] scored on a 5-point scale (1) strong decrease to (5) strong increase.

1. Was your profit higher than last year?
2. What profit do you expect in comparison to the last year?
3. Is your personal income better than last year?

2. Research Model

The independent and dependent variables and mediators were incorporated to provide the proposed research model as shown in Fig. This research model will make the study possible and will be used to formulate the hypothesis for the identified research questions.




Fig. The Research Model

3. Hypotheses

The area of the research of entrepreneurial orientation and employability relations to the individual and organizational satisfaction considers an approach based on the hypotheses to put forward the raised problem. Preliminary proposition gives schemes which should be implemented for the statement of the information about company entrepreneurial orientation and employability state of the art. Existing approaches for the study of company entrepreneurial orientation and employability relations based on the hypotheses proposition and its acceptance provides to get suggestions which are in the agreement with experimental study. Based upon the preceding discussions in the literature review this section itemizes the hypotheses the research seeks to answer.

H₁ Individual predictors are positively related to individual level success.

H₂ Individual predictors are positively related to venture level success.

H₃ Job related predictors are positively related to individual level success.

H₄ Job related predictors are positively related to venture level success.

H₅ Organizational predictors are positively related to individual level success.

H₆ Organizational predictors are positively related to venture level success.

H₇ Entrepreneurial employability is positively related to individual level success.

H₈ Entrepreneurial employability is positively related to venture level success.

H₉ Entrepreneurial orientation is positively related to individual level success.
H₁₀ Entrepreneurial orientation is positively related to venture level success.
H₁₁ Individual predictors mediated by employability are positively related to individual level success.
H₁₂ Individual predictors mediated by employability are positively related to venture level success.
H₁₃ Job related predictors mediated by employability are positively related to individual level success.
H₁₄ Job related predictors mediated by employability are positively related to venture level success.
H₁₅ Organizational predictors mediated by employability are positively related to individual level success.
H₁₆ Organizational predictors mediated by employability are positively related to venture level success.
H₁₇ Individual predictors mediated by entrepreneurial orientation are positively related to individual level success.
H₁₈ Individual predictors mediated by entrepreneurial orientation are positively related to venture level success.
H₁₉ Job related predictors mediated by entrepreneurial orientation are positively related to individual level success.
H₂₀ Job related predictors mediated by entrepreneurial orientation are positively related to venture level success.
H₂₁ Organizational predictors mediated by entrepreneurial orientation are positively related to individual level success.
H₂₂ Organizational predictors mediated by entrepreneurial orientation are positively related to venture level success.

Questionnaire for the study of hypotheses

Following to the research problem of the study and hypotheses proposed based on the literature devoted to recent studies the Questioner is formulated. Taking into account the diversity of problems are to be studied for the entrepreneurial orientation and employability questions concerning to organization, employees, market, innovation, career development, financial growth are formulated and involved in the list of questions.

Questionnaire

IP01: Gender.
IP02: What is your year of birth?
IP03: What is your highest educational qualification?
IP04: What is your marital status?
IP05_1: Do you have to take care of children under 18?
IP05_1n: Number of children under 18.
IP05_2: Do you have to take care of Parents/Relatives?
IP05_2n: Number of Parents/Relatives.
IP05_3: Do you have to take care of other dependents?
IP05_3n: Number of other dependent.
IP06: For how many years have you been "self-employed" or "employed" as CEO or Director General?
IP07_1: How many days past year have you spent on training and development courses in your current expertise / job area?
IP07_2: How many days past year have you spent on training and development courses in an adjacent expertise / job area?
IP07_3: How many days past year have you spent on training and development courses in a complete different or new expertise / job area?
IP07_4: How many days past year have you spent on training and development courses aimed at your further personal development, i.e. less job-related subjects?
IP08: The major satisfaction in my life comes from meeting my professional/career objectives.
IP09: The most important things that happen to me involve my career.
IP10: I am entirely involved in developing my career.
IP11: I am prepared to engage in any type of personal sacrifice in order to advance my career.
IP12: When I am working, I think about nothing else at all.
IP13: I would still do this work, even if I received less pay.

IP14: When I am working on something at my job, I do that out of myself and not because I have to.

IP15: Hard work is something I like to avoid.

IP16: I like to work hard.

IP17: There is satisfaction in a job well done.

IP18: I prefer to work in situations that require a high level of skill.

IP19: I would rather learn easy fun games than difficult thought games.

VL02: Please indicate the average absolute employment growth.

VL03: Was your profit higher than last year?

VL04: What profit do you expect in comparison to the last year?

VL05: Is your personal income better than last year?

C01: How easy would it be for you to find a suitable job with another employer?

The Ordinary least square (OLS) regression method was used for the modelling of the dependence between predictors. The equations for OLS regression models are as follows:

The data collected for current study were treated and analysed using statistical methods. The separation of variables as independent and dependent has been implemented and the factor analysis is used to classify and structure correspondingly organized the study. Grouping independent variables the system of equation representing the dependence of dependent variables from independent are proposed based on the method of Ordinary least square (OLS) regression method to analyse the behavior of entrepreneurial and employability processes. The linear regression equations are as follows. The results of the questions implementation and further treatment using regression technique are smoothed based on the logarithmic smooting method.

$$LN(Individualsuccess) = a_0 + a_1 LN(X_1)(Individualpredictor) + \varepsilon(errorterm), \quad (1)$$

$$LN(Iorganizationalpredictor) = a_0 + a_1 LN(X_1)(Individualpredictor) + \varepsilon(errorterm), \quad (2)$$

$$LN(IEmployability) = a_0 + a_1 LN(X_1)(Individualpredictor) + \varepsilon(errorterm). \quad (3)$$

Linear regression models.

Based on the statistical data treatment linear regression models were developed as follows:

1. Regression model Promotions experienced since joining the current organization.

Table 1 below summarizes linear regression model.

Table 1

Regression model Promotions experienced since joining the current organization

Individual predictor	IL01:Please indicate how many promotions you have experienced since joining the current organization	Standard error	t-stat
1	2	3	4
IP09	0.165490656	0.033712279	4.908913346
IP10	0.127476214	0.241959886	0.526848544
IP11	0.01072574	0.192729577	0.055651762
IP12	-0.054666123	0.115400597	-0.473707455
IP13	0.031199023	0.086247192	0.361739579
IP14	0.084684777	0.02570931	3.293934216
IP15	-0.263351841	0.029817531	-8.832114374
IP16	-0.264108948	0.364604758	-0.724370545

Continuos of Table 1

IP17	-0.28556689	0.067957215	-4.202157051
1	2	3	4
IP18	-0.409736489	0.044562031	-9.194744528
IP19	0.166021471	0.027845353	5.962268535
IP20	0.050664235	0.161901748	0.312931983
IP21	0.426911622	0.049684677	8.592420237
IP22	-0.081444386	0.181542285	-0.448624883
IP23	0.021076159	0.148872377	0.141571991
IP24	0.44286459	0.061558612	7.194193934
IP25	0.09347663	0.214252703	0.436291486
IP26	-0.131796711	0.208047509	-0.633493337
IP27	0.25892358	0.040336036	6.41916279
a0	0.208143636	0.109486598	1.9010878
R2	0.850822268		
F	7.123068885		

Number of observations is 130. Reported numbers are coefficients and standard errors.

The degree of the freedom is $130-19+1=112$. Table 1 indicates the significance of regression coefficients as follows. The regression coefficients $a1=0.165490656$, $a6=0.084684777$, $a11=0.166021471$, $a13=0.426911622$, $a16=0.44286459$, $a19=0.25892358$ are positive and significant with $p1=p6=p11=p13=p16=p19=0.005$ correspondingly.

These predictors have positive effects to the Individual success predictor.

IL01: Please indicate how many promotions you have experienced since joining the current organization. The results are supporting the predictors:

IP09: The most important things that happen to me involve my career,

IP14: When I am working on something at my job, I do that out of myself and not because I have to, IP19: I would rather learn easy fun games than difficult thought games,

IP21: I am usually able to protect my personal interests,

IP24: I judge my abilities to be high,

IP27: If I had to change my job, I am sure I would be up to the demands,

Consequently hypothesis are supporting as follows:

Hypothesis 1 (H_1). Individual predictors are positively related to individual level success.

Hypothesis 2 (H_2). Individual predictors are positively related to venture level success.

Hypothesis 3 (H_3). Job related predictors are positively related to individual level success.

Hypothesis 4 (H_4). Job related predictors are positively related to venture level success.

Hypothesis 5 (H_5). Organizational predictors are positively related to individual level success.

Hypothesis 5 (H_5). Organizational predictors are positively related to individual level success.

Hypothesis 5 (H_5). Organizational predictors are positively related to individual level success.

Coefficients:

$a7=-0.263351841$, $a9=-0.28556689$, $a10=-0.409736489$ are negative and have negative effects to Individual success predictor.

IL01: Please indicate how many promotions you have experienced since joining the current organization.

These results are suggesting that manager has to focus the management behaviour such that to improve the state of Individual predictors.

IP15: Hard work is something I like to avoid.

IP17: There is satisfaction in a job well done.

IP18: I prefer to work in situations that require a high level of skill.

The criteria for the improvement is to provide positive signs in the regression model for variables: IP15,IP17,IP18.

2. Regression model Number of promotions employee has experienced in entire career (including your career in this organization).Table 2 below summarizes linear regression model.

Table 2

Regression model Number of promotions employee has experienced in entire career (including your career in this organization.)

Individual predictor	IL02: Please indicate how many promotions you have experienced in your entire career (including your career in this organization.)	Std error	t-statistics
IP09	0.212258692	0.047034352	4.512843971
IP10	0.392541641	0.067515023	5.814137721
IP11	0.155818465	0.053778095	2.897433697
IP12	0.251358012	0.032200684	7.805983523
IP13	-0.089414422	0.019252716	-4.644249843
IP14	-0.046293694	0.143475408	-0.322659435
IP15	0.016644581	0.166402067	0.100026288
IP16	-0.586536936	0.081389685	-7.206526672
IP17	0.439188543	0.075849481	5.790264326
IP18	0.109658979	0.248686391	0.440952874
IP19	0.218202948	0.031079195	7.020868671
IP20	0.500339358	0.180704338	2.768828703
IP21	-0.150258621	0.277274233	-0.541913396
IP22	-0.092654294	0.202625845	-0.457267898
IP23	-0.097032497	0.16616179	-0.583963959
IP24	0.074765005	0.343538852	0.217631878
IP25	-0.049211125	0.239135112	-0.205787952
IP26	-0.206165659	0.046441855	-4.439221052
IP27	-0.109378276	0.045020494	-2.429521923
a0	-0.567966037	0.213853347	-2.655866959
R2	0.746585815		
F	8.532409316		

Number of observations is 130. Reported numbers are coefficients and standard errors.

The degree of the freedom is $130-19+1=112$.

Table 1 indicates the significance of regression coefficients as follows. The regression coefficients are as follows:

IP09: $a_1=0.212258692$, IP10: $a_2=0.392541641$, IP11: $a_3=0.155818465$, IP12: $a_4=0.25135801$, IP17: $a_9=0.439188543$, IP19: $a_{11}=0.218202948$, IP20: $a_{12}=0.500339358$ are positive and significant with $p_1=p_6=p_{11}=p_{13}=p_{16}=p_{19}=0.005$ correspondingly. These predictors have positive effects to the Individual success predictor.

IL02: Please indicate how many promotions you have experienced in your entire career (including your career in this organization).

The results are supporting the predictors.

IP09: The most important things that happen to me involve my career.

IP10: I am entirely involved in developing my career.

IP11: I am prepared to engage in any type of personal sacrifice in order to advance my career.

IP12: When I am working, I think about nothing else at all.

IP17: There is satisfaction in a job well done.

IP19: I would rather learn easy fun games than difficult thought games.

IP20: It is not always wise for me to plan too far ahead because many things turn out to be a matter of good or bad fortune.

Consequently hypothesis are supporting as follows:

Hypothesis 1 (H1). Individual predictors are positively related to individual level success.

Hypothesis 2 (H2). Individual predictors are positively related to venture level success.

Hypothesis 3 (H3). Job related predictors are positively related to individual level success.

Hypothesis 4 (H4). Job related predictors are positively related to venture level success.

Hypothesis 5 (H5). Organizational predictors are positively related to individual level success.

Hypothesis 5 (H5).Organizational predictors are positively related to individual level success.

Hypothesis 5 (H5.)Organizational predictors are positively related to individual level success.

Coefficients: $a_7 = -0.263351841$, $a_9 = -0.28556689$, $a_{10} = -0.409736489$ are negative and have negative effects to Individual success predictor:

IL01: Please indicate how many promotions you have experienced since joining the current organization.

These results are suggesting that manager has to focus the management behaviour such that to improve the state of Individual predictors.

IP15: Hard work is something I like to avoid.

IP17: There is satisfaction in a job well done.

IP18: I prefer to work in situations that require a high level of skill.

The criteria for the improvement is to provide positive signs in the regression model for variables: IP15, IP17, IP18.

3. Regression model I am in a job that offers me the chance to learn new skills. Table 3 below summarizes linear regression model.

Table 3 IL05

I am in a job that offers me the chance to learn new skills

Individual predictor	IL05:I am in a job that offers me the chance to learn new skills	Std error	t-statistics
1	2	3	4
IP27	0.370887454	0.086172	4.30405042
IP26	0.099910803	0.374651	0.26667687
IP25	0.222086786	0.045772	4.85204512
IP24	0.422052463	0.065755	6.41853687
IP23	0.153636921	0.031804	4.83069807
IP22	0.143464965	0.038784	3.69910348

1	2	3	4
IP21	-0.344444965	0.053072	-6.4901658
IP20	-0.327026892	0.034588	-9.4549742
IP19	0.020721611	0.116112	0.17846192
IP18	-0.363609332	0.0476	-7.6388584
IP17	-0.204110867	-0.46864	0.43554036
IP16	0.12556341	0.268669	0.46735314
IP15	0.075940333	0.397382	0.19110168
IP14	0.006020446	0.036538	0.16477194
IP13	0.178104587	0.018425	9.66626203
IP12	0.10278423	0.024654	4.16914359
IP11	0.274730807	0.041174	6.67248207
IP10	0.404343481	0.051691	7.82231853
IP09	0.065718403	0.304163	0.21606327
a0	-0.865681109	0.163731	-5.2872197
R2	0.635579171		
F	10.89386538		

Number of observations is 130. Reported numbers are coefficients and standard errors.

The degree of the freedom is $130-19+1=112$.

Table 3 indicates the significance of regression coefficients as follows. The regression coefficients are as follows:

IP10:a2=0.404343481, IP11:a3=0.274730807, IP12:a4=0.10278423, IP13:a5=0.178104587, IP22:a14=0.143464965, IP23:a15=0.153636921, IP24:a16=0.422052463, IP25:a17=0.222086786, IP27:a19=0.370887454, IP27:a19=0.370887454 are positive and significant with $p2=p3=p4=p5=p14=p15=p16=p17=p19$ 0.005 correspondingly.

These predictors have positive effects to the Individual success predictor.

IL05: I am in a job that offers me the chance to learn new skills.

The results are supporting the predictors.

IP10: I am entirely involved in developing my career.

IP11: I am prepared to engage in any type of personal sacrifice in order to advance my career.

IP12: When I am working, I think about nothing else at all.

IP13: I would still do this work, even if I received less pay.

IP22: My life is determined by my own actions.

IP23: I feel like what happens in my life is mostly determined by powerful people.

IP24: I judge my abilities to be high.

IP25: When I want to reach a goal, I am usually able to succeed.

IP27: If I had to change my job, I am sure I would be up to the demands.

Consequently hypothesis are supporting as follows:

Hypothesis 1 (H1). Individual predictors are positively related to individual level success,

Hypothesis 2 (H2). Individual predictors are positively related to venture level success.

Hypothesis 3 (H3). Job related predictors are positively related to individual level success.

Hypothesis 4 (H4). Job related predictors are positively related to venture level success.

Hypothesis 5 (H5). Organizational predictors are positively related to individual level success.

Hypothesis 5 (H5.). Organizational predictors are positively related to individual level success.

Hypothesis 5 (H5). Organizational predictors are positively related to individual level success.
Coefficients: $a_7 = -0.263351841$, $a_9 = -0.28556689$, $a_{10} = -0.409736489$ are negative and have negative effects to Individual success predictor.

IL01: Please indicate how many promotions you have experienced since joining the current organization.

These results are suggesting that manager has to focus the management behaviour such that to improve the state of Individual predictors.

IP15: Hard work is something I like to avoid.

IP17: There is satisfaction in a job well done.

IP18: I prefer to work in situations that require a high level of skill.

The criteria for the improvement is to provide positive signs in the regression model for variables: IP15, IP17, IP18.

Conclusion. This paper began with the statement of hypothesis as preliminary suggestions of problems which are to be examined and predictors providing the support for formulated hypothesis. Using regression analysis method the system of multidimensional linear regression models is developed.

We deduced from the properties of regression coefficients as follows. Among regression coefficients we pointed out sequence of significant coefficients which have positive effect on dependent variable and another sequence of coefficients which have negative impact on dependent variable. Therefore, the subject matter of positive significant coefficients is that corresponding individual predictors are supporting hypothesis. There are differences concerning to negative regression coefficients. The fact of the existence of such coefficients suggests that managers and/or stockholders should direct the way of the management processes to improve the effect of individual predictors to provide positive effect of dependent variable. The same suggestion is true for individual predictors which have non significant coefficients.

References

1. **Van der Heijde, C.M., and Van der Heijden B.I.J.M.** The Development and Psychometric Evaluation of a Multi-dimensional Measurement Instrument of Employability // Proceedings of the 3rd International Conference organized by the Dutch HRM Network 'Innovating HRM?', November 7th and 8th, Enschede, the Netherlands: University of Twente, 2003.- P. 105.
2. **Bartram, D., Foster J., and Lindley P.A.** Learning Climate Questionnaire (LCQ): Background and Technical Information Employment Service and Newland Park Associates Limited, 1993.
3. **Wexlberger, L.P.** Lernen im Arbeitsprozeß [Learning in the labour process / C. Heidack (Ed.), Lernen der Zukunft. Kooperative Selbstqualifikation – die effektivste Form der Aus- und Weiterbildung im Betrieb. -München: Lexika, 1993. 28.08.2018.

Ս.Հ. Նակաշյան

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐԻ ԷՄՊԻՐԻԿ ՍՏՈՒԳՄԱՆ ՄՈԴԵԼ

Ուսումնասիրությունը նվիրված է ձեռնարկատիրության բաղադրիչների և գործունակության կազմակերպչական և անհատական հաջողության հետ հարաբերակցության էմպիրիկ հետազոտությանը: Ներկայացված է տվյալների հավաքագրման և հարցաթերթի վերլուծության գործընթացը: Հարցաթերթը կազմվել է առաջ քաշված վարկածներին համապատասխան: Ուսումնասիրվել են ռեգրեսիոն մոդելներ, որոնք ցույց են տալիս անհատական կանխատեսիչների և անհատական հաջողության փոփոխականների և կազմակերպչական կանխատեսիչների միջև կախվածությունը, ընդ որում, ուսումնասիրվել է յուրաքանչյուր անկախ փոփոխականի նշանակությունը:

Առանցքային բառեր. ձեռնարկատիրություն, գործունակության, վարկած, էմպիրիկ, Արևմտյան բանկ, պաղեստինյան տարածք, հարցաթերթ:

С.Г. Накашян

МОДЕЛЬ ЭМПИРИЧЕСКОГО ТЕСТИРОВАНИЯ ГИПОТЕЗ, ХАРАКТЕРИЗУЮЩИХ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКИЕ ПРОЦЕССЫ ОРГАНИЗАЦИИ

Проведено эмпирическое изучение соотношения предпринимательской направленности и занятости организации с индивидуальными и организационными успехами. Представлены подходы сбора данных и проведения анализа результатов вопросника. Особенностью вопросника является его соответствие гипотезам, утвержденным до проведения опросов. Предложены регрессионные модели, представляющие связь между индивидуальными предикторами и переменными индивидуального успеха и организационными предикторами. Оценена значимость каждой независимой переменной.

Ключевые слова: предпринимательство, ориентация, занятость, эмпирический, Западный Банк, палестинские территории, вопросник,

Nakashian Saro – Department of Management and Employability, PhD Student of the Yerevan State University

Ն.Գ. Գևորգյան

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարվել է առևտրային բանկի հաճախորդների սպասարկման որակի հետազոտություն: Անցկացվել է հարցում հաճախորդների շրջանակում: Արդյունքները ամփոփվել են և ներկայացվել մի շարք առաջարկություններ բանկի հաճախորդների գոհունակության ավելացման համար, որն ապահովելու արդյունքում էլ կավելանա բանկի շահութաբերությունը:

Առանցքային բառեր. *առևտրային բանկի հաճախորդների սպասարկում, հաճախորդների շրջանակում հարցում, հաճախորդների գոհունակության ցուցանիշներ:*


Ներկայում առևտրային բանկի գործունեության որակը պայմանավորված է ոչ միայն նրա ցածր գնային առաջակով, այլ նաև հաճախորդների արագ և որակյալ սպասարկումով: Ծառայությունների բարձր որակը մեծ ազդեցություն ունի մրցունակության վրա ինչը և ապահովում է բանկի ֆինանսական բարձր ցուցանիշներ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հաճախորդների սպասարկման որակի բարձրացման համար կատարված ծախսերը լիովին արդարացնում են իրենց, քանի որ վերադարձնում են դա շահութաբերության աճի ցուցանիշներով [1]:

Բանկային սպառողների հավատարմության մակարդակը, ծառայությունների որակի բարձրացման աստիճանը բացահայտելու համար կատարվում է հետազոտություն՝ բանկի հաճախորդների շրջանակում հարցում անցկացնելու միջոցով: Որպես հետազոտությունների բազա օգտագործվում է առաջնային ինֆորմացիան, որը հավաքագրվում է բանկի հաճախորդների հարցման միջոցով, այնուհետև հետազոտվում են այդ արդյունքները և ըստ առաջադրված խնդիրների, առաջարկում լուծումներ սպասարկման որակը բարձրացնելու համար [2]:


Էվոկաբանկի հաճախորդների սպասարկման որակի գնահատականները

2018 թ. հունվար, փետրվար ամիսներին առաջադրված հարցաթերթիկի հիման վրա կատարվել է հարցում <<Էվոկաբանկի>> տարբեր մասնաճյուղերում: Հարցաթերթիկը լրացվել է բանկում այդ պահին սպասարկվող հաճախորդի կողմից: Հարցումը եղել է անանուն: Հարցաթերթիկը լրացվել է ոչ միայն Երևան քաղաքի մասնաճյուղերում, այլ նաև <<Էվոկաբանկի>> մարզային մասնաճյուղերում: Հարցմանը մասնակցել է շուրջ 400 մարդ: Ստորև ամփոփված են հարցման արդյունքները, ինչպես նաև առաջադրված են լուծումներ սպասարկման որակի բարձրացման համար [3]:

Առաջին հարցով պարզվել են հաճախորդների տարիքային տատանումները: Այսպիսով պարզվել է, որ շատ մեծ տոկոս կազմում են 25... 40 տարեկանները, ինչը նշանակում է որ բանկը իր թիրախային հաճախորդների խումբ կարող է համարել հենց այս տարիքի մարդկանց (նկ. 1):



Նկ. 1. Էվոկաբանկի հաճախորդների տարիքային խմբերը



Նկ. 2. Էվոկաբանկի հաճախորդների տարանջատումը ըստ սեռի

Երկրորդ հարցում պահանջվում էր պարզել հաճախորդի սեռը: Այստեղ սեռերի քանակը գրեթե հավասար է, այսինքն՝ չկա նախընտրելի խումբ (նկ. 2):

Հաջորդ հարցում պահանջվում էր նշել կրթությունը: Այստեղ հարկ է նշել, որ բանկի հիմնական հաճախորդները բարձրագույն կրթությամբ անձինք են: Միջնակարգ կրթությամբ անձանց զգալի տոկոսը այն հարցին, թե սպասարկման որ ոլորտից են օգտվում, նշել են. տարադրամի փոխանակում կամ միջազգային փոխանցում, այսինքն՝ նրանք բանկի հիմնական հաճախորդ չեն (նկ. 3):

Այնուհետև պահանջվում էր նշել աշխատանքի բնույթը, որը ներկայացված է նկ. 4-ում:


Այստեղ հարկ է նշել, որ հարցմանը չեն մասնակցել բանկի VIP հաճախորդները, այլ պարագայում ավելի բարձր կլիներ գործատու բաժնի ցուցանիշը: Գործազուրկ քաղաքացիները 6-րդ հարցի պատասխանում ընտրում էին «այլ պատասխան»՝ դրամական փոխանցումները արտերկրից բաժինը:

Բանկից օգտվելու տևողությունը


Բանկի բավականին շատ նոր հաճախորդների առկայությունը պայմանավորված է վերջերս իրականացրած ռեբրենդինգով, ինչի հետևանքով շուրջ 20 տարի գործող և արդեն շատ հավատարիմ հաճախորդներ ունեցող <<Պրոմեթեյ բանկը>> վերանվանվեց <<Էվոկաբանկ>>: Միջոցներ տրամադրվեցին լայնածավալ գովազդին ինչի հետևանքով շատ նոր հաճախորդներ ներգրավվեցին: Սակայն քիչ չեն և հավատարիմ հաճախորդները: Հարցված 400 հոգուց շուրջ 90-ը բանկի 4 և ավել տարվա հաճախորդ են, ինչը վկայում է, որ բանկը ոչ միայն ներգրավում է նոր հաճախորդներ, այլ նաև պահպանում է իր ձեռքբերումները (նկ. 5):

Հաջորդ հարցին պատասխանած քաղաքացիների 26%-ը նշել էր մի քանի գործոն: Հիմնական մասը և՛ վարկառու էր, և՛ ուներ հաշվեհամար, իսկ շուրջ 2%-ը միաժամանակ և՛ ավանդատու էր, և՛ վարկառու: Հարկ է նշել, որ հարցվածների <<ավանդատուներ>> բաժինը քիչ է լրացված գուտ տեխնիկական պատճառներով, քանի որ բանկի ավանդատուները մասնաձյուղեր այցելում են երբեմնակի (նկ. 6):


<<Այլ>> պատասխան տված քաղաքացիների 92% -ը՝ որպես հավելում, ավելացրել էր միջազգային փոխանցումները, հավելելով որ բանկում շատ որակյալ և արագ են կատարվում միջազգային փոխանցումները: Մնացած այլ պատասխան տվածները նշել էին տարադրամի փոխանակումը: Ավելացնենք նաև, որ գրեթե բոլոր այն անձինք, ովքեր հանդիսանում էին բանկի երկարաժամկետ հաճախորդ, և՛ վարկառու էին, և՛ միաժամանակ ունեին հաշվեհամար:



Նկ. 3. Էվոկաբանկի հաճախորդների տարանջատումը ըստ կրթության





Նկ. 4. Էվոկաբանկի հաճախորդների տարանջատումը ըստ աշխատանքի տեսակի




Նկ. 5. Էվոկաբանկի հաճախորդների տարանջատումը ըստ բանկի ծառայություններից օգտվելու տևողության

Այն հարցին, թե ինպես եք ընտրել տվյալ բանկը, հաճախորդների պատասխանները ներկայացված են գծապատկերում (նկ. 7): Այստեղ հարկ է նշել, որ որպես <<այլ պատճառ>> քաղաքացիները նշել էին բանկի՝ իրենց տանը կամ աշխատատեղին մոտիկ գտնվելը: Այսպիսով, մասնաձյուղերի ավելացման պարագայում կավելանա նաև հաճախորդների քանակը: Գովազդի ազդեցությամբ ընտրությունը չենք համարում կայուն ընտրություն, քանի որ դա դեռ 1 տարին չբոլորած ընտրություն է, սակայն ընկերների խորհրդով բաժինը կարելի է համարել բանկի գործունեության բարձր գնահատական: Գործատուի ընտրությամբ քաղաքացիներն ունեն միայն հաշվեհամար, այսինքն՝ զուտ ստանում են աշխատավարձ <<Էվոկաբանկի>> քարտով: Սակայն այդ գործատուները բանկի VIP հաճախորդներ են:


Հաջորդ երկու հարցով գնահատվում են ծառայությունների մատուցման որակը և արագությունը: Այս երկու հարցի արդյունքները գնահատվում են բավականին դրական, հարցումների արդյունքներից հետո բանկում տեղադրվել են հերթագրվելու ապարատներ, ինչը դարձրել է սպասարկումը ավելի արագ և արդյունավետ (նկ. 8):



Նկ. 6. Էվոկաբանկի հաճախորդների տարանջատումը ըստ բանկի ծառայություններից օգտվելու տեսակի



Նկ. 7. Էվոկաբանկի հաճախորդների տարանջատումը ըստ բանկի բանկի ընտրության տեսակի



Նկ. 8. Էվոկաբանկի հաճախորդների տարանջատումը ըստ գոհունակության

Առաջարկություններ և բողոքներ բաժնում հաճախորդների նշած խնդիրները քննարկվել են և ներկայացվել բանկի ղեկավարությանը: Մասնավորապես կային առաջարկություններ՝ սպասասրահի կահավորանքի հետ կապված, ինչն արդեն լուծվել է: Առաջարկվում էր տարադրամի փոխանակումը առանձնացնել այլ պատուհան հերթերից խուսափելու համար: Բանկում տեղադրվել է հերթի

ապարատ, ինչը արդեն կարգավորել է այդ խնդիրը: Կա մի քանի ծրագրային առաջարկություն, որոնք բանկի ներքին բիզնես գործընթացների կարևոր մասն են կազմում հետագա զարգացման համար: Կան նաև առաջարկներ նոր մասնաճյուղեր հիմնելու հարցում:

Եզրակացություն: <<Էվոկաբանկը>>, հանդիսանալով շուրջ 20 տարի կայուն գործող Պրոմթեյ բանկի իրավահաջորդ, կարողացել է ոչ միայն նոր հաճախորդներ ներգրավել գովազդի շնորհիվ, այլ նաև պահպանել հներին բարձր որակի սպասարկման և ծրագրային նորարարությունների հետևանքով: Հետազոտությունների արդյունքում մի քանի առաջարկ կա բանկի հետագա զարգացման համար [4]:

1. Հարկավոր է ավելացնել մասնաճյուղերի քանակը՝ որպեսզի Երևան քաղաքի բոլոր համայնքներում լինի գոնե մեկական մասնաճյուղ, ինչպես նաև մարզերի խոշոր քաղաքներում լինեն մասնաճյուղեր:

2. Հերթերից խուսափելու համար ոլոր մասնաճյուղերում տեղադրել հերթերի սպասարկման ապարատներ:

3. Պարբերաբար թարմացնել գովազդը, քանի որ մեծ թվով հաճախորդներ ներգրավվել են գովազդի շնորհիվ:

4. Ներգրավել նոր կազմակերպություններ, որի հետևանքով էլ գործատուն իր աշխատողներին կներգրավի բանկ:

5. 10 և ավել տարվա հաճախորդներին տրամադրել լրացուցիչ պայմաններ վարկի և ավանդների համար, ինչը կշահագրգռի հաճախորդներին մնալ բանկի հաճախորդ:

6. Անընդհատ թարմացնել բանկի հեռախոսային հավելվածը:

Գրականություն

1. **Хакимова Е.А.** Анализ качества обслуживания клиентов в коммерческом банке// Вестник Челябинского государственного университета.- 2011.- № 6 (221).- С. 131–137.
2. **Голубков Е.П.** Маркетинговые исследования: теория, методология и практика.- 2-е изд., перераб.- М.: Финпресс, 2004. - 464 с.
3. **Каплан Р.С., Нортон Д.П.** Сбалансированная система показателей. - М.: Издательство “Олимп-Бизнес”, 2017. - 214 с.
4. <https://www.evocabank.am>

11.09.2018.

Н.Г. Геворгян

ИССЛЕДОВАНИЯ И ПРЕДЛОЖЕНИЯ КАЧЕСТВА ОБСЛУЖИВАНИЯ КЛИЕНТОВ КОММЕРЧЕСКОГО БАНКА

Коммерческим банком проведен опрос качества обслуживания клиентов. Запрос проводился среди клиентов банка. На основе анализа полученных результатов представлены рекомендации по повышению удовлетворенности клиентов.

Ключевые слова: обслуживание клиентов коммерческого банка, опрос клиентов, показатели удовлетворенности клиентов.

N.G. Gevorgyan

RESEARCHES AND PROPOSALS OF CUSTOMERS' SERVICE QUALITY OF THE COMMERCIAL BANK

A customer service quality survey has been conducted by the commercial bank. An inquiry has been made within the customers. The results have been summed up and presented in a number of recommendations for increasing customers' satisfaction.

Keywords: customer service of commercial bank, customer survey, customer satisfaction indicators.

Գևորգյան Նունե Գեղամի – հայցորդ (ԵՊՀ)

ՀՏԴ 621.313

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՍԱՐՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Դ.Վ. Դավթյան

ՀԱՆՔԱՔԱՐԻ ՄԱՆՐԱՅՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ԾԱԽՍՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՏՆՏԵՍՄԱՆ ՀԱՅՏՆԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնավորվել է էլեկտրաէներգիայի տնտեսման խնդրի կարևորությունը և արդիականությունը: Դիտարկվել են տեխնոլոգիական գործընթացում ծախսվող էլեկտրաէներգիայի տնտեսման ուղղությամբ կատարված հայտնի աշխատանքների վերլուծությունները: Ձևավորվել են հանքաքարի մանրացման տեխնոլոգիական գործընթացում ծախսվող էլեկտրաէներգիայի տնտեսմանը միտված խնդիրների լուծման ուղղությունները:

Առանցքային բառեր. տեխնոլոգիական գործոններ, էլեկտրասպառիչներ, աշխատանքային ռեժիմ, կոմպենսացիա, ռեակտիվ հզորություն:

Ներկայումս էներգախնայողությունը դիտարկվում է որպես առաջնահերթություն՝ պայմանավորված հիմնական էներգետիկ ռեսուրսների դեֆիցիտով, դրանց արդյունահանման ծախսերի մեծացմամբ, ինչպես նաև գլոբալ էկոլոգիական խնդիրներով:

Էներգետիկ ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը նպաստում է տնտեսության կայուն զարգացմանը արդյունաբերության բոլոր բնագավառներում: Հանքարդյունաբերությունը էներգատար ոլորտ է, որին բնորոշ օրինաչափությունը էներգասպառման առաջանցիկ աճն է արդյունաբերական արտադրանքի աճին: Հանքարդյունաբերության էլեկտրասպառման աճն առաջանում է ոչ միայն արտադրանքի բացարձակ աճով, այլ նաև տեխնոլոգիայի որակական փոփոխությամբ, հանքի արդյունահանման հանքաերկրաբանական պայմանների բարդացմամբ, բնապահպանական միջոցառումների իրականացմամբ: Հետազոտությունները ցույց են տվել, որ հանքարդյունաբերության ոլորտում սպառվող էլեկտրաէներգիայի զգալի չափաբաժինը ծախսվում է հանքաքարի մանրացման տեխնոլոգիական գործընթացներում, ինչը ներառում է հանքաքարի ջարդման, մանրացման և ֆլոտացման գործողությունները [1,2]:

Հանքաքարի մանրացման տեխնոլոգիական գործընթացում ծախսվող էլեկտրաէներգիայի տնտեսմանը նվիրված բազմաթիվ աշխատություններից առավել ընդգրկուն և համակողմանի հետազոտություն ներառում են [1,2] մենագրությունները, որոնցում կատարվել են.

- հանքաքարի աղացների էլեկտրաբանեցումն ապահովող էլեկտրամեխանիկական համակարգի աշխատանքային ռեժիմների վրա ազդող հիմնական գործոնների գնահատում և վերլուծություն,

- հանքաքարի աղացի աշխատանքային ռեժիմի և բանեցման շարժիչի սպառման ակտիվ հզորության ազդանշանի սպեկտրի հետազոտություն և վերլուծություն,

- մանրացման գործընթացի էներգետիկ և տեխնոլոգիական պարամետրերի հետազոտման մեթոդի մշակում, ֆիզիկական մոդելի ստեղծում, փորձարկում և արդյունքների հետազոտում,

- հանքաքարի աղացի աշխատանքն ապահովող էլեկտրաբանեցման համակարգի դինամիկական բեռնվածքի լավարկման խնդրի ձևակերպում, մաթեմատիկական նկարագրություն և լուծման ալգորիթմի մշակում,

- հանքաքարի աղացի բանեցման համակարգի շարժիչի թողարկման ռեժիմի հետազոտման մաթեմատիկական մոդելի և սինխրոն ռեժիմում շարժիչի կայուն աշխատանքի ապահովման պայմանների մշակում,

- հանքաքարի մանրացման գործընթացի էլեկտրասպառման լավարկման խնդրի դրվածքի, մաթեմատիկական նկարագրության և լուծման ալգորիթմի մշակում,

- մանրացման գործընթացի էլեկտրասպառման արդյունավետության մեծացումն ապահովող կառավարման համակարգի մշակման կառուցվածքային սխեմայի առաջադրում,

- մանրացման գործընթացի էլեկտրաէներգիայի տեսակարար ծախսերի նորմավորման մեթոդի մշակում:

Արդյունաբերական ձեռնարկությունների էլեկտրաէներգիայի տնտեսման հարցերի կախվածությունը էլեկտրամատակարարման որակից դիտարկվել է [3-5] աշխատություններում: Մասնավորապես, հեղինակների կողմից ուսումնասիրվել են էլեկտրաէներգիայի որակի վրա ազդող հիմնական գործոնները, ինչպիսիք են՝ լարման շեղումը, լարման տատանումը, ոչ սինուսոիդային ռեժիմները, հաճախության տատանումները և առաջարկվել են էլեկտրաէներգիայի որակի ցուցանիշների բարելավման տարբերակներ:

Էներգախնայողությանը միտված տարբեր լուծումներից առավել արդյունավետ, շուտ ետգնվող և քիչ կապիտալ ներդրումներ պահանջող տարբերակներից է հաճախականային կարգավորվող ասինքրոն էլեկտրաբանեցումը [6], որը թույլ է տալիս լավարկել մանրացման գործընթացում օգտագործվող ջարդիչների, պոմպերի, օդափոխիչների և այլ էլեկտրասպառիչների աշխատանքային ռեժիմները բեռնվածքի փոփոխման լայն միջակայքում:

Չնայած ժամանակակից փոխակերպիչների թվացյալ մեծ արժեքին՝ ներդրված միջոցների փոխհատուցվելիությունը էներգառեսուրսների տնտեսման և արդյունավետության ուրիշ բաղադրիչների հաշվին չի գերազանցում միջինը 1.5 տարին:

Հաճախության փոխակերպիչի օգտագործմամբ ստեղծվում են հետևյալ տեխնիկական հնարավորությունները [6].

- արագության կարգավորում 0-ից մինչև անվանական և անվանականից բարձր,
- սահուն արագացում և արգելակում,
- թողարկման, աշխատանքային և վթարային ռեժիմներում հոսանքի սահմանափակում անվանականի մակարդակում,
- սարքավորումների մեխանիկական և էլեկտրական մասերի ծառայության ժամկետի երկարացում,
- որոշ սարքավորումների օգտագործման բացառում,
- հաճախության փոխակերպիչի տեղադրումը հնարավոր է ստանդարտ բաշխիչ բջջում՝ բացառված սարքավորումների տեղում:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Վ.Ա. Չուվաշեվի և այլոց կողմից հեղինակած աշխատությունում դիտարկված և հանքարդյունաբերությունում օգտագործվող էներգախնայող ասինքրոն մեքենաները, որտեղ առաջարկվում է ասինքրոն մեքենաների նոր կոնստրուկցիա, մասնավորապես, առաջարկվում է ռոտորի կարճ միացված ալյումինե փաթույթը փոխարինել կարճ միացված պղնձյա փաթույթով [7]: Դա շատ բարդ տեխնոլոգիական պրոցես է, բայց տալիս է զգալի արդյունք՝ ալյումինե կոնստրուկցիայով ասինքրոն մեքենաների համեմատ: Նոր սերնդի ասինքրոն մեքենաները, ունենալով նույն զարբերիտային չափեր, ունեն ավելի մեծ հզորություններ, մոտ 30...70% բարձր արդյունավետություն նախորդ սերնդի ասինքրոն մեքենաների համեմատ: Բացի այդ, ավելի հուսալի, խնայող և հեշտ թողարկվող են:

Էլեկտրաէներգիայի զգալի տնտեսման հնարավորությունները, պայմանավորված էներգահամակարգում էլեկտրաէներգիայի մատակարարման գրաֆիկի արդյունավետ բաշխվածությամբ, հիմնավորվել են [8] աշխատությունում:

Հայտնի է ավտոմատ կառավարման ադապտիվ համակարգ՝ հիմնված բաշխիչ կարգավորիչների և հանքաքարի մեծության փոքրացման բաշխված պարամետրերի ֆունկցիայի վրա: Դա կարող է իրականացվել արտադրական կոնտրոլերների հիմքի վրա, հանքահարստացման կոմբինատի ջարդող-մանրացնող համալիրի համաձայնեցված ադապտիվ կառավարման կիրառությամբ [9]:

Առաջարկվող կառավարման համակարգը թույլ է տալիս ջարդող-մանրացնող համակարգում նվազագույնի հասցնել էլեկտրաէներգիայի միավոր ծախսերը, հասնել արտադրական գծի առավելագույն արտադրողականության և նվազեցնել բեռնվածությունը մանրացման վերջնական փուլում, ինչը իր հերթին նպաստում է ընդհանուր էլեկտրասպառման նվազեցմանը:

Փոփոխական հոսանքի բոլոր շարժիչները, ինչպես նաև էլեկտրաէներգիայի պարամետրերի փոխակերպման միջոցների (տրանսֆորմատորներ, բնական կոմուտացիայով կառավարվող ուղղիչներ) համար, բացի ակտիվ էներգիայից, սպառում են որոշակի չափով ռեակտիվ էներգիա:

Ռեակտիվ հզորության կոմպենսացիան հանգեցնում է ռեակտիվ էներգիայի հոսքի փոքրացման, որը թույլ է տալիս նվազեցնել էլեկտրական ցանցերում էլեկտրաէներգիայի կորուստները մինչև 30% [10]:

Ձեռնարկություններում հզորության գործակցի լավարկված մեծությունը ստացվում է ռեակտիվ հզորության կոմպենսացման ինչպես բնական, այնպես էլ արհեստական ճանապարհով [10]:

Բնական ճանապարհով՝

- սպառիչների աշխատանքի ռեժիմների բարելավմամբ,
- նոր տիպի կառուցվածքով շարժիչների կիրառմամբ,
- շարժիչների և տրանսֆորմատորների թերբեռնման բացառմամբ,
- էլեկտրաշարժիչների վերանորոգման որակի բարձրացմամբ,
- բարձր $\cos\phi$ ունեցող կարճ միացված ռոտորով ասինխրոն շարժիչներով փոխարինել ֆազային ռոտորով ասինխրոն շարժիչները, եթե տեխնոլոգիական պրոցեսը թույլ է տալիս,

- հնարավորության դեպքում փոխարինել ասինխրոն շարժիչները գերգրգռմամբ աշխատող սինխրոն շարժիչներով:

Արհեստական ճանապարհով հզորության գործակցի լավարկված մեծությունը ստացվում է հատուկ կոմպենսացնող սարքավորումների (ռեակտիվ հզորության գեներատորների) էլեկտրամատակարարման համակարգի համապատասխան կետերում տեղադրման ճանապարհով:

Ձեռնարկության էլեկտրասարքավորումները սնող էլեկտրամատակարարման բաշխիչ ցանցում ռեակտիվ հզորության կոմպենսացման նպատակով առաջարկվում է էլեկտրաբանեցման հաստատուն հոսանքի շղթայում կոմպենսացնող ուղղիչ դիոդների խմբի կառավարման անկյունների հարաբերակցությունների և կոմպենսացնող փոխակերպիչների կառավարման անկյան և հոսանքի ինվերտորի էլքային էներգիայի հոսքի լայնախմբուլսային մոդուլյացիայի աստիճանի հարաբերակցության որոշման ալգորիթմներ [11]: Ինչպես նաև լուծվել են սինխրոն շարժիչների խմբում գրգռման հոսանքների հարաբերակցության և շարժիչների ու էլեկտրաբանեցման կերպափոխիչների ռեակտիվ հզորությամբ հարաբերական բեռնման հարաբերակցության օպտիմալացման խնդիրները: Վերջիններս իրականացվել են միկրոպրոցեսորային նույնականացման հաշվողական և լավարկող (օպտիմալացնող) սարքերի իրականացման մոտեցումների դիտարկման ճանապարհով, այդ թվում նույնականացման և օպտիմալացման սարքերի հաշվարկային սխեմաների մշակմամբ, որոնք իրականացվել են միկրոքոնտրոլերների վրա ծրագրի օգնությամբ, որը գրված է C լեզվով, և ծրագրավորվող տրամաբանական քոնտրոլերների կիրառման դեպքում ST կառուցվածքավորված տեքստի լեզվով: Հաշվարկային տարբերական սխեմաների ստուգման համար որպես միջավայր օգտագործվել է նմանակման դինամիկ մոդելավորման VenSim միջավայրը:

Կոմպենսացնող կոնդենսատորների օգտագործումը ռեակտիվ հզորության կոմպենսացման և էլեկտրամատակարարման համակարգի հավասարակշռման առավել պարզ և տարածված եղանակներից է:

Կոնդենսատորը բնութագրվում է ակտիվ հզորության կորուստներով, որոնք հանգեցնում են նրա տաքացմանը: Այդ կորուստները կախված են կիրառված լարման, հաճախության և ունակության մեծություններից: Կոնդենսատորում կորուստները կախված են նաև դիէլեկտրիկի հատկություններից, որոնք որոշվում են դիէլեկտրիկական կորուստների անկյան տանգենտով ($\tan\phi$) և բնութագրում են տեսակարար կորուստները ($V_{\text{տ}}/V_{\text{վար}}$) կոնդենսատորում: Կոնդենսատորի տեսակից և կիրառման բնագավառից կախված՝ կորուստները կարող են կազմել 0,5-ից մինչև 4 $V_{\text{տ}}/V_{\text{վար}}$:

Կոնդենսատորները շատ զգայուն են լարման կորի սինուսոիդային տեսքի աղավաղման, այսինքն՝ հոսանքի բարձր հարմոնիկների նկատմամբ: Արդյունքում կոնդենսատոր թափանցող բարձր հարմոնիկների պատճառով կտրուկ մեծանում են ակտիվ հզորության կորուստները կոնդենսատորում, ինչը հանգեցնում է նրանց լրացուցիչ տաքացմանը [12]:

Պոլյանտվիչների հեղինակած աշխատությունում առաջարկվում է կոնդենսատորային կայանքի ունակային արժեքի կարգավորման խնդրի լուծման համար նոր սխեմային լուծում, որը հնարավորություն է տալիս ստանալ լավ արդյունքներ: Նկարագրված սարքի հիմնական առավելությունը փոխհատուցող կոնդենսատորի ունակության արժեքի սահուն կարգավորման հնարավորությունն է ուժային բնապիկ(օպտոտիրիստորի) օգնությամբ, որը կառավարվում է միկրոքոնտրոլերով, ի տարբերություն գոյություն ունեցող ռեակտիվ հզորության փոխհատուցման սխեմաների, որոնք կոնդենսատորային կայանքի ունակությունը փոփոխում են թռիչքաձև: Շնորհիվ սահուն կարգավորման՝ սարքի աշխատանքը ամբողջությամբ բացառում է սնման ցանցում ռեակտիվ հզորության գերկոմպենսացման կամ թերկոմպենսացման երևույթը [13]:

Էլեկտրամատակարարման համակարգերին զգալի քանակությամբ ռեակտիվ հզորության փոխանցումը տրանսֆորմատորների և էլեկտրահաղորդման գծերի միջոցով արդյունավետ չէ: Ինչպես հայտնի է, գծի սկզբում հզորությունը՝ $(P_1 + j*Q_1)$, տարբերվում է գծի վերջում հզորությունից՝ $(P_2 + j*Q_2)$, հաշվի առնելով ակտիվ հզորության կորուստները՝ կախված բեռի ակտիվ և ռեակտիվ բաղադրիչներից [14]:

Գծի սկզբում լարումը՝ U_1 գծի վերջում լարման՝ U_2 -ի հետ ունի հետևյալ հարաբերությունը [14]՝

$$U_1 = \sqrt{(U_2 + \Delta U')^2 + (\Delta U'')^2}, \quad (1)$$

$$\Delta U' = \frac{P_2 R + Q_2 X}{U_2} = \Delta U_P' + \Delta U_Q', \quad (2)$$

$$\Delta U'' = \frac{P_2 X + Q_2 R}{U_2} = \Delta U_P'' + \Delta U_Q'', \quad (3)$$

որտեղ $\Delta U'$ և $\Delta U''$ -ն լարման անկման վեկտորի երկայնական և լայնական բաղադրիչներն են, X և R -ը համապատասխանաբար ռեակտիվ և ակտիվ բաղադրիչներն են:

Ցանցերի համար սովորաբար $X \gg R$, այդ իսկ պատճառով $\Delta U'$ -ը հիմնականում որոշվում է $Q_2 * X$ գումարելիով, իսկ $\Delta U''$ -ն՝ $P_2 * X$ գումարելիով: $\Delta U''$ -ի ազդեցությունը U_2 -ի վրա փոքր է, քանի որ (1) բանաձևում արմատի տակ առաջին գումարելին զգալիորեն մեծ է երկրորդ գումարելիից: Այդ իսկ պատճառով էներգահամակարգերի հանգույցներում լարման մակարդակները գործնականում կախված չեն փոխանցվող ակտիվ հզորությունից և ամբողջությամբ որոշվում են ռեակտիվ բաղադրիչով:

[14] աշխատության հեղինակները առաջարկել են էլեկտրաէներգիայի սպառման ռեժիմների լավարկման երեք խումբ.

1. Քանակական լավարկում, որի դեպքում տեղի է ունենում էլեկտրաէներգիայի սպառման չափերի էական փոփոխություն: Այն ներառում է էլեկտրաբանեցումների ռացիոնալ հզորությունների ընտրություն, էլեկտրատեխնոլոգիական պրոցեսների ռացիոնալ միջին հոսանքների ընտրություն, քիչ տնտեսող սարքավորումների փոխարինում ավելի տնտեսողների և այլն: Այս ուղղությունը նաև կարելի է անվանել առանձին էլեկտրաէներգիայի սպառիչների լավարկում:

2. Որակական լավարկում, որի դեպքում առկա է էլեկտրաէներգիայի որակի ցուցանիշների էական բարելավում էլեկտրասպառման աննշան փոփոխությունների դեպքում: Կիրառելի է սովորական տիպի արդյունաբերական ձեռնարկություններում: Այստեղ լավարկվում է էլեկտրասպառման ռեժիմի այնպիսի պարամետր, ինչպիսին լարումն է, ինչպես նաև լարման հետ կապված՝ ռեակտիվ հզորությունների վերաբաշխումը: Այս ուղղությունը կարելի է անվանել լարմամբ և ռեակտիվ հզորությամբ կառավարման լավարկում:

3. Ժամանակավոր լավարկում, այսինքն՝ էլեկտրասպառման փոփոխություն օրվա ընթացքում առանց գումարային էլեկտրասպառման էական փոփոխության: Այս ուղղությունը կարելի է անվանել էլեկտրասպառման գրաֆիկների լավարկում:

Աշխատության հեղինակը սինքրոն շարժիչների և կոնպենսացնող ու փոխհատուցված փոխակերպիչներով տեխնոլոգիական կայանքների խմբի գրգռման կառավարման համալիր համակարգի համար առաջարկել է որակական լավարկման խնդիրը, որով լավարկվել են լարումը և ռեակտիվ հզորությունը [14]:

[15] աշխատության հեղինակը էլեկտրական ընդունիչների աշխատանքային ռեժիմները դիտարկել է 3 խմբով.


1) երկարատև չփոփոխվող կամ քիչ փոփոխվող բեռնվածքով ռեժիմ (կոմպրեսորների էլեկտրաշարժիչներ, պոմպեր, օդափոխիչներ, ջախջախիչներ, աղացներ և այլն),

2) կարճաժամկետ բեռնվածքի ռեժիմ (հիդրավլիկ կափարիչ, մետաղակտրման հաստոցների աջակցող մեխանիզմների բանեցման շարժիչներ),

3) կարճաժամկետ կրկնվող բեռնվածքով ռեժիմ (ամբարձիչների շարժիչներ, եռակցման ապարատներ, էքսկավատորներ):

Աշխատությունում՝ որպես լեռնամետալուրգիական ձեռնարկությունների էլեկտրասպառման տարբերիչ առանձնահատկություններ, նշվում են էլեկտրաէներգիայի մատակարարման և սպառման գրաֆիկի անհավասարաչափությունը, ձեռնարկության էլեկտրասպառիչներին էլեկտրաէներգիայի

անընդհատ մատակարարումը, էլեկտրաէներգիայի համապատասխան որակի ապահովումը, ինչպես նաև էլեկտրասպառման ռեժիմների կախվածությունը տեխնոլոգիական գործոններից, որը վճռորոշ դերակատարություն ունի էլեկտրաընդունիչի սպառող հզորության չափաքանակի վրա (նկ.) [15]:



Նկ. «Ապատիտ» հարստացման ֆաբրիկայի օրինակի հիման վրա բերված էներգետիկական բնութագրերը

Լեռնամետալուրգիական ձեռնարկություններում էլեկտրաէներգիայի ծախսի կառավարման համար առաջարկել է [15].

- էլեկտրասպառման վերլուծման համար տեղեկատվական-մոդելավորող համակարգի ներդրում,

- տեխնոլոգիական սահմաններում լեռնամետալուրգիայում օգտագործվող սարքավորումների էլեկտրասպառման օրինաչափությունների բացահայտում,

- էներգաաուղիտի անցկացում և էներգախնայող միջոցառումների իրականացում:

Եզրակացություն: Վերլուծելով արտադրական գործընթացներում ծախսվող էլեկտրաէներգիայի տնտեսման հայտնի մեթոդները՝ կարելի է պնդել, որ հանքաքարի մանրացման տեխնոլոգիական գործընթացում ծախսվող էլեկտրաէներգիայի տնտեսման անհրաժեշտությունը միանիշ է: Դա առավելապես պայմանավորված է մետաղական խտանյութերի արտադրությունում օգտագործվող բազմատեսակ և բազմափուլ տեխնոլոգիական սխեմաների տոպոլոգիաների և ստեղծվող տեխնոլոգիական իրավիճակների բազմազանությամբ, գործընթացում օգտագործվող էլեկտրական բեռի փոփոխման դինամիկությամբ, ինչպես նաև արտադրանքի ինքնարժեքի վրա ծախսվող էլեկտրաէներգիայի զգալի մասնաբաժնով, որոնք անհնար են դարձնում հայտնի մեթոդների կիրառությունը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկվում է մշակել հանքաքարի մանրացման տեխնոլոգիական գործընթացում ծախսվող էլեկտրաէներգիայի տնտեսման այնպիսի մեթոդ, որը հաշվի առնելով տեխնոլոգիական գործընթացներում օգտագործվող սպառիչների աշխատանքային ռեժիմները, ինչպես նաև դրանց փոխադարձ ազդեցությունները միմյանց վրա՝ կապահովի էլեկտրաէներգիայի զգալի տնտեսում: Դրա համար նախատեսվում են լուծել հետևյալ խնդիրները.

- էլեկտրաբանեցման սինքրոն և ասինքրոն շարժիչների աշխատանքային ռեժիմների հետազոտման մաթեմատիկական մշակում՝ հաշվի առնելով տեխնոլոգիական գործոնները,

- արտադրամասում առկա սինքրոն և ասինքրոն շարժիչների դեպքում ռեակտիվ հզորության կոմպենսացման հնարավորությունների գնահատման մաթեմատիկական մոդելի մշակում:

- ձևավորել մանրացման գործընթացում ծախսվող էլեկտրաէներգիայի տնտեսմանը միտված լավարկման խնդիրը: Մասնավորապես հաշվի առնելով արտադրամասում առկա ասինքրոն շարժիչների ռեակտիվ հզորության պահանջարկը՝ գտնել տեխնոլոգիական սխեմայում օգտագործվող սինքրոն շարժիչների գրգռման հոսանքների այն օպտիմալ արժեքների համախումբը, որի դեպքում այդ շարժիչների կողմից արտադրվող ռեակտիվ հզորությունը կլինի այնպիսին, որ դրա արտադրման և բաշխման համար ծախսվող ակտիվ հզորությունը լինի նվազագույն:

Գրականություն

1. **Բաղդասարյան Մ.Ք.** Հանքաքարի մանրացման տեխնոլոգիական գործընթացի էլեկտրասպառման արդյունավետության մեծացման մեթոդներ: Մենագրություն /ՀՊՃՀ.- Երևան, 2005.-198 էջ:

2. **Багдасарян М.К.** Система управления процессом измельчения минерального сырья.-LAP Lambert Academic Publishing, 2012. – 184 с.
3. **Волков Н.Г.** Качество электроэнергии в системах электроснабжения: Учебное пособие/ Национальный исследовательский Томский политехнический университет.-Томск: Изд-во Томского политехнического университета, 2010.- 152 с.
4. **Овчаренко Д.Е., Розинский Д.И.** Повышение эффективности электроснабжения промышленных предприятий. – Киев: Техника, 1989. – 287 с.
5. **Железко Ю.С.** Выбор мероприятий по снижению потерь электроэнергии в электрических сетях. – М.: Энергоатомиздат, 1989. – 176 с.
6. **Шейн Д.** Применение энергосберегающих технологий при обогащении железной руды на ДОФ ОАО «ОлКон» // Материалы VII Международной студенческой электронной научной конференции «Студенческий научный форум». -2014.
7. Энергосберегающие асинхронные двигатели для привода горных машин / **В.А. Чувашев, Ю.Н. Папазов, В.Ю. Чуванков и др.** // Электричество. - 2007. - №5. - С. 61-68.
8. **Шклярский Я.Э., Брагин А.А.** Рациональное формирование графика нагрузки электротехнического комплекса горного предприятия / Санкт-Петербургский государственный горный университет. - СПб., 2012. - Т.196. - С. 281-284.
9. **Маринич И.А.** Адаптивная система управления дробильно-измельчительным комплексом // Вестник ИрГТУ. - 2013. - №4 (75). - С. 24-29.
10. **Железко Ю.С.** Компенсация реактивной мощности и повышение качества электроэнергии. - М.: Энергоатомиздат, 1985. – 224 с.
11. **Плехов А.С., Охотников М.Н., Титов В.Г.** Задачи идентификации и оптимизации при энергосберегающем управлении электроприводами и алгоритмы их решения // Труды НГТУ им. Р.Е. Алексеева. – Нижний Новгород, 2011. - № 3(90). - С. 215–225.
12. **Климова Г.Н.** Энергосбережение на промышленных предприятиях: Учебное пособие.-Томск: Изд-во Томского политехнического университета, 2008. – 186с.
13. **Полуянович М.Н., Полуянович Н.К.** Микроконтроллерная система компенсации реактивной мощности // Инженерный вестник Дона.- 2007. - № 2. – С. 77–86.
14. **Зайцев А.И., Плехов А.С.** Минимизация потерь электроэнергии в промышленном и сельскохозяйственном производстве // Электротехнические комплексы и системы управления.– Воронеж, 2008. - №2. – С. 4-8.
15. **Кузнецов Н.М.** Рациональное электропотребление на горных предприятиях / Национальный исследовательский технологический университет // МИСиС. – 2012. - С. 128-135.

28.08.2018.

Д.В. Давтян

АНАЛИЗ ИЗВЕСТНЫХ МЕТОДОВ ЭКОНОМИИ ЭЛЕКТРОЭНЕРГИИ, ПОТРЕБЛЯЕМОЙ В ТЕХНОЛОГИЧЕСКОМ ПРОЦЕССЕ ИЗМЕЛЬЧЕНИЯ РУДЫ

Обоснованы важность и актуальность проблемы экономии электроэнергии. Проведен анализ известных работ по сбережению электроэнергии, потребляемой в технологическом процессе. Сформулированы направления по решению вопросов, связанных с энергосбережением в технологическом процессе дробления руды.

Ключевые слова: технологические факторы, электропотребители, рабочий режим, компенсация, реактивная мощность.

D.V. Davtyan

ANALYSIS OF WELL-KNOWN POWER SAVING METHODS PROVIDED IN THE ORE-GRINDING TECHNOLOGICAL PROCESS

The importance and relevance on the question of electric energy saving has been justified. An analysis of well-known works on electric energy saving in the technological process has been observed. Methods for the solution on issues related to energy-saving, spent through the technological process of ore-grinding have been shaped.

Keywords: technological factors, electrics, working mode, compensation, reactive power.

Դավթյան Դավիթ Վանուշի – ասպիրանտ, ՀԱՊՀ

ՀՏԴ 621.316

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՍԱՐՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Դ.Ա. Սիմոնյան

ԷԼԵԿՏՐԱԲԱՆԵՑՄԱՆ ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՐԱ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԼԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Դիտարկվում են էլեկտրամատակարարման համակարգում լարման հիմնական ցուցանիշների նորմերը և դրանց խախտման պատճառներն ու աղբյուրները: Ուսումնասիրվել է լարման մեծության թույլատրելի նորմերից դուրս շեղումների ազդեցությունը էլեկտրաբանեցման՝ ասինքրոն և սինքրոն շարժիչների աշխատանքային ռեժիմների վրա և բացահայտվել են այդ պատճառով առաջացած բացասական հետևանքները:

Առանցքային բառեր. լարման շեղում, տատանում, անկում, իմպուլսային գերլարում, ասինքրոն, սինքրոն, մեխանիկական բնութագիր:

Ներածություն: Էլեկտրաբանեցման շարժիչների աշխատանքի երկարակեցությունը, կայունությունն ու հուսալիությունը անմիջականորեն կապված են էլեկտրաէներգիայի որակի հետ:

Էլեկտրաէներգիայի լարման որակի համար գոյություն ունի գործող ստանդարտ ГОСТ 32144-2013 «ընդհանուր նշանակության էլեկտրամատակարարման համակարգի էլեկտրաէներգիայի որակի նորմերը» [1], ըստ որի էլեկտրաէներգիայի լարման որակի հիմնական ցուցանիշներն են՝ [1-3].

- լարման շեղումը,
- լարման տատանումը,
- լարման անկումը,
- իմպուլսային գերլարումը:

Ըստ վերոնշյալ ստանդարտի, էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի համար սահմանվում են լարման թույլատրելի շեղվածության հետևյալ ցուցանիշները՝ թույլատրելի շեղվածություն և սահմանային շեղվածություն:

Լարման շեղումը բնութագրվում է լարման շեղման այն ցուցանիշներով, որոնց համար սահմանվում են հետևյալ նորմերը. անվանական և սահմանային թույլատրելի շեղման դրվածքային մեծություններ՝ էլեկտրական էներգիայի սպառիչների մուտքում համապատասխանաբար կազմում են էլեկտրական ցանցի անվանական լարման $\pm 5\%$ և $\pm 10\%$:

Լարման տատանումն առաջանում է ցանցում արագ փոփոխվող բեռնվածքի ազդեցությունից: Լարման տատանման աղբյուր են իմպուլսային հզոր էլեկտրաընդունիչները, փոփոխական բնույթի ակտիվ և ռեակտիվ հզորության սպառիչները՝ աղեղային և ինդուկցիոն վառարանները, եռակցող մեքենաները և հզոր էլեկտրաշարժիչները թողարկման ժամանակ:

Լարման անկման տևողությունը կախված է հայտնաբերման և շտկման պաշտպանությունից:

Գոյություն ունի լարման անկման երկու հիմնական պատճառ.

- օգտագործողի կողմից ոչ թույլատրելի բեռնվածքի միացում,
- էլեկտրամատակարարման համակարգի խափանում:

Եթե էլեկտրացանցին միացված է մեծ բեռնվածք, օրինակ, հզոր շարժիչ, ապա նրա թողարկման հոսանքները կարող են սնող ցանցերում լարման անկման պատճառ հանդիսանալ: Եթե թողարկումը տևական ժամանակ է պահանջում, ապա էլեկտրացանցում լարման անկումը կմեծանա և կառաջացնի մեծ խնդիրներ:

Իմպուլսային գերլարումը այնպիսի անցումային գործընթաց է, որի դեպքում տեղի է ունենում կարճատև կտրուկ լարման աճ, որը տևում է մի քանի վայրկյան:

Իմպուլսային լարումը կարող է լինել ներքին և արտաքին:

Ներքին իմպուլսային գերլարումները, որպես կանոն, առաջանում են ռեակտիվ բեռնվածքի կոմուտացիայի և այլ պատճառներով: Ամենաշատը վտանգավոր են այն իմպուլսային լարումները, որոնք առաջանում են ինդուկտիվ բեռնվածքի անջատման ժամանակ:

Արտաքինը, այն իմպուլսային գերլարումներն են, որոնց աղբյուրները գտնվում են պաշտպանված համակարգերից դուրս.

- ամպրոպի պարպումներ,


- կոմուտացիոն գերլարումներ, որոնք առաջանում են բարձր լարման գծերի անջատումից առաջացած անցողիկ գործընթացներից (որոնք հետևանք են ենթակայանների տրանսֆորմատորների մագնիսացման ինդուկտիվության):

Էլեկտրաբանեցման շարժիչների շահագործման ժամանակ հաճախ կարող են տեղի ունենալ ցանցի սնող լարման մեծության շեղումներ: Որոշ դեպքերում շեղման այդ մեծությունները կարող են լինել անթույլատրելի սահմաններում:

Լարման անթույլատրելի շեղումների ազդեցության ուսումնասիրությունը: Էլեկտրաբանեցման շարժիչների զարգացրած մոմենտի, ստատորի հոսանքի, մագնիսական ռեակտիվ հզորության, ռոտորի հոսանքի և կորուստների ուսումնասիրությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, ըստ լարման շեղումների:

Ասինքրոն շարժիչներում այս երևույթի դիտարկման համար ենթադրում ենք, որ շարժիչի ստատորին տված ցանցի լարումը նվազում է, իսկ հաճախականությունը և շարժիչի լիսեռի վրա բեռնվածքի մոմենտը հաստատուն է, այսինքն՝ $U_g < U_{\text{ան}}$, $f = \text{const}$, $M_p = \text{const}$: Տվյալ պայմանների համար տեսնենք՝ ինչ է կատարվում շարժիչի աշխատանքային ռեժիմներում:

Ասինքրոն շարժիչի մեխանիկական բնութագրերը $M=f(S)$ լարման տարբեր արժեքների դեպքում բերված են նկ. 1-ում [4-6]:



Նկ. 1. Ասինքրոն շարժիչի մեխանիկական բնութագրերը ցանցի լարման տարբեր արժեքների ժամանակ
 $1 - U_g = U_{\text{ան}}$, $2 - U_g = 0,9 * U_{\text{ան}}$, $3 - U_g = 0,65 * U_{\text{ան}}$

Երբ սնող ցանցի լարումը հավասար է շարժիչի անվանական լարմանը ($U_g = U_{\text{ան}}$), շարժիչի մեխանիկական բնութագիրն ունի 1 կորի տեսքը, որը կոչվում է բնական մեխանիկական բնութագիր: Բեռնվածքի մոմենտին համապատասխան է բնութագրի b կետը: Ենթադրենք շարժիչին տրվում է $U_g = 0,9 * U_{\text{ան}}$, ապա մեխանիկական բնութագիրը կունենա 2 կորի տեսքը, և նրա աշխատանքային կետը կլինի բնութագրի c կետը, իսկ եթե $U_g = 0,65 * U_{\text{ան}}$, ապա շարժիչի մեխանիկական բնութագիրը կունենա 3 կորի տեսքը, և այս դեպքում շարժիչի զարգացման մոմենտը (k կետը) փոքր կլինի բեռնվածքի մոմենտից, որը կհանգեցնի շարժիչի վթարային կանգառին:

Այսպիսով, երբ ասինքրոն շարժիչի սնող լարումը նվազի K_u անգամ ($K_u = \frac{U_g}{U_{\text{ան}}}$), շարժիչի առավելագույն մոմենտը (M_{max}) կփոքրանա K_u^2 անգամ [4,5]:


Ասինքրոն շարժիչի ստատորի հոսանքը՝ (I_1), կախված սնող լարման մեծությունից, միաժամանակ կախված է ոչ միայն առանց բեռնվածքի հոսանքից (I_0), այլև մաքսիմալ մոմենտի պատիկությունից ($b_{\text{պ}} = \frac{M_{\text{max}}}{M_p}$):

Օրինակ, երբ $b_{\text{պ}} = 1.6$, իսկ սնող լարումը $U_g = 0,9 * U_{\text{ան}}$ առանց բեռնվածքի հոսանքը $I_0 = 0,3 * I_{\text{ան}}$, ապա ստատորի հոսանքը կազմում է $1.43 I_{\text{ան}}$, իսկ երբ $b_{\text{պ}} = 3$, ապա ստատորի հոսանքը կազմում է $1.25 I_{\text{ան}}$ [4,5]:


Շարժիչի նույն ակտիվ հզորությունը ապահովելու համար կմեծանա շարժիչի ստատորի հոսանքը, որն իր հերթին կհանգեցնի փաթույթներում հզորության կորուստի քառակուսային մեծացման, հետևաբար՝ շարժիչի գերտաքացման և նրա ծառայության ժամկետի կրճատման:

Նկ.2-ում բերված են ստատորի հոսանքի բնութագրերը՝ կախված սնող լարման մեծությունից, երբ շարժիչի $b_{\text{պ}} = 2$ [5]:

Բնութագրերի կորերը կառուցված են առանց բեռնվածքի հոսանքի տարբեր մեծությունների համար:



Նկ.2. Ստատորի հոսանքի կախվածությունը լարումից շարժիչի անվանական բեռնվածքի ($M_{ան}$) և անվանական հաճախականության ($f_{ան}$) դեպքում, երբ մաքսիմալ մոմենտի պատիկությունը $b_{այ} = 2$



Նկ.3. Շարժիչի մագնիսացման ռեակտիվ հզորության կախվածությունը լարումից ($b_{այ} = 2$; $f = f_{ան}$; $M_F = M_{ան}$)

Ասինքրոն շարժիչի մագնիսական ռեակտիվ հզորության կախվածությունը լարման փոփոխությունից, հաշվի առնելով հագեցման ազդեցությունը, կփոխվի ոչ թե լարման քառակուսուն համեմատական, այլ ավելի բարդ օրենքով [6]: Նկ.3-ում բերված է մագնիսացման ռեակտիվ հզորության բնութագիրը՝ կախված լարման փոփոխությունից: Բնութագիրը կառուցված է ըստ [7]-ում բերված բանաձևերի:


Ինչպես երևում է բնութագրից, շարժիչի սնման լարման մեծացմամբ մեծանում է մագնիսական ռեակտիվ հզորությունը, իսկ լարման անկման դեպքում այն նվազում է: Եթե ցանցի սնող լարումը $U_g = 1.2 * U_{ան}$, ապա մագնիսացման ռեակտիվ հզորությունը մեծանում է երկու անգամ:

Ասինքրոն շարժիչի ռոտորի հոսանքի հարաբերական մեծությունը, կախված սնող ցանցի լարումից (K_u), բեռնվածքից (m), առավելագույն մոմենտից ($b_{այ}$) և հաճախականությունից (K_f), արտահայտվում է հետևյալ բանաձևով [7]

$$\frac{I_2'}{I_{2ան}} = \sqrt{m \frac{b_{այ} + \sqrt{b_{այ}^2 - 1}}{\left(\frac{b_{այ} K_u^2}{m K_f^2} + \sqrt{\left(\frac{b_{այ} K_u^2}{m K_f^2} \right)^2 - 1}} }:$$

Ըստ լարման փոփոխության հոսանքի մեծությունը որոշելու համար, ընդունելով, որ սնող ցանցի հաճախությունը և շարժիչի բեռնվածքը հաստատուն են $K_f = m = 1$, վերոնշյալ բանաձևը կընդունի հետևյալ տեսքը.

$$\frac{I_2'}{I_{2ան}} = \sqrt{\frac{b_{այ} + \sqrt{b_{այ}^2 - 1}}{b_{այ} K_u^2 + \sqrt{(b_{այ} K_u^2)^2 - 1}}}$$



Նկ.4. Ռոտորի հոսանքի կախվածությունը լարումից, երբ $f = f_{ան}$; $M_F = M_{ան}$

Բանաձևից երևում է, որ ռոտորի հոսանքը կփոխվի հակադարձ համեմատական լարմանը (K_u), իսկ լարման փոքրացման դեպքում այդ փոփոխությունը կկատարվի ավելի բարձր աստիճանի: Նկ.4-ում ներկայացված է ռոտորի հոսանքի կախումը լարումից անվանական բեռնվածքի և անվանական հաճախականության դեպքում ($K_f = m = 1$):

Լարման անկման ժամանակ շարժիչի ռոտորի փաթույթում կորուստները մեծանում են ռոտորի հոսանքի քառակուսուն համեմատական:

Սինքրոն շարժիչների համար համանման հետազոտությունների արդյունքով կարելի է ասել, որ՝

- Լարման բարձրացումը հանգեցնում է շարժիչի մագնիսական ռեակտիվ հզորության մեծացման, միաժամանակ մեծանում են ակտիվ հզորության կորուստները:
- Լարման անկումը հանգեցնում է շարժիչի կայունության պաշարի փոքրացման և ակտիվ կորուստների մեծացման:
- Գրգռման հոսանքի հաստատուն մեծության դեպքում շարժիչի զարգացրած մոմենտը փոխվում է լարման մեծությանը համեմատական, սա հանգեցնում է շարժիչի աշխատանքի ստատիկ կայունության համապատասխան փոփոխության:

Եզրակացություն

1. Ասինքրոն շարժիչների սեղմակների վրա լարումը 15%-ով նվազելիս շարժիչի զարգացրած մոմենտը նվազում է 25%-ով: Այս դեպքում շարժիչը կարող է չթողարկվել կամ կանգնել:
2. Լարման անկման դեպքում մեծանում է ցանցից պահանջվող հոսանքի մեծությունը, ինչը հանգեցնում է ասինքրոն շարժիչի փաթույթների գերտաքացման և շարժիչի ծառայության ժամկետի կրճատման:
3. Սինքրոն շարժիչներին սնող ցանցի լարման մեծության փոփոխման հետևանքով փոխվում է նրա ռեակտիվ հզորության գներացումը:
4. Լարման բարձրացումը հանգեցնում է սինքրոն շարժիչի հզորության կորուստների և ռեակտիվ հզորության մեծացման:
5. Լարման անթույլատրելի շեղումները հանգեցնում են էլեկտրացանցի և էլեկտրաբանեցման սարքերի աշխատանքի արդյունավետության փոքրացման, կրճատվում է սարքավորումների ծառայության ժամկետը, մեծանում է վթարի առաջացման հավանականությունը:

Գրականություն

1. ГОСТ 32144-2013 Электрическая энергия, Нормы качества электрической энергии в системах электроснабжения общего назначения. - М., 2013. – 46с.
2. Савина Н.В. Качество электроэнергии: Учебное пособие. – Благовещенск: Изд-во АмГУ, 2014. - 182с.
3. Суднова В.В. Качество электрической энергии. – М.: Электросервис, 2000. – 86с.
4. Важнов А.И. Электрические машины. – Л.: Энергия, 1968. – 768 с.
5. Сыромятников И.А. Режимы работы асинхронных электродвигателей. – М. – Л., 1955. – 303с.
6. Костенко М.П., Пиотровский Л.М. Электрические машины. – М.–Л., 1958. - 651с.
7. Baghdasaryan M.K., Gasparyan A.A., Arakelyan D.K. Analyzing the main factors affecting the reactive power of induction motors used in the production of metallic concentrates // International journal of research in engineering and science (IJRES). – 2016. – Vol. 4, issue 9.

29.08.2018.

Д.А. Симонян

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ВЛИЯНИЯ КАЧЕСТВА НАПРЯЖЕНИЯ ЭЛЕКТРОЭНЕРГИИ НА РАБОТУ ДВИГАТЕЛЕЙ ЭЛЕКТРОПРИВОДОВ

Рассматриваются основные показатели напряжения, нормы, а также источники и причины нарушения норм в системе электроснабжения. Изучено влияние отклонения величины напряжения от допустимых норм на режим работы электроприводов: асинхронных и синхронных двигателей, и выявлены связанные с этим негативные последствия.

Ключевые слова: отклонение напряжения, колебание, падение, импульсное сверхнапряжение, асинхронный, синхронный, механическая характеристика.

D.A. Simonyan

SOME QUESTIONS OF AFFECT OF ELECTRICAL ENERGY'S VOLTAGE QUALITY ON OPERATION OF APPARATUS WITH MOTORS

The main metrics of voltage, norms, as well as causes and sources of norm's violation in electrical supply system are considered. The affect of voltage amount deviations from acceptable norms on apparatus is examined: asynchronous and synchronous motors' operation modes and negative consequences, connected with it are discovered.

Keywords: voltage deviation, fluctuation, drop, impulse, asynchronous, synchronous, mechanical characteristic.

Սիմոնյան Դավիթ Արմենի – մագիստրոս (ՀՀ ԳԱԱ)

Վ.Գ. Պետրոսյան, Տ.Հ. Հովակիմյան, Գ.Հ. Մարտոյան

ՀԱԷԿ 2-ՐԴ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԳՇԽ ՏԱՐԲԵՐԻ ԶԵՐՄԱՅԻՆ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳԾԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Իրականացվել է ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի գլխավոր շրջանառության խողովակաշարի տարրերի ջերմային ընդարձակման տեղաշարժերի ուսումնասիրություն: ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի ԳՇԽ տարրերի ջերմային ընդարձակման առավելագույն չափերը որոշելու նպատակով մշակվել է հաշվարկային մոդել և գնահատվել են ԳՇԽ-ի տարրերի ջերմային երկարացումները:

Առանցքային բառեր. ԱԷԿ, գլխավոր շրջանառու խողովակաշար, ջերմային ընդարձակում, մեխանիկական լարումներ, դեֆորմացիա:


Ներածություն: ԱԷԿ-ների շահագործման փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ջերմակրի գլխավոր շրջանառու խողովակաշարը (ԳՇԽ), որպես էներգաբլոկի կարևորագույն տարրերից մեկը, կարող է ենթարկվել շահագործման ընթացքում առաջացող և զարգացող վնասվածքների: Փոփոխական ռեժիմներում, պայմանավորված ջերմակրի ջերմաստիճանային մեծ տատանումներով, տեղի է ունենում կոնստրուկտիվ զոնային չափերի էական փոփոխություն: Դրանք իրենց հերթին առաջ են բերում ԳՇԽ-ի տարրերում ինքնակոմպենսացման մեխանիկական լարումներ: Դրանց մեծությունները կախված են ջերմաստիճանից և ԳՇԽ-ի տարրերի տեղաշարժման ազատության աստիճանից [1]:

Խնդրի դրվածքը: Զերմային ընդարձակումների սահմանափակումները, որոնք առաջ են գալիս ամրացման համակարգի անսարքությունների, սարքավորումների շինարարական կոնստրուկցիաներին մոտ տեղակայված լինելու պատճառով, կարող են հանգեցնել ինքնակոմպենսացման լարումների աճի, նյութի մեխանիկական դիմադրության բնութագրերի վատացման և որպես հետևանք՝ ԳՇԽ տարրերի հուսալիության նվազման [2]: Հետևաբար, շահագործման ընթացքում ԳՇԽ-ի ջերմային տեղաշարժերի մեծությունների որոշումը խիստ կարևոր է:

Խնդրի լուծման իրականացում: ԳՇԽ-ի այն հատվածը, որը սկիզբ է առնում միջուկային ռեակտորից (ՄՌ) և մուտք է գործում շոգեգեներատոր (ՇԳ) պայմանականորեն անվանենք «տաք գիծ» իսկ այն հատվածը, որը սկիզբ է առնում ՇԳ-ից և մուտք է գործում ՄՌ՝ «սառը գիծ» (նկ.1): Աղյուսակ 1-ում ներկայացված են ԳՇԽ-ի հիմնական տեխնիկական բնութագրերը:

Նկ.2-ում ներկայացված է ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի ԳՇԽ տարրերի ջերմային ընդարձակման առավելագույն չափերը որոշելու նպատակով ընտրված հաշվարկային տեղամասերի տարածական տեսքը ուղղանկյուն դեկարտյան կոորդինատական համակարգում: Կոորդինատական համակարգը ընտրվել է այնպես, որ xy հարթությունը համընկնի ԳՇԽ-ի հիմնական հանգույցների սարքավորումների տեղակայման հարթության հետ: Նկ.2-ում AB տեղամասը խողովակաշարի «սառը գիծ» անցուղու ՄՌ-ԳՇՊ տարրն է, CD և DE տեղամասերը «սառը գիծ» անցուղու ԳՇՊ-ՇԳ հատվածի տարրերն են, FG տեղամասը խողովակաշարի «տաք գիծ» անցուղու ՄՌ-ԳՓՍ տարրն է և GH տեղամասը խողովակաշարի «տաք գիծ» անցուղու ԳՓՍ-ՇԳ տարրն է: Այսպիսով, ընտրված x ուղղությամբ ջերմային ընդարձակման ենթարկվող հիմնական տեղամասերն են AB, CD, FG և GH, իսկ y ուղղությամբ՝ DE տեղամասը: Աշխատանքների իրականացման այս փուլում տեղաշարժերը z առանցքով հաշվի չեն առնվել:

Հաշվարկները իրականացվել են Microsoft visual studio 2010 միջավայրում, խնդրի լուծման նպատակով ստեղծված կոդով՝ C++ լեզվով: ԳՇԽ-ի AB+CD տեղամասի առավելագույն երկարացման համար ստացվել է $l_x^{\max} = 57,01$ մմ, իսկ DE տեղամասի համար՝ $l_y^{\max} = 23,52$ մմ գնահատականը, ջերմաստիճանի փոփոխման 20...350 °C տիրույթում:




Նկ. 1. ԳՇԽ-ի կոնստրուկցիոն հիմնական սարքավորումներով (տեսքը վերևից)

Աղյուսակ 1

ԳՇԽ-ի հիմնական տեխնիկական բնութագրերը

Մեծության անվանումը	Արժեք
«Տաք գիծ» հատվածի երկարություն, մմ	11143
«Սառը գիծ» հատվածի երկարություն, մմ	13917
Խողովակաշարի տրամագիծ, մմ	560
Խողովակի պատի հաստություն, մմ	34
Ջերմակրի ջերմաստիճան, °C	
- «տաք գիծ»	298
- «սառը գիծ»	268
Օգտագործվող հիմնական համաձուլվածքներ	08X18H10T
Չժանգոտվող աուստենիտային պողպատ	08X18H12T



Նկ.2. ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի ԳՇԽ տարրերի հաշվարկային մոդելի տարածական տեսքը

Աղյուսակ 2-ում բերված է ԳՇԽ-ի մետաղի ջերմային ընդարձակման գործակցի արժեքները տարբեր ջերմաստիճաններում 08X18H10T և 08X18H12T համաձուլվածքների համար:

Աղյուսակ 2

Ջերմային ընդարձակման գործակցի արժեքները

t, °C	$\alpha, \times 10^{-6} \text{ } ^\circ\text{C}^{-1}$
50	16,4
100	16,6
150	16,8
200	17
250	17,2
268	17,272
298	17,388
350	17,6

Աղյուսակ 3-ում բերված են ընտրված տեղամասերի երկարությունները:

Ընտրված տեղամասերի երկարությունները	
Տեղամաս	Երկարություն, մմ
AB	5183
CD	4633
FG	7549
GH	3045
DE	4050


Խողովակաշարի «սառը գիծ» անցուղու ՄՌ-ՇԳ տեղամասի առավելագույն երկարացումը xy հարթության մեջ կլինի՝

$$I_{xy}^{\max} = \sqrt{(I_x^{\max})^2 + (I_y^{\max})^2} = 61,67 \text{ մմ:}$$


Կոնտուրի առավելագույն երկարացումը հավասար է դրա առանձին տարրերի երկարացումների գումարին՝ 142,06 մմ (20...350 °C):

«Սառը գիծ» և «տաք գիծ» անցուղիների գումարի երկարացումը (թվաբանական գումար) համապատասխանաբար 268 °C և 298 °C աշխատանքային ջերմաստիճանների դեպքում ստացվել է 110,61 մմ (20...268 °C, 20...298 °C):


Նկ.3-5-ում բերված են մետաղական տարրի ջերմային երկարացման չափն արտահայտող գրաֆիկները, որտեղ հորիզոնական առանցքը ներկայացնում է դիտարկվող տեղամասի սկզբնական զծային չափը (մմ), ուղղահիգ առանցքը զծային երկարացման չափն է (մմ), իսկ նկարների աջ մասում տրված է յուրաքանչյուր ֆունկցիային համապատասխանող ջերմաստիճանային փոփոխությունը (°C):



Նկ.3. Ջերմային երկարացման արժեքները 250...350 °C տիրույթում



Նկ.4. Ջերմային երկարացման արժեքները 100...350 °C տիրույթում



Նկ.5. Ջերմային երկարացման արժեքները 50...350 °C տիրույթում

Եզրակացություն: Մշակվել է ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի ԳՇԽ տարրերի ջերմային ընդարձակման առավելագույն չափերը որոշելու նպատակով հաշվարկային մոդել և գնահատվել են ԳՇԽ-ի տարրերի ջերմային երկարացումները:

Առաջարկվում է գծային տեղաշարժերը չափող գործիքներ կիրառել խողովակաշարի «տաք գիծ» անցուղու ՄՌ-ԳՓՄ հատվածի ԳՓՄ-ին կից տիրույթներում և խողովակաշարի «սառը գիծ» անցուղու ՄՌ-ԳՇՊ հատվածի ԳՇՊ-ին կից տեղամասերում:

Ստացված թվային գնահատականները կարող են օգտագործվել ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի ԳՇԽ տարրերի ջերմային ընդարձակման մոնիտորինգի համակարգի և ջերմային տեղաշարժերի հսկման տեխնիկական մեթոդների մշակումներում:

Աշխատանքը իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ:

Գրականություն

1. Будов В.М., Фарафонов В.А. Конструирование основного оборудования АЭС. – М.: Энергоатомиздат, 1985. – 264с.
 2. Конструкционное материаловедение Металлы и сплавы / В.К. Борисевич, А.Ф. Виноградский, Я.С. Карпов и др. – Харьков: Нац. аэрокосмический ун-т, 2001. – 456 с.
- 18.09.2018.

Վ.Գ. Սետրոսյան, Դ.Օ. Օվակիմյան, Գ.Գ. Մարտյան

ОЦЕНКА ЛИНЕЙНЫХ ПЕРЕМЕЩЕНИЙ, ОБУСЛОВЛЕННЫХ ТЕРМИЧЕСКИМИ РАСШИРЕНИЯМИ ЭЛЕМЕНТОВ ГЦТ ЭНЕРГОБЛОКА №2 ААЭС

Проведено исследование тепловых расширений элементов главного циркуляционного трубопровода (ГЦТ) энергоблока №2 Армянской атомной электростанции (ААЭС). Разработана расчетная модель для оценки максимальных величин тепловых расширений элементов ГЦТ энергоблока №2 ААЭС и получены оценки величин тепловых расширений элементов ГЦТ.

Ключевые слова: атомная электростанция, главный циркуляционный трубопровод, тепловое расширение, механические напряжения, деформация.

V.G. Petrosyan, T.H. Hovakimyan, G.H. Martoyan

THE LINEAR DISPLACEMENT VALUES ESTIMATION OF MCP ELEMENTS OF THE ARMENIAN NPP UNIT 2 CAUSED BY THERMAL EXPANSIONS

The thermal expansion study of the main circulation pipeline (MCP) elements of the Armenian NPP unit 2 has been carried out. The calculation model for the maximum values estimation of the MCP elements thermal expansion of the Armenian NPP unit 2 has been developed and the estimations of the MCP elements thermal expansions values have been calculated.

Keywords: nuclear power plant, main circulation pipeline, thermal expansion, mechanical stresses, deformation.

Պետրոսյան Վահրամ Գասպարի – տ.գ.դ., պրոֆեսոր («Հայատոմ» ԳՀԻ ՓԲԸ)

Հովակիմյան Տեղեմակ Հովհաննեսի – ֆ.-մ.գ.թ. («Հայատոմ» ԳՀԻ ՓԲԸ)

Մարտյան Գևորգ Համլետի – տ.գ.թ. («Հայատոմ» ԳՀԻ ՓԲԸ)

ՀՏԴ 621.311

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Մ.Ֆ. Էլբակյան, Գ.Ք. Բաղդամյան

ՇՈԳԵԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԱՅԻՆ ՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ


Բերված են GT8C գազատուրբինով և K-50-90 շոգետուրբինով կահավորված շոգեգազատուրբինային տեղակայանքի աշխատանքային ռեժիմների դիագնոստիկա, որոշված են տեխնիկատնտեսական ցուցանիշները և էներգետիկական բնութագրերը՝ հաշվի առնելով դրսի օդի ջերմաստիճանի ազդեցությունը:

Առանցքային բառեր. էներգետիկա, գազատուրբինային տեղակայանք, վառելիքի ծախսի հարաբերական աճ, պայմանական վառելիքի ծախս, դրսի օդի ջերմաստիճան, տեխնիկատնտեսական ցուցանիշներ:


Էներգահամակարգի առջև դրված հիմնախնդիրներից մեկը Էլեկտրաէներգետիկական համակարգի Էլեկտրական բեռնվածքի գրաֆիկի փոփոխական մասի ծածկումն է: Էլեկտրաէներգետիկական համակարգերում մանրային հզորության անհրաժեշտությունը հետզհետե մեծանում է: Էլեկտրական բեռնվածքի օրական գրաֆիկի գազաթնակետային մասի կարգավորում կարելի է կատարել գազատուրբինային տեղակայանքների միջոցով: Էներգետիկայի զարգացումը որոշ էներգահամակարգերում պայմանավորված է գազատուրբինային Էլեկտրակայանների կառուցմամբ: Վերջին տարիներին կատարելագործվել են գազատուրբինների ջերմային սխեմաները և տարրերը: Ներկայումս կարևոր է համարվում գազատուրբինային տեղակայանքների այրման խցերում վառելիքի այրման տեխնոլոգիական առաջընթացը և տեղակայանքների էկոլոգիական ցուցանիշների լավացումը: Գազատուրբինների ստեղծման համար օգտագործվում են նոր նյութեր, կատարելագործվում են դրանց տարրերի հովացման համակարգերը: Գազատուրբինային տեղակայանքների շինարարության գործընթացը մեծապես պայմանավորված է գազատուրբինից առաջ գազերի նախնական ջերմաստիճանով, որոնք վերջին ժամանակներում աճել են: Բանող մարմնի տեսակարար ծախսը 1 կՎտ.ժ արտադրված Էլեկտրական էներգիայի համար ժամանակակից գազատուրբինային տեղակայանքներում կախված է գազատուրբինի հզորությունից և բանող մարմնի նախնական պարամետրերից: Գազատուրբինի հզորության 50...70%-ը օգտագործվում է կոմպրեսորում, որի տեխնոլոգիական գործընթացի կատարելագործման անհրաժեշտությունը ակնհայտ է:

Գազատուրբինային տեղակայանքի կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանի բարձրացման դեպքում նվազում է սեղմման ենթարկվող օդի ելակետային խտությունը, և այդպիսով, կրճատվում է վերջինիս զանգվածային ծախսը: Արդյունքում՝ նվազում է գազատուրբինում բանած գազերի էներգիան, որն ուղղվում է շոգեգազատուրբինային տեղակայանքի օգտահանիչ կաթսա: Որպես նշվածի հետևանք՝ օգտահանիչ կաթսայում գեներացվող շոգու քանակը նույնպես նվազում է [1]:


GT8C տիպի գազատուրբինային տեղակայանք – օգտահանիչ կաթսայի աշխատանքային ռեժիմների դիագնոստիկա բերված է նկ. 1-ում [2]:



u)



p)



q)

Նկ. 1. GT8C գազատուրքինային տեղակայանք – օգտահանիչ կաթսայի աշխատանքային ռեժիմների դիագրամ

Օգտվելով GT8C գազատուրբինային տեղակայանք – օգտահանիչ կաթսայի աշխատանքային ռեժիմների դիագրամից (ա)՝ դրսի օդի ջերմաստիճանի տարբեր արժեքների համար կարելի է ստանալ գազատուրբինային տեղակայանքի օգտակար գործողության գործակցի կախումը էլեկտրական հզորությունից հավասարումները [3], որոնք բերված են աղյուսակ 1-ում՝

Աղյուսակ 1

GT8C գազատուրբինի ՕԳԳ-ի կախումը էլեկտրական հզորությունից դրսի օդի ջերմաստիճանի տարբեր արժեքների դեպքում

Դրսի օդի ջերմաստիճան °C	$\eta = a_0 N_{GT}^2 + b_0 N_{GT} + c_0$		
	a_0	b_0	c_0
-30	-0,0039	0,5434	16,219
-25	-0,0040	0,5477	16,403
-20	-0,0035	0,4999	17,633
-15	-0,0043	0,5671	16,539
-10	-0,0036	0,5029	18,079
-5	-0,0035	0,4915	18,513
0	-0,0035	0,4885	18,658

Դրսի օդի ջերմաստիճան °C	$\eta = a_0 N_{GT}^2 + b_0 N_{GT} + c_0$		
	a_0	b_0	c_0
+5	-0,0040	0,5352	17,502
+10	-0,0048	0,5982	16,284
+15	-0,0044	0,5594	17,069
+20	-0,0050	0,6025	16,230
+25	-0,0045	0,5519	17,337
+30	-0,0045	0,5503	17,158

Օգտվելով աղ. 1-ից՝ դրսի օդի ջերմաստիճանի տարբեր արժեքների համար կարելի է ստանալ գազատուրբինային տեղակայանքի ծախսային բնութագրերի հավասարումները [4], հետևաբար նաև պայմանական վառելիքի ծախսի հարաբերական աճի բնութագրերի հավասարումները (աղ. 2):

Աղյուսակ 2

GT8C գազատուրբինի էներգետիկական բնութագրերի հավասարումները

Դրսի օդի ջերմաստիճան °C	$B = a_1 N_{GT}^2 + b_1 N_{GT} + c_1$		
	a_1	b_1	c_1
-30	0,0010	0,1861	6,3597
-25	0,0010	0,1888	6,1620
-20	0,0006	0,2290	5,1928
-15	0,0010	0,1938	5,7761
-10	0,0005	0,2432	4,6497
-5	0,0003	0,2562	4,2865
0	0,0002	0,2658	4,0372
+5	0,0003	0,2558	4,3208
+10	0,0006	0,2360	4,6804
+15	0,0004	0,2569	4,2491
+20	0,0005	0,2506	4,3572
+25	0,0001	0,2868	3,6111
+30	0,000005	0,3022	3,4153

Դրսի օդի ջերմաստիճան °C	$b = a_2 N_{GT} + b_2$	
	a_2	b_2
-30	0,0020	0,1861
-25	0,0020	0,1888
-20	0,0012	0,2290
-15	0,0020	0,1938
-10	0,0010	0,2432
-5	0,0006	0,2562
0	0,0004	0,2658
+5	0,0006	0,2558
+10	0,0012	0,2360
+15	0,0008	0,2569
+20	0,0010	0,2506
+25	0,0002	0,2868
+30	0,00001	0,3022

Օգտվելով GT8C գազատուրբինային տեղակայանք – օգտահանիչ կաթսայի աշխատանքային ռեժիմների դիագրամից (ա)՝ դրսի օդի ջերմաստիճանի տարբեր արժեքների համար կարելի է ստանալ գազատուրբինային տեղակայանքի հարաբերական հզորության կախումը բացարձակ հզորությունից՝ $N_{GT}^h = f(N_{GT})$, որոնց հավասարումները բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

GT8C գազատուրբինի հարաբերական հզորության կախումը բացարձակ հզորությունից դրսի օդի ջերմաստիճանի տարբեր արժեքների դեպքում

Դրսի օդի ջերմաստիճան °C	$N_{GT}^h = a_3 N_{GT}^2 + b_3 N_{GT} + c_3$			Դրսի օդի ջերմաստիճան °C	$N_{GT}^h = a_3 N_{GT}^2 + b_3 N_{GT} + c_3$		
	a_3	b_3	c_3		a_3	b_3	c_3
-30	0,0025	1,2283	7,8984	+5	0,0009	1,6683	3,5178
-25	0,0014	1,3666	5,2765	+10	0,0025	1,5668	6,8882
-20	0,0006	1,4728	3,6518	+15	0,0032	1,5530	8,5670
-15	0,0006	1,5165	3,3118	+20	0,0030	1,6500	7,7482
-10	0,0015	1,4751	4,9295	+25	0,0033	1,7102	7,6152
-5	0,0024	1,4437	6,0374	+30	0,0034	1,7964	7,1912
0	0,0008	1,6379	2,9744				

Օգտվելով GT8C գազատուրբինային տեղակայանք – օգտահանիչ կաթսայի աշխատանքային ռեժիմների դիագրամից (բ)՝ դրսի օդի ջերմաստիճանի տարբեր արժեքների համար կարելի է ստանալ գազատուրբինային տեղակայանքի ելքում գազերի ջերմաքանակը և ջերմաստիճանը, որոնց հավասարումները բերված են աղյուսակ 4-ում՝

$$Q_{GT}^{bp} = f(N_{GT}^h),$$

$$T_{GT}^{bp} = f(Q_{GT}^{bp}):$$

Աղյուսակ 4

GT8C գազատուրբինի ելքում գազերի ջերմաքանակը և ջերմաստիճանը դրսի օդի ջերմաստիճանի տարբեր արժեքների դեպքում

Դրսի օդի ջերմաստիճան °C	$Q_{GT}^{bp} = a_4 (N_{GT}^h)^2 + b_4 N_{GT}^h + c_4$			Դրսի օդի ջերմաստիճան °C	$T_{GT}^{bp} = a_5 (Q_{GT}^{bp})^2 + b_5 Q_{GT}^{bp} + c_5$		
	a_4	b_4	c_4		a_5	b_5	c_5
-30	0,0017	0,5698	37,243	-30	-0,0059	5,387	-25,496
-25	0,00155	0,5661	37,793	-25	-0,0037	5,0427	-9,8078
-20	0,0010	0,6298	35,871	-20	-0,0078	5,8459	-45,211
-15	0,0007	0,6542	35,540	-15	-0,0085	6,021	-51,187
-10	0,0005	0,6702	35,129	-10	-0,0096	6,3694	-68,362
-5	0,0006	0,6327	36,865	-5	-0,011	6,588	-71,863
0	0,00093	0,5601	39,621	0	-0,0077	6,0984	-49,007
+5	0,00095	0,5371	40,671	+5	-0,0073	5,8934	-27,246
+10	0,0009	0,5258	41,200	+10	-0,0087	6,111	-27,503
+15	0,0011	0,4695	43,329	+15	-0,0108	6,4634	-36,365
+20	0,0017	0,3613	47,079	+20	-0,0092	6,2609	-25,496
+25	0,0013	0,3895	46,486	+25	-0,0105	6,4935	-9,8078
+30	0,0016	0,3199	49,171	+30	-0,0131	7,0316	-45,211

Օգտվելով GT8C գազատուրբինային տեղակայանք – օգտահանիչ կաթսայի աշխատանքային ռեժիմների դիագրամից (գ)՝ կարելի է ստանալ օգտահանիչ կաթսայի ջերմարտադրողականությունը և հեռացող գազերի ջերմաստիճանը:

$$Q_p = (0,000004 (T_{n.օդ.})^2 + 0,0011 T_{n.օդ.} + 0,5134) \frac{7000B}{860},$$

$$T_{h.q.} = 18,43291 - 4,70862 Q_p + 4,595483 Q_{GT}^{bp}:$$

Դիտարկվող օրինակում օգտահանիչ կաթսայի արտադրած շոգին տրվում է K-50-90 շոգետուրբինային տեղակայանք: K-50-90 շոգետուրբինային տեղակայանքի բնութագրերը բերված են աղյուսակ 5-ում [5]:

Աղյուսակ 5

K-50-90 շոգետուրբինային տեղակայանքի բնութագրերը

N_K , ՄՎտ	D_0 , տ/ժ	Q_0 , Քկալ/ժ
30	107	67,7
40	146	90,3
50	186	112,2
55	206	122,8


Օգտվելով վերը բերված աղյուսակների տվյալներից՝ լրացնենք աղյուսակ 6-ը, երբ դրսի օդի ջերմաստիճանը -25°C է:

Աղյուսակ 6


Շոգեգազատուրբինային տեղակայանքի տեխնիկատնտեսական ցուցանիշները
դրսի օդի -25°C ջերմաստիճանի դեպքում

$T_{\text{դ.օդ}},$ $^{\circ}\text{C}$	$N_{GT},$ ՄՎտ	$\eta,$ %	$B,$ տպվ	$b,$ տպվ/ՄՎտ	$N_{GT}^h,$ %	$Q_{GT}^{\text{նր}},$ ՄՎտ	$T_{GT}^{\text{նր}},$ $^{\circ}\text{C}$	$Q_p,$ ՄՎտ	$T_{h.q.},$ $^{\circ}\text{C}$	$N_K,$ ՄՎտ
-25	33	30,1	13,5	0,255	52	71,3	331	53,6	94,1	20,1
-25	35	30,7	14,0	0,259	55	73,5	341	55,8	93,4	21,0
-25	40	31,9	15,4	0,269	62	79,0	365	61,3	92,8	23,1
-25	45	32,9	16,8	0,279	70	84,7	391	66,8	93,3	25,2
-25	50	33,8	18,2	0,289	77	90,7	417	72,4	94,3	27,4
-25	55	34,4	19,7	0,299	85	96,8	444	78,1	95,6	29,7
-25	60	34,9	21,2	0,309	92	103,3	471	84,1	96,7	32,0
-25	65	35,1	22,8	0,319	100	109,9	500	90,5	97,3	34,5
-25	70	35,1	24,5	0,329	108	116,8	529	97,4	96,7	37,2


Աղյուսակ 6-ից կարելի է ստանալ GT8C գազատուրբինով և K-50-90 շոգետուրբինով կահավորված շոգեգազատուրբինային տեղակայանքի էներգետիկական բնութագրերը:



ա)



բ)



q)

Նկ. 2. GT8C գազատուրբինով (ա) և K-50-90 շոգեատուրբինով (բ) կահավորված շոգեգազատուրբինային տեղակայանքի (գ) էներգետիկական բնութագրերը

Աղյուսակ 6-ի և նկ. 2-ի օգնությամբ կարելի է որոշել դիտարկված շոգեգազատուրբինային տեղակայանքի տեխնիկատնտեսական ցուցանիշները և դյուրինացնել էլեկտրական բեռնվածքի օպտիմալ բաշխման խնդիրների լուծումը:

Գրականություն

1. Մարուխյան Ռ.Զ., Ռաֆյան Ռ.Ա. Բնակլիմայական պայմանների ազդեցությունը Երևանի ՋԷԿ-ի համակցված էներգաբովի աշխատանքի վրա // ՀՀ ԳԱԱ և ՀՊՃՀ Տեղեկագիր. Տեխն. գիտ. սերիա. -2013. - Հատ. 66, №2. - էջ 120-126:
2. Цанев С.В., Буров В.Д., Ремезов А.Н. Газотурбинные и парогазовые установки тепловых электростанций.-М.: Издательский дом МЭИ, 2006.-279с.
3. Օհանջանյան Վ. Թվային մեթոդներ. - Երևան: Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2007. - 339 էջ:
4. Արշակյան Դ.Թ. Ջերմային էլեկտրական կայաններ. - Երևան: Լույս հրատարակչություն, 1981. - 596 էջ:
5. Шляхин П.Н., Бершадский М.Л. Краткий справочник по паротурбинным установкам.-М.: Энергия, 1970. - 216 с.

26.06.2018.

М.Ф. Элбакян, Г.К. Баграмян

ОПРЕДЕЛЕНИЕ ТЕХНИКО-ЭКОНОМИЧЕСКИХ ПОКАЗАТЕЛЕЙ ПАРОГАЗОТУРБИННОЙ УСТАНОВКИ

Приведены диаграммы рабочих режимов парогазовой установки, где установлены газотурбина GT8C и паротурбина K-50-90. Определены технико-экономические показатели и энергетические характеристики с учетом влияния температуры наружного воздуха.

Ключевые слова: энергетика, газотурбинная установка, относительный прирост расхода топлива, расход условного топлива, температура наружного воздуха, технико-экономические показатели.

M.F. Elbakyan, G.Q. Baghrmryan

DEFINITION OF TECHNICAL - ECONOMIC INDICATORS OF STEAM AND GAS TURBINE INSTALLATION

Diagrams of operating conditions of steam-gas installation are presented, where GT8C gas-turbine and K-50-90 steam turbine are established. Technical-economic indicators and energetic characteristics considering the influence of temperature external air are defined.

Keywords: energetics, gas-turbine installation, relative gain of the expense of fuel, expense of conditional fuel, temperature of external air, technical-economic indicators.

Էլբակյան Մարիա Ֆրունզեյի – տ. գ. թ., ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Բաղդամյան Գարեգին Քաջիկի – տ. գ. թ., ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

Հ.Զ. Ծատրյան

ԿԱՇԵՆԻ ՊՂԻՆՁ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ

Ներկայացված են Կաշենի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման պարամետրերի օպտիմալացման արդյունքները. պղնձի եզրագծային պարունակության որոշումը, պղնձի եզրագծային պարունակությունից կախված մակաբացման եզրագծային գործակցի փոփոխման օրինաչափությունը, օպտիմալ տարեկան արտադրողականության որոշումը, ինչպես նաև բացահանքի օպտիմալ սահմանների հիմնավորումը:

Առանցքային բառեր. հանքավայր, բացահանք, գին, մակաբացման գործակից, պղինձ:

Ներածություն: Կաշենի հանքավայրը պղնձամոլիբդենային տիպի խոշոր շտոկվերկ է, որի կախված կողի անկման անկյունը կազմում է 35...55°: Հանքավայրը գտնվում է Արցախի Հանրապետությունում և ներկայացված է օքսիդացած, փոփոխված և երկրորդային օքսիդացած (սուպերգեն) գոտիներով [1]:

Ընդհանուր առմամբ, Կաշենի պղինձ-մոլիբդենային հանքավայրում հանքաքարի հաշվեկշռային պաշարները կազմում են 55,7 մլն տ՝ պղնձի 0,49% և մոլիբդենի 0,006% միջին պարունակություններով:

Դիտարկվող հանքավայրի օգտակար հանածոների հաշվեկշռային պաշարների հենքի վրա ներկայումս գործում է Կաշենի լեռնահարստացուցիչ կոմբինատը (ԼՀԿ), որտեղ հանքաքարի արդյունահանումն իրականացվում է բաց եղանակով՝ տարեկան 6 մլն տ արտադրական հզորությամբ:

Խնդրի դրվածքը և հետազոտությունների մեթոդիկան: Կաշենի պղինձ-մոլիբդենային հանքավայրի՝ բաց եղանակով շահագործման պարամետրերի օպտիմալացումը հանգում է հետևյալ խնդիրների լուծմանը.

- պղնձի եզրագծային պարունակության որոշում,
- մակաբացման եզրագծային գործակցի որոշում,
- բացահանքի օպտիմալ արտադրողականության որոշում,
- բացահանքի օպտիմալ սահմանների հիմնավորում:

Վերը նշված խնդիրների լուծման համար՝ որպես օպտիմալության միասնական չափանիշ, ընդունվում է հանքավայրի մշակման ողջ ընթացքում ստացվող առավելագույն շահույթը, որն արտահայտվում է հետևյալ նպատակային ֆունկցիայով [2].

$$(U_{q_i} - \sigma_{q_i}) Q_i \frac{k_{q_i}}{k_{m_i}} \rightarrow \max, \quad (1)$$

որտեղ ըստ i -րդ տարբերակի U_{q_i} -ն 1 տ հանքաքարի կորզվող արժողությունն է, \$/տ, σ_{q_i} -ն՝ 1 տ հանքաքարի արդյունահանման և վերամշակման լրիվ ծախսերը, \$/տ, Q_i -ն՝ ընդերքում հանքաքարի պաշարները, տ, k_{q_i} -ն՝ ընդերքից հանքաքարի կորզման գործակիցը, k_{m_i} -ն՝ հանքաքարի որակի փոփոխման գործակիցը, տ-ն՝ պաշարների շահագործման ժամկետը, տարի:

$$\alpha_k = \frac{T_k(\beta - b) + b Q_{juz}}{Q_{juz}(1 - \alpha) + a T_k}, \quad (2)$$

որտեղ α_k -ն պղնձի եզրագծային պարունակությունն է, %, T_k -ն՝ օգտակար բաղադրիչի եզրագծային պարունակության դրամական արտահայտությունը, \$/տ, β -ն՝ խտանյութում օգտակար բաղադրիչի պարունակությունը, $\beta=28\%$, Q_{juz} -ն՝ 1 տ խտանյութի գինը, $Q_{juz}=1647,55$ \$/տ, a -ն և b -ն՝ հանքաքարում օգտակար բաղադրիչների պարունակությունների՝ պոչանքներում օգտակար բաղադրիչների պարունակություններից կախվածության հավասարումներում հանդես եկող հաստատուն թվային գործակիցները, $a=0,11$, $b=0,04$:

Բաց եղանակով մշակման դեպքում T_k -ն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$T_k = \sigma_h + \sigma_{uz} - \sigma_{\omega} \quad (3)$$

որտեղ σ_h -ն 1 m հանքաքարի հարստացման ինքնարժեքն է, $\sigma_h=6,8$ \$/m, $\sigma_{ա.տ.}$ -ն 1 m հանքաքարի արդյունահանման և տեղափոխման ծախսերը, $\sigma_{ա.տ.}=2$ \$/m, $\sigma_{վ}$ -ն 1 m մակաբացման ապարների հեռացման ծախսերը, $\sigma_{վ}=0,95$ \$/m:

$$k_k = \frac{S_{\nu}}{S_h}, \quad (4)$$

որտեղ k_k -ն մակաբացման եզրագծային գործակիցն է, S_{ν} -ն՝ բացահանքի վերջնական եզրագծերում մակաբացման ապարների արտաքին եզրագծի՝ հորիզոնական հարթության վրա պրոյեկցիայի մակերեսը, $S_{\nu}=566766$ m^2 , S_h -ն՝ բացահանքի վերջնական եզրագծերում հանքային մարմնի արտաքին եզրագծի՝ հորիզոնական հարթության վրա պրոյեկցիայի մակերեսը, $S_h=122982$ m^2 [3]:

Բացահանքի օպտիմալ տարեկան արտադրողականությունը (A_o , $մլն$ $տ/տարի$) որոշվում է Թեյլորի մեթոդով [4].

$$A_o = \frac{Q\eta_o}{(1-\eta_o)T_o}, \quad (5)$$

որտեղ Q -ն ընդերքում հանքաքարի պաշարներն են, $մլն$ $տ$, η_o -ն՝ ընդերքից հանքաքարի կորզման գործակիցը, $\eta_o=0,98$, T_o -ն՝ շահագործական պաշարների մշակման ժամկետը, $տարի$.

$$T_o = 6,5 \sqrt[4]{\frac{Q\eta_o}{(1-\eta_o)}}: \quad (6)$$

Հետազոտության արդյունքները: Սույն աշխատանքում 1 $տ$ ռաֆինացված պղնձի համաշխարհային գինն ընդունվում է 7000 \$/m:

Բացահայտվել են 1 $տ$ ռաֆինացված պղնձի գնից պղնձի եզրագծային պարունակության և վերջինիցս ընդերքում հանքաքարի պաշարների փոփոխման օրինաչափությունները.

$$\alpha_k = \frac{11,2 \cdot 10^{-3} Q_{\nu} + 207}{249,2 \cdot 10^{-3} Q_{\nu} - 277,2}, \quad (7)$$

$$Q = 78,045 - 82,373\alpha_k^2 - 65,999\alpha_k: \quad (8)$$

Հաշվարկվել և հիմնավորվել է պղնձի եզրագծային պարունակությունը՝ կախված 1 $տ$ ռաֆինացված պղնձի գնից [5]: Արդյունքում ստացվել է, որ $\alpha_k=0,20\%$:


Կաշենի բացահանքի համար, համաձայն տեխնոլոգիական նախագծման նորմերի, բացահայտվել է պղնձի եզրագծային պարունակությունից մակաբացման եզրագծային գործակցի փոփոխման օրինաչափությունը.

$$K_k = 19,8920\alpha_k^2 - 6,3495\alpha_k + 5,0842: \quad (9)$$

(7) բանաձևի թվային արժեքը տեղադրելով (8) բանաձևում, իսկ (8) բանաձևի թվային արժեքը՝ (6) ու (5)-ում, և կատարելով համապատասխան փոփոխություններ՝ կստանանք պղնձի եզրագծային պարունակությունից կախված՝ Կաշենի բացահանքի օպտիմալ տարեկան արտադրողականության որոշման բանաձևը.

$$A_o = 0,162 \sqrt[4]{(78,045 - 82,373\alpha_k^2 - 65,999\alpha_k)^3}: \quad (10)$$

Եզրագծային պարունակության հաշվարկված մեծության օգտագործմամբ եզրագծված և հաշվարկված հանքաքարի պաշարների մշակման համար կառուցվել են բացահանքի երեք վերջնական դիրքեր (տարբերակներ). արտաքին կողավորմամբ, ներքին կողավորմամբ և միջին տարբերակ (նկ.):



Նկ. ա) երկայնական կտրվածք, բ) լայնական կտրվածք

(1) նպատակային ֆունկցիայի մեջ տեղադրելով U_{fi} , σ_{fi} , Q_i , k_{fi} և k_{ni} մեծությունները և կատարելով համապատասխան գործողություններ՝ կստանանք տնտեսամաթեմատիկական մոդելը.

$$14,70 \frac{Q^2}{Q_{hi}} (4,02 \alpha_{\varphi_i} - 1) - 0,95 Q_{\varphi_i} \rightarrow \max, \quad (11)$$

որտեղ Q_{hi} -ն ընդերքում հանքաքարի հիմնական պաշարներն են՝ ըստ i -րդ սցենարի, α_{φ_i} -ն՝ հանքաքարում օգտակար բաղադրիչի փաստացի պարունակությունը, %, Q_{φ_i} -ն՝ հեռացվող մակաբացման ապարների ծավալը՝ ըստ i -րդ տարբերակի, m :

Ստացված տվյալները վկայում են, որ, այլ հավասար պայմանների դեպքում, բացահանքի հատակի մեծացումը հանգեցնում է հանքաքարի շահագործական պաշարների մեծացմանը:

Արդյունքում բացահայտվել է հանքաքարի շահագործական պաշարների (Q_2 , m) կախվածությունը բացահանքի հատակի մակերեսից (S_{ph} , u^2) և մակաբացման շահագործական գործակցի (k_2) կախվածությունը հանքաքարի շահագործական պաշարներից.

$$Q_2 = 0,000994 S_{ph}^2 + 0,014027 S_{ph} + 2,503621, \quad (12)$$

$$k_2 = 0,001069 Q_2^2 - 0,052488 Q_2 + 2,606798: \quad (13)$$

Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ երբ 1 m ռաֆինացված պղնձի համաշխարհային գինը կազմում է 7000 \$/տ, ապա դիտարկվող հանքավայրի շահագործումը տնտեսապես նպատակահարմար չէ իրականացնել ներքին կողավորմամբ բացահանքով:

Եզրակացություն: Իրականացված հետազոտությունների արդյունքում, երբ 1 m ռաֆինացված պղնձի համաշխարհային գինը կազմում է 7000 \$/տ, արվել են հետևյալ եզրակացությունները.

- 1) Կաշենի բացահանքի համար, այլ հավասար պայմանների դեպքում, պղնձի եզրագծային պարունակությունը կախված է 1 m ռաֆինացված պղնձի համաշխարհային գնից. այն կազմում է 0,20 %:
- 2) Կաշենի պղինձ-մոլիբդենային բացահանքի եզրագծային մակաբացման գործակիցը կախված է ընդերքում հանքաքարի պաշարներից, որը եզրագծվում է պղնձի եզրագծային պարունակությամբ: Արդյունքում մակաբացման եզրագծային գործակիցը կազմում է 4,61 u^3/u^2 :
- 3) Կաշենի բացահանքի տարեկան արտադրողականությունը փոփոխական մեծություն է. այն կախված է ընդերքում հանքաքարի պաշարներից և կազմում 3,6 u և m /տարի:
- 4) Հաստատվել է, որ բացահանքի օպտիմալ սահմանները, այլ հավասար պայմանների դեպքում, կախված են հանքային զանգվածում օգտակար բաղադրիչի փաստացի պարունակությունից, ընդերքից օգտակար հանածոյի կորզման գործակցից և մակաբացման շահագործական գործակցից: Հետևաբար, Կաշենի պղինձ-մոլիբդենային հանքավայրի յուրացումը նպատակահարմար է իրականացնել արտաքին կողավորմամբ բացահանքով, քանի որ բացահանքի հատակի մակերեսի մեծացումից հանքաքարի շահագործական պաշարներն աճում են ավելի մեծ չափով, քան աճում է մակաբացման շահագործական գործակիցը:

Գրականություն

1. **Հովհաննիսյան Ա.Հ., Մատթյան Հ.Զ.** Կաշենի պղինձ-մոլիբդենային հանքավայրի բնական պայմանները և մշակման առանձնահատկությունները // ՀԱՊՀ Լրաբեր. – 2016. – Մաս 2. Ընդերքօգտագործում. – էջ 662-666:
2. **Агабян Ю.А.** Общая теория оптимального освоения недр (твердые полезные ископаемые). – Saarbrücken, Германия: Palmarium Academic Publishing, 2015. – 288 с.
3. **Нормы технологического проектирования** горнорудных предприятий цветной металлургии с открытым способом разработки. – М.: Минцветмет СССР, 1986. – 109 с.
4. **Taylor H.K.** Rates of working of mines – a simple rule of thumb // Trans. Institution Mining Metall. –1986.-V. 95, sec. A-P. – A203–204.
5. **Цатрян А.З.** Выявление зависимости производственной мощности Кашенского горно-обогатительного комбината от цены меди // Вестник НПУА: Металлургия, материаловедение, недропользование. – 2017. – №2. – С. 85-92.

18.09.2018.

А.З. Цатрян

ОПТИМИЗАЦИЯ ПАРАМЕТРОВ ПРИ ЭКСПЛУАТАЦИИ КАШЕНСКОГО МЕДНО-МОЛИБДЕНОВОГО МЕСТОРОЖДЕНИЯ

Представлены результаты оптимизации параметров при эксплуатации Кашенского медно-молибденового месторождения: определение бортового содержания меди, закономерность изменения контурного коэффициента вскрыши в зависимости от бортового содержания меди, определение оптимальной годовой производительности, а также обоснование оптимальных границ карьера.

Ключевые слова: месторождение, карьер, цена, коэффициент вскрыши, медь.

H.Z. Tsatryan

THE OPTIMIZATION OF PARAMETERS IN THE EXPLOITATION OF KASHEN COPPER-MOLYBDENUM DEPOSIT

The results of the optimization of parameters in the exploitation of Kashen copper-molybdenum deposit are presented: the determination of the copper cutoff-grade, the regularities of contour stripping ratio change dependent on the copper cutoff-grade, the determination of the optimal annual productivity, as well as the justification of the optimal boundaries of the open pit.

Keywords: deposit, open pit, price, stripping ratio, copper.

Ծառրյան Հայկ Զավենի – ասպիրանտ (ՀԱՊՀ)

ՀՏԴ 622.273

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա.Մ. Սաֆարյան, Տ.Ա. Փայտյան, Թ.Մ. Սարգսյան

ԼՂՀ ՄԻՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՅԵՄԵՆՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՈՏԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

ԼՂՀ-ում գեմենտի արտադրության համար միակ հնարավոր տարբերակը գեմենտի ժամանակակից մինի գործարանի կառուցումն է: Ցեմենտի մինի գործարանում արտադրության կազմակերպման դեպքում չորացման և թրծման վրա ջերմության տեսակարար ծախսը չոր եղանակի դեպքում կազմում է 3766...4184 կՋ/կգ կլինկերի համար (թրծման ջերմաստիճանը 1300 °C), այսինքն՝ տնտեսվում է 627,6...920,5 կՋ/կգ ջերմություն կամ 0,018...0,021 մ³ գազ: Միջինը 1տ գեմենտի հաշվով տնտեսվում է 20 մ³ գազ, 100000 տ/տարի գեմենտի արտադրության դեպքում գազի տնտեսումը կազմում է 20000000 մ³:

Առանցքային բառեր. մինի գործարան, գեմենտ, հումքային խառնուրդ, թափոններ, արտադրություն, տեխնոլոգիա:

Տնտեսության վերակառուցման պայմաններում գեմենտի արտադրությունը, ինչպես և արդյունաբերության մյուս ճյուղերը, էական դժվարությունների հանդիպեց: Նյութական պաշարների գների և տրանսպորտային սակագների աճը հանգեցնում են արտադրության արդյունավետության նվազման, ուստի անհրաժեշտ է փոփոխել գեմենտի գործարանների կառավարման համակարգը, հիմնավորել նոր սկզբունքներով գեմենտի արտադրության տեղաբաշխումը՝ նպատակ ունենալով արտադրությունը մոտեցնել սպառողներին, օգտագործել փոխադրման ավելի էժան եղանակներ:

Հաշվի առնելով գեմենտի արտադրության բարձր նյութատարությունը (այդ թվում վառելիքատարությունը և էներգատարությունը)՝ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նյութական պաշարների խնայողությանը, մշակել ռեսուրսախնայողության նոր մեթոդներ, առաջին հերթին՝ օգտագործել գեմենտի ձեռնարկությունների սեփական հնարավորություններն ու պաշարները, օգտագործելով նոր, ավելի էժան նյութեր և վառելիքի տեսակներ, տարբեր արտադրությունների թափոններ՝ գեմենտի արտադրության ծախսերը կրճատելու համար [1-7]:

Շուկայական հարաբերությունների պայմաններում էներգախնայողության գործընթացը տնտեսական մեծ նշանակություն ունի, մասնավորապես՝ գեմենտի արտադրությունում: Սակայն դեռևս լիարժեք մշակված չեն այդ խնդիրները, որոնք պահանջում են արագ լուծումներ:

Ավելի լայն կիրառություն է գտնում «տեխնաձին հումք» եզրույթը: Այդ խմբին են պատկանում ձեռնարկությունների տեխնիկական գործունեության արդյունքում գոյացող թափոնները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում որպես հումքային նյութ: Տեխնաձին հումքը հաճախ մի շարք տեխնիկատնտեսական առավելություններ է ունենում սովորական հումքի համեմատ: Այն կարող է տեխնոլոգիապես ավելի պատրաստ լինել, քան բնական հումքը (մասամբ թրծված, մանրացված և այլն) [1-7]:

Տեխնաձին հումքի համալիր օգտագործման հաշվին հումքային բազայի փոփոխումը գեմենտի արտադրության վերակառուցման հիմքն է: Ներկայումս անգամ ամենաառաջավոր արտասահմանյան ֆիրմաները, նախագծելով գեմենտի նոր արտադրություններ, ավելի հաճախ կողմնորոշվում են դեպի արդյունաբերական թափոնների օգտագործում: Տեխնոլոգիայում կիրառվող հիմնական արտադրական սարքավորման բավական բարձր տեխնիկական մակարդակը այսօրվա դրությամբ դեռևս հնարավորություն չի տալիս էներգախնայողության մեջ կտրուկ թռիչք կատարել: Մինևույն ժամանակ հումքային բովանդակությունից բաղադրության ճշտումը հնարավորություն է տալիս հասնել այնպիսի արդյունքի, որը մի շարք դեպքերում համեմատելի է սարքավորման նոր նմուշների շահագործման հետ [1-7]:

Ածխի վերամշակման արդյունաբերական ձեռնարկություններում կենտրոնացվում են թափոններ, որոնք իրենց քիմիկամիներալոգիական և հրաֆիզիկական հատկություններով նախադրյալներ են ստեղծում դրանք օգտագործելու գեմենտի հումքային խառնուրդների բաղադրությունը արմատապես փոփոխելու համար: Դա հնարավորություն կտա հասնել տեխնիկական բարձր արդյունքի [1-7]:

Ցեմենտի արտադրությունում վառելիքի ծախսերը շատ մեծ են: Դրանք կազմում են կլինկերի ինքնարժեքի մինչև 40%-ը: Ցեմենտի արտադրությունում օգտագործում են պինդ, հեղուկ և գազային վառելիք: Կախված գազը մատակարարող հանքավայրի տեսակից՝ մեթանի պարունակությունը բնական գազերում կազմում է 80...99%, այրման ջերմությունը՝ 34...43 ՄՋ/մ³, խտությունը՝ 0,72...0,85 կգ/մ³ [8]:

Որպես հեղուկ վառելիք ցեմենտի արդյունաբերությունում օգտագործում են մագնիզիտը: Մագնիզիտ տեսակները՝ 40, 100, 200, սահմանում են ըստ նրա մածուցիկության: Մագնիզիտ մոխրայնությունը պետք է լինի ոչ ավելի քան 0,15...0,2%, ջրի պարունակությունը՝ 1...2%, այրման ջերմությունը՝ 40,1...40,6 Uq_{Σ}/q [9]:

Որպես պինդ վառելիք՝ ցեմենտի արդյունաբերությունում օգտագործում են քարածուխը, կիսասանթրացիտը, այրվող թերթաքարերը, գորշ ածուխները, կոքսի մանրուքը: Ցանկալի է օգտագործել 20 Uq_{Σ}/q -ից ոչ պակաս այրման ջերմությամբ պինդ վառելիք, 10...12%-ից ոչ բարձր մոխրայնությամբ, 10...30% ցնդող նյութերի պարունակությամբ: Պինդ վառելիքի ընտրությունը որոշվում է վառարանային ագրեգատի տիպով: Հորանային վառարաններին անհրաժեշտ են առավել գործածվող տեսակների կոքս և անթրացիտ՝ AM, AC, APIII, AIII մինչև 7% ցնդող նյութերի և մինչև 9...16% մոխրի պարունակությամբ [10]:

Տարբեր տեսակի ածուխների ջերմատվությունը, q_{Σ}/q	
կոքս	7 7823,6...30961,6
ածուխ-անթրացիտ	32426...33890,4
քարածուխ	14853,2...2698,6
գորշ ածուխ, լիգնիտ	16317,6...25522,8
ածուխ-կիսասանթրացիտ	26568,4...32426
բնական գազ	34936,4...42886 q_{Σ}/u^B [8-10]:

Չոր եղանակով կլինկեր արտադրելիս ջերմության տեսակարար ծախսը կազմում է միջինը 4686...4812 q_{Σ}/q (թրծման ջերմաստիճանը՝ 1450°C) [11-14]:

Քանի որ ավտոտրանսպորտով ցեմենտի փոխադրման համար պահանջվում են մեծ ծախսեր, և Հայաստանի Հանրապետության ցեմենտի արտադրողները ԼՂՀ-ից տարածքային առումով հեռու են գտնվում, ուստի մինի գործարանի կառուցման միջոցով արդիական է դառնում ԼՂՀ-ի տարածքում ցեմենտի արտադրության հնարավորության հարցը: Այդ նպատակով կատարվել են ԼՂՀ-ի հումքային բազայի հետազոտություններ: ԼՂՀ տարածքում ցեմենտի մինի գործարանի կառուցումը հնարավորություն է տալիս լուծել ցեմենտի տեղային պակասի խնդիրը, տարածաշրջանում կբացվեն նոր աշխատատեղեր, և ցեմենտի մշտական բարձր պահանջարկը նպաստում է շահավետ ներդրում իրականացնելուն:

Ցեմենտի արտադրության մինի գործարանը (նկ.) ներառում է հետևյալ տեխնոլոգիական փուլերը՝ չարդում, հումքային աղաց, խառնում, հատիկավորում և պահպանում, ուղղաձիգ հորանային վառարան, ցեմենտաղաց, ցեմենտի պահպանում և փաթեթավորում:

Ցեմենտի մինի գործարանում հաշվարկված հումքային խառնուրդով, հումքային խառնուրդի բաղադրության մեջ ածխի հարստացման «պոչերի» ներմուծմամբ արտադրություն կազմակերպելիս չորացման և չոր եղանակով թրծման համար ջերմության տեսակարար ծախսը կազմում է 3766...4184 q_{Σ}/q կլինկերի (թրծման ջերմաստիճանը 1300°C), այսինքն՝ խնայվում է ջերմության 627,6...920,5 q_{Σ}/q կամ 0,018...0,021 u^B գազ, կամ 0,023...0,030 q_{Σ} կոքս (ածուխ): 1 տ ցեմենտի հաշվով միջինը խնայվում է 20 u^B գազ, 1 u^B գազի արժեքը 136 $դրամ$ կազմելու դեպքում ստացվում է 2720 $դրամ$ խնայողություն: Տարեկան 100000 տ ցեմենտի արտադրության դեպքում միայն գազի հաշվին խնայողությունը կկազմի 27200000 $դրամ$:


Հորանային վառարաններով ցեմենտի մինի գործարաններում որպես վառելիք կարելի է օգտագործել հարստացված ածուխ: Այրման ժամանակ առաջացող մոխիրը կարող է լցանյութ հանդիսանալ ցեմենտ ստանալու համար [15-17]:

Շուկայում առաջարկվող մինի գործարանների լուծումների մեծ մասը բլոկամոդուլային կառուցվածք ունի:

Բացի այդ, բլոկամոդուլային լուծումներն էապես բարձրացնում են ողջ արտադրության հուսալիությունը՝ ցանկացած մոդուլի կանգառի դեպքում մյուսները շարունակում են արտադրանք թողարկել:

Մոդուլայնությունը կիրառվող կոմպակտ համալիր է, որտեղ բարձրորակ տեխնիկական սարքավորումները հավաքվում են որպես տեխնոլոգիական մոդուլներ, որոնցից կարելի է ստեղծել ցեմենտի գործարաններ՝ ցանկացած պահանջվող արտադրողականությամբ (100000-ից մինչև 300000 տ/տարի), ինչը հեշտացնում է ներդրումների իրականացումը և բարձրացնում է գործարանի հուսալիությունը [15-17]:

Վերլուծելով զարգացող երկրներում մոդուլային տիպի ցեմենտի մինի գործարանների կիրառման նպատակահարմարությունը՝ հարկավոր է պարզել այն պատճառները, որոնք ստիպում են կառուցել նմանատիպ գործարաններ: Այսպիսով, մոդուլային տիպի մինի գործարաններում ցեմենտի արտադրության կազմակերպումը թույլ կտա լուծել որոշակի տարածաշրջանների՝ ցեմենտի պակասի խնդիրը, տարածաշրջանը կապահովվի բազմաթիվ նոր աշխատատեղերով, զգալիորեն կնվազեն տրանսպորտային ծախսերը հումքային աղբյուրին կամ պատրաստի արտադրանքի սպառողին մոտ գտնվելու շնորհիվ և այլն [15-17]:



Նկ. Մինի գործարանում ցեմենտի արտադրության տեխնոլոգիական սխեմա

Արտադրական թափոնների օգտահանման առավել ռացիոնալ եղանակը դրանք որպես տեխնածին հումք օգտագործելն է:

Արդյունաբերական թափոնների խնդրի արդյունավետ լուծում է համարվում անթափոն տեխնոլոգիայի արմատավորումը: Անթափոն արտադրությունները հիմնված են տեխնոլոգիական գործընթացների սկզբունքային փոփոխության, փակ ցիկլով համակարգերի մշակման վրա: Հումքային նյութերի համալիր օգտագործման դեպքում որոշ արտադրությունների արդյունաբերական թափոնները դառնում են հումք մյուսների համար: Հումքի նման օգտագործումը պայմանավորված է ժամանակակից փուլում տնտեսության զարգացման կարիքներով: Հումքի համալիր օգտագործման կարևորությունը կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Առաջինը՝ թափոնների օգտահանմամբ հնարավոր է պահպանել շրջակա միջավայրը, ազատել վարելահողերը: Երկրորդը՝ արդյունաբերական թափոններով մի շարք վերամշակող ոլորտներ ապահովվում են հումքով՝ ընդ որում, հիմնականում այդ հումքը շատ բարձրորակ է և արտադրվելու ընթացքում ենթարկվել է տեխնոլոգիական մշակման (փշրեցման, թրծման և այլն): Երրորդը՝ հումքի համալիր օգտագործման դեպքում պակասում են արտադրանքի միավորի վրա ծախսված տեսակարար կապիտալ ծախսերը, և նվազում է դրանց փոխհատուցվելիության ժամկետը, պակասում են նաև հիմնական արտադրության ակամա ծախսերը, որոնք կապված են թափոնների պահեստավորման և դրանց համար պահեստների, շինարարության և շահագործման հետ, պակասում են ջերմության և էլեկտրաէներգիայի ծախսերը, թափոնների տեխնոլոգիական պատրաստվածության հաշվին ավելանում է սարքավորումների արտադրողականությունը:

Թափոնների օգտահանմամբ հնարավոր է պահպանել շրջակա միջավայրը և ազատել վարելահողերը, պակասեցնել ջերմության և էլեկտրաէներգիայի ծախսերը: Թափոնների տեխնոլոգիական պատրաստվածության հաշվին ավելանում է սարքավորումների արտադրողականությունը:

Գրականություն

1. **Авдеев В.Е.** Состояние и основные положения концепции развития цементной промышленности России // Экономические проблемы развития цементной промышленности на современном этапе.-М.: Концерн “Цемент”, 1997.-С. 5-13.
2. **Юнг О.** Снижение производственных затрат путем использования альтернативного топлива и энергосберегающих мельниц // Цемент и его применение.-2004.-№ 4.-С. 31–35.
3. **Бухтин М.Р.** Применение в цементной промышленности отходов и побочных продуктов - важный фактор экономии сырьевых и энергетических ресурсов // Цемент.-1982.-№2.-С. 47.
4. Энергосберегающая технология производства портландцементного клинкера / **А.В. Брыжик** и др. // Сб. докл. Междунар. конф. “Энерго- и ресурсосберегающие технологии в промышленности строительных материалов”.- Белгород, 2000.-Ч.1.-С. 67-70.
5. **Копелиович В.М., Здоров А.И., Златковский А.Б.** Утилизация промышленных отходов при производстве цемента//Цемент.-1998.-№3.-С. 35-39.
6. **Альбац Б.С., Шенин А.Л.** Малоэнергоемкий портландцемент из низкоосновной сырьевой смеси // Цемент.-1998.-№ 3.-С. 20-22.
7. **Бернштейн В.Л., Дегтярь Е.В., Криулин В.Н., Деменко В.В.** Теоретические аспекты использования техногенных материалов в составе портландцементной сырьевой смеси // Цемент-инновация.-Харьков, 1998.-№1.-С. 18-21.
8. **Краткая химическая энциклопедия:** Энциклопедии, словари, справочники. Т.1, А-Е/Ред.: И.Л. Кнунянц, Г.Я. Бахаровский, А.И. Бусев.-М.: Советская энциклопедия, 1961.-1263с.
9. **Краткая химическая энциклопедия:** Энциклопедии, словари, справочники. Т.2, Ж-М/Ред.: И.Л. Кнунянц, Г.Я. Бахаровский, А.И.Бусев.-М.: Советская энциклопедия, 1963.-1088с.
10. **Краткая химическая энциклопедия:** энциклопедии, словари, справочники. Т.3, М-П/Ред.: И.Л. Кнунянц, Г.Я. Бахаровский, А.И. Бусев.-М.: Советская энциклопедия, 1964.-1112с.
Ընդհանուր առմամբ, կառուցվածքի նախագծման ընթացքում նախնական գնահատանքի մեթոդների մշակումը անհրաժեշտ էր նախ՝ սարքավորումների մշակման ժամկետների կրճատման համար՝ ելնելով տեխնիկական պարամետրերի նկատմամբ անընդհատ աճող բարձր պահանջներից:

Այս աշխատանքի հիմնական խնդիրները ավտոմատացված նախագծման համակարգերի շրջանակներում ինտեգրալ սխեմայի և տպասալի մոնտաժային դաշտի հաղորդաչւերտերի քանակի և տարրերի քանակի լավագույն փոխհարաբերության որոշումն է, որն ապահովում է լցման գործակցի առավելագույն և նվազագույն մոնտաժային դաշտի մակերեսի արժեքներ:

Մաթեմատիկական մոդելի միջոցով [7,8] որոշվել է ԻՄ-ի և ԲՏ-ի հարթակի մոնտաժային դաշտի հաղորդաչւերտերի քանակը՝

$$\bar{\gamma} = \frac{\sum S_{\text{մեռ.}}}{K S} = \frac{d_{\min} \bar{L}}{K abN} = \frac{tm_0 d_{\min} (1-p)(N+N^p)N^{0,5(p-1)}}{K \sqrt{ab}(1+p)(N^{0,5} - N^{0,5p})}, \quad (1)$$


որտեղ $\bar{\gamma}$ – ԻՄ-ի և ԲՏ-ի հարթակի մոնտաժային դաշտի հաղորդաչւերտերի քանակն է, $(\sum S_{\text{մեռ.}} = d_{\min} \bar{L})$ – Ելեկտրական միացումների լարային երկարությունների ընդհանուր մակերեսը, K – ն՝ հաղորդաչւերտի հաղորդալարերի խտության գործակիցը, S – Ելեկտրական մոնտաժային դաշտի ամբողջ մակերեսը, $d_{\min}$ – ն՝ հաղորդալարերի լայնությունը, $\bar{L}$ – Ելեկտրական մոնտաժային դաշտի ելեկտրական միացումների լարերի երկարությունների գումարը, $a \times b$ – ն՝ համապատասխանաբար տարրերի միջև եղած հեռավորությունը հորիզոնական և ուղղահայաց ուղղություններով, N – Ելեկտրական մոնտաժային դաշտի քանակը ԻՄ-ում, t – ն՝ շղթաների ճյուղավորման գործակիցը ($0,5 \leq t < 1$), m_0 – ն՝ տարրերի ելքերի միջին քանակը, p – ն՝ միջտարրային կապերի խտության գործակիցը ($0,1 \leq p \leq 1$):

(1) կախվածությունը թույլ է տալիս լուծել սինթեզի մի շարք խնդիրներ:


Դիտարկենք $\gamma = f(N)$, երբ $K = \text{const}$, $\gamma = f(k)$, երբ $N = \text{const}$, $S = f(N)$, երբ $\gamma = \text{const}$ և $s = f(\gamma)$, երբ $N = \text{const}$ կորերի համակարգը (նկ.1,2): Ստացված $\gamma = f(N)$ և $s = f(N)$ հաստատունության կորերը համընկնում են [7-8] աշխատանքների արդյունքների հետ: Հայտնի է, որ տարրեր մակերեսներ ունեն տարրեր մոնտաժային բնութագրեր: Օգտվելով նշված կախվածություններից՝ կարող ենք ուսումնասիրել ԻՄ և ԲՏ-ի հարթակի միևնույն N ինտեգրացման աստիճանի կախումը մակերեսներից և հաղորդաչւերտերից (նկ. 2):

Դիտարկված սինթեզի մասնավոր խնդիրներն իրենց բնութագրով սկայար են: Ըստ ընտրված ցուցանիշների՝ կառուցվածքների սինթեզի վեկտորական խնդիր դրվածքի դեպքում պետք է հաշվի առնել, որ

այդպիսի բազմաչափանիշային խնդրի լուծումը չի կարող միակը լինել ԻՍ-ի և ԲՏ-ի նախագծման բոլոր դեպքերի համար:



Նկ. 1. Ինտեգրալ սխեմայի հարթակի հաղորդաչերտերի γ քանակի կախումը մոնտաժային դաշտի հաղորդալարերի խտության K գործակցի (ա) և ինտեգրալ սխեմայի տարրերի N քանակից (բ)



Նկ. 2. ԻՍ-ի հարթակի S մակերեսի կախումը մոնտաժային դաշտի հաղորդաչերտերի γ քանակից և տարրերի N քանակից

Միայն նախագծման տեխնիկական առաջադրանքն է որոշում կառուցվածքային պահանջները, որոնց համապատասխան կարելի է սինթեզի խնդիրը ձևակերպել որպես վեկտորային և ընտրել նրա լուծման մեթոդը: Այստեղ պետք է նշել, որ ԻՍ-ի և ԲՏ-ի կառուցվածքների՝ ըստ մի քանի ցուցանիշների սինթեզի ժամանակ բազմաչափանիշային օպտիմալացման մեթոդները հարմար է կիրառել՝ լուծմանը երկրաչափական մեկնաբանություն տալով: Այս հարմարությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքներով, որ ստացված արտահայտությունների հիման վրա կառուցված հաստատունության կորերը բավականին դիտողական են և ի ցույց են դնում հնարավոր լուծումները թույլատրելի լուծումներով տիրույթում (ԹԼՏ)[8,9]:

Հաստատունության (նկ.1,2) կորերը այն հիմքն են, որոնց վրա հիմնվում են ըստ ԻՍ-ի և ԲՏ-ի հարթակի հաղորդաչերտերի քանակը և տարրերի քանակի պարամետրերի կառուցվածքների վեկտորական սինթեզման խնդրի լուծումը [8,9]:

Լուծումները որոշվում են երկչափ դեկարտյան կոորդինատների համակարգում, որտեղ օրդինատային առանցքի վրա դրված են ինտեգրալ սխեմայի հաղորդաչերտերի γ քանակը, իսկ աբսցիսների առանցքի վրա՝ տարրերի N քանակը: Վեկտորային սինթեզի խնդիրների լուծման մեջ հաստատունության կորերի օգտագործման մեթոդիկայի լուսաբանման համար քննարկենք մի օրինակ[8,9]:

Ընդունենք, որ պահանջվում է լուծել ԻՍ-ի և ԲՏ-ի կառուցվածքի սինթեզի խնդիրն ըստ երկու չափանիշի՝

1. ԻՍ-ի և ԲՏ-ի հարթակի մոնտաժային դաշտի մակերեսի մինիմումի,

2. ԻՄ-ի և ԲՏ-ի հարթակի մոնտաժային դաշտի հաղորդաշերտի հաղորդալարերի խտության գործակցի K մաքսիմումի:

Առաջինը նախագծման հիմնական չափանիշներից մեկն է, երկրորդը որոշվում է հարթակի վրա չօգտագործված մակերեսների փոքրացման պահանջով, ինչը հանգեցնում է ոչ անհրաժեշտ մոնտաժային դաշտի նվազեցմանը: Սինթեզի խնդրի լուծման համար սկզբնական տվյալներն են նախագծվող ԻՄ-ի և ԲՏ-ի սկզբունքային էլեկտրական սխեման, ինտեգրալ սխեմայի հարթակի մոնտաժային դաշտի S, K, N և γ պարամետրերի սահմանափակումները, ընտրված ցուցանիշների սահմանափակումները, ինտեգրալ սխեմայի մեկ տիպաչափի վրա կառուցվածքի կառուցման պահանջը՝ ինտեգրալ սխեմայի տրված երկրաչափական չափերի դեպքում նրա հարթակի մոնտաժային դաշտի մակերեսը:

Եթե ԻՄ-ի և ԲՏ-ի նվազագույն երկրաչափական չափերի, մասնավորապես՝ մակերեսի վրա սահմանափակում դրված չէ, ապա դրանց սահմանափակումները կարող են որոշվել խնդրի լուծման ընթացքում:

Ինչպես հայտնի է, ԻՄ-ի և ԲՏ-ի զաբարիտային չափերից ավելի փոքրացումը սահմանափակվում է ներքևից՝ ջերմային ռեժիմի ապահովման պահանջով և հարթակի մոնտաժային դաշտի հաղորդաշերտերի γ քանակով:

Խնդրի լուծումը՝ γ և N ցուցանիշների վրա $S_{\min}$ և $K_{\max}$ սահմանափակումների առկայության դեպքում: Առաջին հերթին խնդրի լուծման համար անհրաժեշտ է որոշել թույլատրելի լուծումների տիրույթը (ԹՄՏ). ԻՄ-ի γ և N պարամետրերի սահմանափակումները թույլատրելի լուծումների որոշ տիրույթ են հաստատում (որոշում), որի սահմաններում անհրաժեշտ է որոշել N, S, K և γ պարամետրերի օպտիմալ արժեքները: Այդ տիրույթը ներկայացնում է ABCD ուղղանկյունը (Պարետոյի տիրույթ) [8,9]:

ԹՄՏ սահմանափակված է՝ ըստ ԻՄ-ի հարթակի $S_{\min}(\gamma, N)$ մակերեսով և մոնտաժային դաշտի հարթակի հաղորդաշերտերի խտության $K_{\max}(\gamma, N)$ գործակցով $\gamma(N)$ դաշտում (նկ. 3):

ԻՄ-ի հարթակի հաղորդաշերտերի քանակը վերևից սահմանափակված է $\gamma_{\text{վ}}$ առավելագույն արժեքով՝ հարթակի հաղորդաշերտերի քանակը եղած անվանացանկից և ներքևից $\gamma_{\text{չ}}$ մինիմալ հաշորդաշերտեր՝ մույն անվանացանկից: Տարրերի քանակի սահմանափակումները դրվում են ԻՄ-ի ֆունկցիոնալ ծավալի ընտրության վրա՝ ներգործող գործոնները հաշվի առնելով վերևից՝ $N_{\text{վ}}$, իսկ ներքևից՝ $N_{\text{չ}}$ (նկ. 3):

γ և K ցուցանիշների փորձնական արժեքների որոշման համար և ԹՄՏ-ի որոշման համար վերլուծենք այդ ցուցանիշների (կամ նրանց հաստատության կորերի) վարքը $\gamma(N)$ կոորդինատային համակարգի առաջին քառորդում:

Նկ. 1-ի բ-ից երևում է, որ $K = \text{const.}$ հաստատունության կորը աճող $\gamma(N)$ կախվածություն է ներկայացնում:

Ըստ որում, որքան ցածր է հաստատունության կորը, այնքան մեծ է լցման խտության գործակցի արժեքը: Դրանում դժվար չէ համոզվել՝ համեմատելով K -ի երկու տարբեր հաստատունության կորերի վրա գտնվող, բայց միևնույն արքսիսն ունեցող կետերը: Վերին կորի վրա գտնվող կետին կհամապատասխանեն ԻՄ-ի հարթակի ավելի մեծ թվով հաղորդաշերտեր, քան ներքևի կորի վրա գտնվողին, ինչը ինտեգրալ սխեմայի հարթակի վրա տարրերի տեղակայման տեղերի միևնույն N քանակի դեպքում կապահովի հարթակի մոնտաժային տարածքի ավելի ամբողջական լրացում: Այսպիսով, K - ի առավելագույն արժեքը ABCD ուղղանկյան մեջ կլինի D կետում:

(1) արտահայտության համակարգչային վերլուծությունները ցույց տվեցին, որ γ -ի հաստատունության կորը K -ից γ -ի $[\gamma(K)]$ նվազող կախվածություն է (նկ.1 ա): Ըստ որում, K -ի աճի հետ γ նվազումը հետզհետե դանդաղում է, և սկսած ինչ-որ պահից՝ N -ի հաստատունության կորը գործնականորեն վերածվում է K առանցքին զուգահեռ ուղու: $N = N_1, N = N_2, N = N_3, N = N_4$ չորս հաստատունության կոր է պատկերված նկ. 1 ա-ում:


K պարամետրի երկու հաստատունության կորերի համեմատության դեպքում ստացված դատողությունների մամուլամբ այստեղ ևս կարելի է եզրակացնել. որքան ցածր է N -ի հաստատունության կորը, այնքան կառուցվածքի տարրերի փոքր քանակի է այն համապատասխանում: Այստեղից հետևում է, որ ABCD ուղղանկյան մեջ տարրերի նվազագույն քանակը կլինի A կետում: ԹՄՏ-ի որոշման համար պետք է կառուցել $N = N_{\min}$ և $K = K_{\max}$ հաստատունության կորերը՝ յուրաքանչյուր

ցուցանիշի համար որպես թույլատրելի լուծումներ առանձնացնելով համապատասխան հաստատունության էքստրեմալային կորից ցածր գտնվող տիրույթը:

Խնդրի հնարավոր լուծումները կախված են ստացված հաստատունության սահմանափակող կորերի և ABCD ուղղանկյան փոխադարձ դիրքից կամ դասավորությունից [8,9]:

1. Դիտարկենք լուծման մեթոդների այն բոլոր հնարավոր տարբերակները, երբ ըստ երկու ցուցանիշի գոյություն ունի միայն մեկ օպտիմալ լուծում:

2. Կմիավորենք այն բոլոր տարբերակները, որոնց լուծման ժամանակ պահանջվում է փոխզիջման որոշ սխեմայի օգտագործում: Առաջին հերթին այս դասին են պատկանում այն բոլոր դեպքերը, երբ $S_{\min}(\gamma, N)$ և $K_{\max}(\gamma, N)$ հաստատունության կորերը հատվում են ABCD ուղղանկյան ներսում: Այս դեպքում 1 հատման (N_{opt}, γ_{opt}) կետում (նկ. 3) N, γ պարամետրերի ընտրությամբ կարելի է կառուցվածքում ապահովել երկու ցուցանիշի օպտիմալ արժեքները:




Նկ. 3. Մոնոտոնային դաշտի մակերեսի $S(\gamma, N)$ և հաղորդաչների հաղորդականության $K(\gamma, N)$ գործակցի կորերի (հաստատունության կորերի) հատումը ABCD թույլատրելի որոշումների դաշտում

Այլ դեպքերի դիտարկման դեպքում պետք է անմիջապես դիտարկումից դուրս թողնել այն տարբերակները, որոնց համար $S = S_{\min}$ կորը կանցնի A կետից ներքև կամ $K = K_{\max}$ կորը կանցնի D կետից ներքև: Այս դեպքում օպտիմալ լուծումը չկա, և ԹԼՏ գոյություն չունի:

Չանազան տարբերակների դիտարկման դեպքում պետք է հաշվի առնել, որ ըստ երկու ցուցանիշի միակ օպտիմալ լուծում գոյություն ունի, երբ $S_{\min}$ կորն անցնում է B կետից ներքև և A կետից վերև: Նկ. 3-ում պատկերված է մի հնարավոր տարբերակ, երբ $S_{\min}$ և $K_{\max}$ կորերը երկուսն են՝ ըստ երկու ցուցանիշի օպտիմալը (հատվում են $1(\gamma_{opt}, N_{opt})$ կետում) [8,9]:

Օգտվելով «Սինթեզե» ծրագրերի փաթեթից՝ որոշվում է տպասալի կամ ինտեգրալ սխեմայի մոնոտոնային դաշտի հաղորդաչների քանակի և տարրերի քանակի լավագույն փոխհարաբերակ-ցությունը՝ ըստ մոնոտոնային դաշտի նվազագույն մակերեսի և առավելագույն լցման գործակցի:

«Սինթեզե» ծրագրերի փաթեթի գործարկումից հետո Սինթեզե պատուհանում ընտրվում է տպասալ կամ ինտեգրալ սխեմա հետազոտվող դաշտը (նկ. 4), որից հետո մուտքագրվում են անհրաժեշտ տվյալների համար նախատեսված արժեքները: Այստեղ պետք է հաշվի առնել, որ ունենք տարբեր տեխնոլոգիական հնարավորություններ, որոնք արտահայտվում են $d_{\min}$, a, b և N մեծություններով [1-8]:




Նկ.4. Տպասալի մոնոտոնային դաշտի նվազագույն մակերեսի և հաղորդաչների հաղորդականության գործակցի հաստատունության կորերի հատումը

$$\gamma_{\min} = 4, \quad \gamma_{\max} = 8,$$

$$N_{\min} = 20, \quad N_{\max} = 50$$

թույլատրելի որոշումների տիրույթում

«Գրաֆիկների տեսակներ» դաշտից ընտրվում է՝ կառուցել թույլատրելի որոշումների տիրույթը (ԲԿ սինթեզ) դաշտը և «Կառուցել» կոճակով կառուցվում են ընտրված տվյալներով գրաֆիկները (նկ.4, 5):




Նկ.5. Ինտեգրալ սխեմայի մոնտաժային դաշտի նվազագույն մակերեսի և հաղորդաշերտի հաղորդալարերի խտության գործակցի հաստատունության կորերի հատումը

$$\gamma_{\min} = 8, \gamma_{\max} = 20, N_{\min} = 11000, N_{\max} = 30000 \text{ թույլատրելի որոշումների տիրույթում}$$

Տպասալի կամ ինտեգրալ սխեմայի հարթակի հաղորդաշերտերի քանակը վերևից սահմանափակված է $\gamma_{\text{վ}}$ առավելագույն արժեքով և ներքևից՝ $\gamma_{\text{հ}}$ նվազագույն արժեքով քանակը եղած անվանացանկից: Տարրերի քանակի սահմանափակումները դրվում են տպասալի կամ ինտեգրալ սխեմայի ֆունկցիոնալ ծավալի ընտրության վրա՝ ազդող գործոնները հաշվի առնելով, վերևից՝ $N_{\text{վ}}$, իսկ ներքևից՝ $N_{\text{հ}}$ (նկ.4,5): Այդ տիրույթը ներկայացնում է (γ, N) դաշտում Պարետոյի տիրույթ[9]՝ ըստ տպասալի կամ ինտեգրալ սխեմայի հարթակի $S_{\min}(\gamma, N)$ մակերեսով և մոնտաժային դաշտի հարթակի հաղորդաշերտերի խտության $K_{\max}(\gamma, N)$ գործակցով (նկ.4, 5):

Երբ $S_{\min}(\gamma, N)$ և $K_{\max}(\gamma, N)$ հաստատունության կորերը հատվում են Պարետոյի տիրույթում, այդ դեպքում հատման $(N_{\text{opt}}, \gamma_{\text{opt}})$ կետում (նկ. 4,5):



Նկ.6. ԻՍ-ի մոնտաժային դաշտի հաղորդաշերտի հաղորդալարերի խտության գործակցի և մակերեսի հաստատունության կորերի հատումը (γ, N) դաշտում

N, γ պարամետրերի ընտրությամբ կարելի է կառուցվածքում ապահովել երկու ցուցանիշի օպտիմալ արժեքները $S(\gamma, N)$ և $K(\gamma, N)$ հաստատունության կորերի հատման կետում (նկ. 6):

Եզրակացություն: Մշակվել է ինտեգրալ սխեմայի հաղորդաշերտերի գնահատման երկպարամետրական մոդել:

Օգտվելով ինտեգրալ սխեմայի կառուցվածքային պարամետրերի անալիտիկ կախվածությունից՝ հաղորդաչերտերի քանակից, մոնտաժային դաշտի մակերեսից, տարրերի քանակից, հարթակի մոնտաժային դաշտի խտության գործակցից և հաստատունության կորերից՝ նախագծման վաղ փուլերում գնահատվել են ԻՍ-ի և ԲՏ-ի մի շարք կառուցվածքային պարամետրեր: Յուրյ է տրված, որ Պարետոյի տիրույթի որոշումից հետո ամենամալատակահարմար արդարացի փոխզիջման մեթոդի կիրառումն է՝ ԻՍ-ի կառուցվածքների բազմաչափանիշային սինթեզման դեպքում:

Գրականություն

1. **Routing Density Analysis of ASICs, Structured ASICs, and FPGAs** Programmable Logic Design Line (0/19/2005) <http://www.soccentral.com/results.asp?CategoryID=563&EntryID=16716>
2. **Theis T.N.** The Future of Interconnection Technology// IBM J.Res. Develop.-May, 2000.- Vol. 44, No 3. -P. 379-390.
3. **Файзулаев Б.Н., Шагурин И.И.** Быстродействующие матричные БИС и СБИС.-М.: Радио и связь,1989.-304 с.
4. **Барсегян П.Л.** Математические основы конструирования микроэлектронной аппаратуры: Учебное пособие:- М.: Изд-во МАИ,1990.- 144 с.
5. **Husikyan D.H., Aharonyan A.K.** The New Definition Method of the Conduction Printed Layers, Quantity, Area and Elements Putting Step in the Large Integral Scheme Platform of Basic Crystal // Proceedings of the Sixth International Symposium on CSNDSP. -23-25 July, Graz University of Technology.- Graz, Austria, 2008. - P. 606-608.
6. **Husikyan D.L., Aleksanyan D.M., Husikyan L.D.** Defining the Conducting Layers Number of a Circuit Field of a Basic Construction Board by the Probability Model // 8th IEEE, IET International Symposium on Communication Systems, Networks and Digital Signal Processing Poznan University of Technology.- Poznan, Poland, 18-20 July, 2012. 10.1109/CSNDSP.2012.6292714.
7. **Усикян Д.О., Александян Д.М., Аветисян К.Г., Матевосян О.Т.** Определение числа слоев проводников монтажного поля ИС// Труды Восьмой Международной научно-практической конференции “Современные информационные и электронные технологии “СИЕТ”-2014. -Одесса, Украина, 2014. - С. 252.
8. **Ալեքսանյան Դ.Մ., Հուսիկյան Դ.Հ.** Ինտեգրալ սխեմայի կառուցվածքի սինթեզումը՝ ըստ հարթակի մոնտաժային դաշտի տարրերի և հաղորդաչերտերի քանակների // Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի և Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի ՏԵԴԵԿԱԳԻՐ. Տեխնիկական գիտությունների սերիա. - Երևան, 2016. - Հատոր LXIX, N2. - էջ 161-168:
9. **Борисов В.И.** Проблемы векторной оптимизации. – В кн.: Исследование операций / Отв. ред. А.А. Ляпунов. – М.: Наука, 1972.- 136 с.

10.09.2018.

Դ.Մ. Александян, Д.О. Усикян СИНТЕЗ ИНТЕГРАЛЬНОЙ СХЕМЫ, ЭЛЕМЕНТОВ МОНТАЖНОГО ПОЛЯ ПЕЧАТНОЙ ПЛАТЫ И КОЛИЧЕСТВА ПРОВОДЯЩИХ СЛОЕВ

Предлагается метод справедливого компромисса, посредством которого определяются количества проводящих слоев и элементов интегральной схемы (ИС) и многослойной платы (МП). Разработана система программ с помощью прикладной программы ‘Wolfram-Mathematica’ и алгоритмического языка C++, которая позволяет автоматически определить количество проводящих слоев монтажного поля ИС и МП на ранней стадии проектирования, а также оптимальное соотношение минимальной площади монтажного поля и максимального коэффициента заполнения.

Ключевые слова: интегральная схема, плата, монтажное поле, количество слоев.

D.M. Aleksanyan, D.H. Husikyan THE SYNTHESIS OF AN INTEGRAL CHIP, THE PASTEBOARD OF A PRINTED BOARD ELEMENTS AND THE CHANNEL NUMBER

A fair compromise method is offered by which the quantities of channels and elements of an integrated chip (IC) and a pasteboard (PB) are defined. A system of program is worked out by the ‘Wolfram-Mathematica’ application program and C++ algorithmic language, which makes possible automatic defining of the channel element numbers of the IC and PB, as well as their best ratio in regard to the minimum area of the pasteboard and the maximum fill factor, still in the early stage of designing.

Keywords: integrated chip, pasteboard, number of channels, algorithmic language.

Ալեքսանյան Դավիթ Մնացականի - հայցվոր (ՀՀ ՊՆ մարշալ Ա Խանդերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան)

Հուսիկյան Դավիթ Հովսեփի - տ.գ.թ., դոցենտ (ՀԱՊՀ)

Գ.Հ. Սարգսյան

ՍԵՐՎԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱՎԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԳՈՐԾԻՔԱՄԻՋՈՑԻ ՄՇԱԿՈՒՄ


Հետազոտվել են Microsoft Windows սերվերի ապարատային վիրտուալիզացիայի Hyper-V տեխնոլոգիայի գործառնությունները, հեռակառավարման և մշտադիտարկման ծրագրային միջոցների, անվտանգության և կառավարման խնդիրների ստեղծման համար: Հետազոտման հիման վրա մշակվել է Hyper-Web ծրագիրը, որի միջոցով ցանցի կառավարիչը հնարավորություն կունենա հեռակառավարելու Hyper-V սերվերը, ստանալու վիրտուալ մեքենաներին մուտքի թույլտվություն, կապի մեջ լինելու օգտատերերի հետ:

Առանցքային բաղեր. Hyper-V, սերվեր, Hyper-Web, կառավարում, վիրտուալ մեքենա (ՎՄ), ցանցի կառավարիչ:


Ներածություն: Տեղեկատվական, ամպային տեխնոլոգիաների առկա զարգացումները խթանել են հեռակառավարման հնարավորությունների զարգացմանը և հսկողությունը դարձրել ավելի աննկատ: Microsoft Hyper-V հիպերվիզորի վրա հիմնված ապարատային վիզուալիզացիայի տեխնոլոգիան հնարավորություն է ստեղծում իրականացնել կազմակերպությունների տեղեկատվության անվտանգության և մշտահսկման նոր մեթոդներ՝ կիրառելով VDI առանձնահատկությունները: Կառավարիչները խնդիրներ են ունենում սերվերների հեռակառավարման, տվյալների փոխանակման անվտանգության, միջավայրաֆորմային համակարգերում աշխատանքի, իրական ժամանակում մշտադիտարկման ժամանակ: Նշված խնդիրներն ունեն կամ պլատֆորմային կախվածություն, կամ տվյալների փոխանակման անվտանգության, կամ հեռավար կառավարման հնարավորության բացակայություն: HyperV-ն տեղադրվելով Windows Server-ի վրա ապահովում է մեծ քանակությամբ վիրտուալ մեքենաների (ՎՄ) միաժամանակյա օգտագործում, սակայն հաճախ հեռակառավարման համար պահանջում է որևէ այլ համակարգ, այսինքն՝ առաջանում է լրացուցիչ ծրագրամիջոցի կիրառման անհրաժեշտություն: VirtualBox-ը և VMWare-ը ավելի տարածված փաթեթներն են նշված խնդրի լուծման համար [1-3]: Կիրառվում են նաև CITRIX կողմից մշակված VDI փաթեթներ, սակայն այստեղ ևս պահանջվում է տեղադրում օգտատիրոջ համակարգչի վրա: Հետազոտման արդյունքում պարզ դարձավ, որ օգտատիրոջ հեռակառավարման համար պլատֆորմից անկախ, անվտանգ ծրագրային միջոցի բացակայությունը արդիական խնդիր է [3, 5]:

Խնդրի դրվածքը: Դիտարկելով ժամանակակից սերվերի կառավարման հիմնախնդիրները, համադրելով առկա լուծումները [3-5] և ինտերակտիվ ծրագրային գործիքները՝ մշակել և ստեղծել ծրագրային գործիքամիջոց սերվերի և օգտատերերի հեռակառավարման, մշտահսկման համար՝ ապահովելով մատչում մեկ կամ մի քանի կառավարիչների կողմից:

Հետազոտվող նյութը: Հետազոտվել են Microsoft-ի սերվերները՝ ցանցի կառավարման տեսանկյունից և Web սերվերների կազմակերպման առանձնահատկությունները [3, 5]: Հետազոտվել է HyperV-ն, որն ունի կառավարման երկու միջավայր՝ գրաֆիկական ինտերֆեյս և հատուկ PowerShell: PowerShell-ն ապահովում է HyperV-ի բոլոր գործառնությունները և իրագործում այն ամենը, ինչ գրաֆիկական ինտերֆեյսը: PowerShell-ն աջակցում է նաև ծրագրավորման լեզուներին և հատուկ գրադարանային ֆայլերին: Ներկայացնենք HyperVeb սերվերի աշխատանքի սկզբունքը (նկ. 1,2):



Նկ. 1. Կառուցվածքային բլոկ սխեմա



Նկ.2. Աշխատանքային բլոկ սխեմա

Սերվերը մշակում է օգտատերերից եկած HTTP հարցումները, վերածում PowerShell-ի հրամանի և արդյունքը փոխանցում սերվերին, որը ձևավորված պատասխանն ուղարկում է օգտատիրոջը, կապն իրագործելով REST API-ի օգնությամբ՝ հեշտացնելով աշխատանքային մոդելը: Կախված իրավիճակից, սերվերը կարող է աշխատել և սինքրոն, և ասինքրոն հարցումներով: Նկ.2-ում ներկայացված է HyperWeb ծրագրային փաթեթի աշխատանքի պարզեցված ալգորիթմը: Ծրագրային փաթեթը բաժանել ենք մի քանի տրամաբանական մասերի՝ Web Server, HyperV Server, Powershell HyperV module (նկ. 2):

Օգտատերը վեբ-դիտարկիչով դիմում է WebServer-ն: Հարցմանը պատասխանում է Backend-մասը, որն ըստ հարցման տեսակի վերադարձնում է FrontEnd-ի համապատասխան էջը (html), օրինակ՝ աուտենտիֆիկացիայի կամ կառավարիչի: Դրանից հետո FrontEnd-ը համագործակցում է Backend-ի REST api-ի հետ ասինքրոն (ajax) հարցումներով, այստեղ FrontEnd-ը Javascript-կոդ է (օգտատիրոջ կողմում աշխատող): Backend-ը մշակում է հարցումները՝ համագործակցելով Powershell-ի հետ, HyperV սերվերի հետ կապվելու համար: Երբ Backend-ը հարցում է ստանում FrontEnd-ից HyperV-ից տվյալներ (ՎՄ-ների ՕՏ) ստանալու համար, դիմում է Powershell-ին (ներկառուցված մոդուլների շնորհիվ), որն էլ իր հերթին WMI -ի ինտերֆեյսի միջոցով կապվում է HyperV-սերվերի հետ: Պատասխանը ստացվում է նույն փուլերով՝ հակառակ հաջորդականությամբ: HyperWeb սերվերը վեբ-ինտերֆեյսով (HTTP/WebSocket) աշխատող ծրագիր է, որը նախատեսված է կամայական օգտատիրոջ հեռակառավարման համար: Այն ունի REST ինտերֆեյս, որի միջոցով ստանում է հրամանները և իրագործում դրանք: Հնարավորություն ունի՝ միացնել (turn on), անջատել (turn off), ավելացնել նոր ՎՄ, փոփոխել ՎՄ-ի տվյալները, անմիջական կառավարել ՎՄ-ի օպերացիոն համակարգերը [4, 5]:


HyperWeb ծրագրային փաթեթը տեղադրվում է HyperV-սերվերի վրա, HyperV workstation հետ միասին, այսպիսով օգտատերը սեփական համակարգչում որևէ ծրագրային փաթեթ տեղադրելու կարիք չունի: Ծրագիրը սերվեր է՝ գրված JavaScript սկրիպտային լեզվով, NodeJS պլատֆորմի վրա: Կիրառել ենք RDP webconnect (WsGate)-ը ծրագրային փաթեթը, որը հնարավորություն է տալիս հեռավար հասանելիություն ստանալ ցանցում գտնվող կամայական համակարգչի աշխատանքային էկրանին: Ծրագրի աշխատանքի համար պահանջվում են նվազագույն կարգավորումներ: Տեղադրվում է սերվերի վրա HyperV և HyperWeb սերվերների հետ միասին:

HyperWeb սերվերի աշխատանքի սկզբունքը:


Մշակված HyperWeb ծրագրային փաթեթը տեղադրվում է HyperV-սերվերի վրա: Սերվերը գործարկվելուց հետո աշխատում է որոշակի բնիկով (լռելյայն 8000) և ընդունում օգտատերերից եկած հարցումները: Օգտատերը դիտարկիչում հավաքելով `http://localhost:8000/` հասցեն՝ ստանում է պատասխան՝ համակարգ մուտք գործելու համար html ֆորմատով: Օգտատիրոջ մուտքանուն-ծածկագիր տվյալները պահվում են .json ֆայլերում, www-ում գտնվում է FrontEnd ծրագիրը, DB-ի մեջ՝ սեփական տվյալների հենքի հետ աշխատելու համար գրադարանը: Հենքում յուրաքանչյուր ՎՄ ունի հետևյալ դաշտերը՝ `vmname`, `active`, `host` - վիրտուալ մեքենայի IP կամ դոմենային հասցեն, որն օգտագործվում է RDP-հասանելիություն ստանալու համար, `login` և `password` - HyperWeb-ում RDP-ում աուտենտիֆիկացիա անցնելու համար: `Node_modules` գրադարանը նախատեսված է Powershell-ի մեջ WindowsPowershell-ի հետ աշխատելու համար: Ծրագիրը գործարկելու համար անհրաժեշտ է հրամանային տողում (կամ այլ console-ային համակարգում) հավաքել `"node index"` կամ `"node index.js"` հրամանը, որից հետո կգործարկվեն վեբ-սերվերը և վեբ-դիտարկիչը, որն արդեն ավտոմատ կերպով կկանչի սերվերի հասցեն:

HyperWeb-ը լռելյայն առաջարկում է օգտատերերին HyperV մոդուլի կառավարման վահանակ՝ հնարավորություն տալով ստեղծել, ջնջել, փոփոխել ՎՄ-ները, անջատել/միացվել և այլն: Տվյալ միջավայրը ընդլայնելու համար մշակվել է API համակարգ, որը թույլ տվեց HyperV-ի գործառնություններ իրականացնող արդեն ստեղծված ծրագրերն իրականացնել հեռավար: Սովորաբար HyperV-ի գործառնությունները կատարվում են powershell հրամանային տողով, իսկ HyperWeb-ի գործառնությունները կարելի է ընդլայնել՝ փոփոխելով `commands.json` ֆայլը:

HyperWeb սերվերի REST ինտերֆեյսը յուրաքանչյուր հարցում ընդունելուց հետո, կատարվում է մշակում, այսինքն՝ հարցման տեսակից կախված կատարում է համապատասխան գործառնություններ, և ձևավորում պատասխան: Nodejs-ը հնարավորություն ունի աշխատել SSL/TLS արձանագրությամբ: Node-js-ում HTTPS -ը իրականացվում է որպես առանձին մոդուլ:



Նկ.3. Հեռակառավարման սխեման



Նկ.4. Աշխատանքային սեղան

```
const https = require('https');
http.request(options):
```

Կատարում է հարցում պաշտպանված սերվերին: options-պարամետր կարող է լինել տող կամ օբյեկտ: Եթե տող է, ապա ավտոմատ վերլուծվելու է `url.parse()` -ի միջոցով:

Օգտատեր ծրագրի ընդհանրացված գործառնություններն են՝ HyperV մոնիտորինգ - HyperWeb սերվերի միջոցով, ՎՄ-ների կառավարում - HyperWeb սերվերի միջոցով, հասանելիություն ՎՄ-ների աշխատանքային էկրանին WsGate-ի միջոցով:


Սխեմայում (նկ.3) ներկայացված է HyperWeb ծրագրային փաթեթի աշխատանքի պարզեցված ալգորիթմը: Ծրագրային փաթեթը կարելի է բաժանել մի քանի տրամաբանական մասերի՝ Web Server, RDP server, HyperV Server, Powershell HyperV module:

Ծրագիրը գործարկելիս բացվում է նույնականացման էջը: Օգտատերը պարտավոր է անցնել աուտենտիֆիկացիա (նկ.4), որից հետո բացվում է աշխատանքային էջ: Ստեղծված է 2 տիպի աշխատանքային էջ՝ կառավարչի և օգտատիրոջ:


Կառավարչի աշխատանքային էջում կա 4 պատուհան, այսինքն՝ կառավարիչը հնարավորություն ունի միաժամանակ կառավարելու 4 ՎՄ: Այս թիվը կարելի է մեծացնել մինչև 32-ի՝ կախված օգտատերերի, ինչպես նաև HyperV սերվերի հնարավորություններից (նկ.5):

Աջ կողմում (նկ.5) ներկայացված է սերվերում գտնվող ՎՄ-ների ցանկը: Հնարավորություն կա միացնել, անջատել, ստեղծել նոր ՎՄ, փոփոխել յուրաքանչյուր ՎՄ-ին մատչելի պարամետրերը:

Բոլոր դեպքերում հարցումները կատարվում են (Ajax) BackEnd-ին ասինքրոն՝ REST api-ի միջոցով: Օգտատիրոջ էջ կարելի է մուտք գործել, նույնականացման ժամանակ օգտագործելով՝ ՎՄ-ի տվյալները (VMName + Password): Այստեղ կարելի է կառավարել այն ՎՄ-ն, որի տվյալներով մուտք է կատարվել դեպի աշխատանքային էջ:



Նկ.5. ՎՄ ստեղծման /փոփոխման պատուհաններ ֆայլը



Նկ.6. HyperWeb-ի ծրագրի կարգաբերման

ՎՄ-ները կառավարելու համար ՎՄ-ի աշխատանքային էկրանը տեղադրվում է 4 դաշտերից մեկում: Աշխատում է WSGate, որը RDP-արձանագրության միջոցով կառավարում է ՎՄ-ի աշխատանքային էկրանը: WSGate-ն աշխատում է մի կողմից՝ WebSocket-ի, մյուս կողմից՝ RDP -

արձանագրությամբ, այսինքն՝ ծրագիրը WSGate-ին միանում է WebSocket-արձանագրությամբ WebSocket-ն էլ երկկողմանի (full-duplex) կապի հնարավորություն է տալիս վեբ-դիտարկիչի և WSGate-ի միջև:

HyperWeb-ի տեղակայումը և կարգաբերումը: HyperWeb-ը տեղադրվում է միայն սերվերի վրա, օգտագործողի կողմից որևէ ծրագրային փաթեթ տեղադրելու անհրաժեշտություն չկա (նկ.6):

Տեղադրվում է WSGate(FreeRDP-WebConnect) սերվերային ծրագիրը, Http-բնիկ նշանակելով՝ 8000:

Կարգաբերում ենք օգտատիրոջ ծրագիրը hyperweb/www/config.js ֆայլում՝

host – HyperV/HyperWeb սերվերի հասցե,

hwHTTPHost - HyperWeb սերվերի հասցե/բնիկ,

hwWSHost - HyperWeb chat սերվերի հասցե/բնիկ:

Գործարկում ենք HyperWeb-ն սերվերը: Դիտարկիչում հավաքելով [“http://address.com:7000”](http://address.com:7000) կամ [“http://IPaddress:7000”](http://IPaddress:7000) հասցեն, որտեղ address-ը HyperV- սերվերի դոմենն է, իսկ IPaddress-ը՝ IP-հասցեն, գործարկում: Պարզ է դառնում, որ HyperWeb-ը տեղադրվելով միայն սերվերի վրա, օգտատիրոջ կողմից որևէ ծրագրային փաթեթ տեղադրելու անհրաժեշտություն չկա:

Եզրակացություն: Հետազոտելով ցանցի հեռակառավարման հիմնախնդիրները, Hyper-V վիրտուալ մեքենաների կառավարման առանձնահատկությունները և սերվերի հետ համագործակցության միջոցները՝ մշակվել և իրականացվել է HyperWeb ծրագրային գործիքամիջոցը, որը վեբ-սերվերի կառավարման ինտերակտիվ գործիք է, պարզ և հարմար ինտերֆեյս՝ կառավարիչի համար, որը հնարավորություն է տալիս հետևել, հսկել և կառավարել:

Գրականություն

1. <http://www.apache.org/foundation>.
2. <http://www.ibm.com/developerworks/ru/library>.
3. Steve Silva. Web Server Administration (1st Edition) – 2012.
4. <http://www.ibm.com/developerworks/ru/library/wa-reverseajax2> - ajax.
5. **Aidan Finn.** Windows Server 2012 Hyper-V Installation & Configuration Guide, 2013. 09.07.2018.

Г.О. Саргсян

РАЗРАБОТКА ИНТЕРАКТИВНОГО ИНСТРУМЕНТА ДЛЯ УДАЛЕННОГО УПРАВЛЕНИЯ СЕРВЕРОМ

Разработан интерактивный инструмент - панель администратора с простым и удобным интерфейсом. Изучена технология Hyper-V для виртуализации аппаратного обеспечения сервера Microsoft Windows с целью удаленного управления и мониторинга программного обеспечения, безопасности и управления. Разработана программа Hyper-Web для администратора, который может в интерактивном режиме удаленно управлять сервером Hyper-V, получать доступ к виртуальным машинам, общаться с пользователями.

Ключевые слова: программное обеспечение Hyper-V, сервер, Hyper-Web, управление, виртуальные машины (VM), администратор.

G.H. Sargsyan

DEVELOPMENT OF AN INTERACTIVE TOOL FOR REMOTE SERVER MANAGEMENT

An interactive tool for remote control of the server - the administrator's panel with a simple and user-friendly interface is developed. The technology of Hyper-V for virtualization of Microsoft Windows server hardware for remote management and monitoring of software, security and management is studied. Hyper-Web programme is developed for administrator who interactively remotely can manage a Hyper-V server, access virtual machines, communicate with users.

Keywords: Hyper-V, server, Hyper-Web, management, virtual machine (VM), administrator.

Սարգսյան Գոհար Հոգսենի – տ.գ.թ., դոցենտ (ՀԱՊՀ)

ՀՏԴ 621.382.13

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ, ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ ԵՎ
ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՕ.Հ. Պետրոսյան, Ա.Ա. Մարտիրոսյան, Ա.Ս. Տրդատյան, Ա.Ս. Պետրոսյան,
Մ.Կ. Մարտիրոսյան

ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՑՄԱՆ ՄԵԹՈԴ

Խառը ազդանշանային մուտք/ելք հանգույցներում հաղորդչից ընդունիչ տվյալների փաթեթը հաղորդվում է հոսքուղով: Ազդանշանի անդրադարձումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է հաղորդչի ելքային և ընդունիչի մուտքային դիմադրությունները համաձայնեցնել հոսքուղու դիմադրության հետ: Ներկայացված է դիմադրությունների համաձայնեցման մեթոդ: Առաջարկվող մեթոդի կիրառման դեպքում էապես փոքրանում է վերջինիս զբաղեցրած մակերեսը հայտնի մեթոդների համեմատ:

Առանցքային բառեր. ինտեգրալ սխեմա, մուտք/ելք հանգույց, անդրադարձումներ, դիմադրությունների համաձայնեցում, աչքի դիագրամ:


Ներածություն: Արագագործ հաջորդական տվյալները հոսքուղով անցնելիս աղավաղվում են, քանի որ ազդանշանն անդրադառնում է և վերադրվելով օգտակար բաղադրիչին՝ առաջացնում է խնդիրներ հուսալի ընթերցման համար (նկ. 1):

Անդրադարձումներից խուսափելու համար անհրաժեշտ է հաղորդչի ելքային և ընդունիչի մուտքային դիմադրությունները համաձայնեցնել հոսքուղու դիմադրության հետ [1]:


1-ում ներկայացված է հաղորդված ազդանշանի անդրադարձման չափի որոշման եղանակը:

$$\frac{V_w}{V_h} = \frac{R_h - Z_w}{R_h + Z_w}, \quad (1)$$

որտեղ V_h -ն հաղորդող և V_w -ն անդրադարձած ազդանշանների պոտենցիալներն են, R_h -ն և R_w -ն համապատասխանաբար հաղորդչի ելքային և հոսքուղու ալիքային դիմադրություններն են: Հաղորդող և անդրադարձած պոտենցիալների հարաբերության չափով տեղի կունենա անդրադարձում (նկ. 2):




Նկ.1. Հոսքուղու առաջացրած աղավաղումները




Նկ.2. Ազդանշանի անդրադարձման մեխանիզմը

(1)-ից ակնհայտ է, որ անդրադարձում չի լինի, եթե հաղորդչի ելքային և հոսքուղու ալիքային դիմադրությունները իրար հավասար լինեն, հակառակ դեպքում՝ հաղորդվող ազդանշանը անդրադառնալով և վերադրվելով աղավաղվում է (նկ. 3):



Նկ.3. Ազդանշանի անդրադարձում


Վերոնշյալ բոլոր երևույթները հանգեցնում են ընդունիչի մուտքում աչքի դիագրամի փակման (նկ. 4): Եթե տվյալների ազդանշանի աչքի դիագրամը փակ է, նշանակում է, որ տվյալների կորուստն անխուսափելի է [2]:



Նկ.4. Փակված աչքի դիագրամ

Դիմադրությունների համաձայնեցման համակարգի հայտնի ճարտարապետության աշխատանքը հիմնված է արտաքին դիմադրության վրա: Արտաքին դիմադրությունն անկախ է գործընթացային շեղումներից, ջերմաստիճանային և սնուցման լարման տատանումներից, ուստի դրա նմանակը ստանալով հաղորդչի ելքում և ընդունիչի մուտքում՝ կարող ենք հաղորդիչ հոսքուղի ընդունիչ համակարգը համարել համասեռ [3]:

Դիմադրությունների համաձայնեցման համակարգը բաղկացած է հոսանքի աղբյուրից, մուլտիպլեքսորից, կառավարվող դիմադրությունից, համեմատիչից և տրամաբանական բջջից (նկ. 5):




Նկ.5. Դիմադրությունների համաձայնեցման մեխանիզմը

Հոսանքի աղբյուրը 3 կասկադից բաղկացած համակարգ է, որի առաջին կասկադը օպերացիոն ուժեղարար է, երկրորդը՝ ընդհանուր ակունքով ուժեղարար է, իսկ երրորդը՝ ակունքային կրկնիչ, որպեսզի ապահովի հոսանքի մեծ հոսք: Մուլտիպլեքսորի օգնությամբ հոսանքն անցնում է դեպի արտաքին, այնուհետև՝ դեպի կառավարվող դիմադրությունները, որի արդյունքում ձևավորվում են համեմատիչի մուտքային լարումները: Համեմատիչը համեմատելով լարումները՝ արդյունքը փոխանցում է տրամաբանական բջջին, որն էլ ձևավորում է զուգահեռ դիմադրության կառավարող ազդանշանը: Գործողությունների նշված հաջորդականությունը կրկնվում է այնքան, քանի դեռ դիմադրությունների ձևավորած լարումները չեն հավասարվել: Երբ լարումները հավասարվում են, նշանակում է, որ դիմադրությունները նույնպես հավասարվել են, քանի որ 2 դեպքում էլ լարումները ձևավորվում են նույն հոսանքի դեպքում:

Վերոնշյալ ճարտարապետությունը ապահովում է բավարար ճշտություն, սակայն զբաղեցնում է մեծ մակերես:

Դիմադրությունների համաձայնեցման համակարգի առաջարկվող մեթոդի աշխատանքը նույնպես հիմնված է արտաքին և ճշգրիտ դիմադրության վրա, սակայն այն բաղկացած է ավելի քիչ ենթահանգույցներից (նկ. 6):




Նկ.6. Դիմադրությունների համաձայնեցման առաջարկվող մեխանիզմը

Դիմադրությունների համաձայնեցման համակարգի առաջարկվող ճարտարապետությունը բաղկացած է կրկնիչից, անալոգաթվային ձևափոխիչից (ԱԹՁ), կառավարվող և ներքին դիմադրություններից:

Կրկնիչը բաղկացած է 2 կասկադից, որոնցից առաջինը օպերացիոն, իսկ երկրորդը՝ ընդհանուր ակունքով ուժեղարարներ են: Կրկնիչը մուտքային լարումների տարբերությունը մոտեցնում է 0-ի՝ իր ունեցած մեծ ուժեղացման գործակցի շնորհիվ: ԱԹՁ-ն ուժեղարարի ելքային անալոգային լարումը փոխակերպում է թվային կոդի, որն էլ կառավարում է կառավարվող դիմադրությունը: R1 և R2 դիմադրություններն ընտրվում են իրար հավասար, որպեսզի ուժեղարարի մուտքը հավասար լինի սնման լարման կեսին:

Այսպիսով կրկնիչի ելքային ազդանշանը փոփոխվում է՝ փորձելով հավասարացնել մուտքային լարումները: ԱԹՁ-ն ձևավորում է թվային կոդ՝ համապատասխան կրկնիչի ելքային լարման: Ստացված թվային կոդը կառավարում է կառավարվող դիմադրությունը: Համակարգը հաստատվում է միայն այն դեպքում, երբ մուտքային լարումները հավասարվում են, և քանի որ դրական մուտքին կիրառվում է սնման լարման կեսին հավասար լարում, ուստի կառավարվող և արտաքին դիմադրությունների մեջտեղում նույնպես ձևավորվում է այդ լարումը: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ կառավարվող և արտաքին դիմադրությունները հավասար են:


Մոդելավորման արդյունքները: HSPICE [4] նմանակման գործիքով մոդելավորվել են արդեն գոյություն ունեցող և առաջարկվող ճարտարապետությունները: Նմանակումն իրագործելիս հաշվի են առնվել գործընթացային հնարավոր շեղումները, ինչպես նաև ջերմաստիճանային և սնուցման լարման տատանումները: Կատարվել է նաև ֆիզիկական նախագծի գնահատում (նկ. 7):



Նկ.7. Ենթահանգույցների զբաղեցրած մակերեսները

Առաջարկվող մեթոդում առկա ԱԹՁ-ի զբաղեցրած մակերեսը համեմատական է գոյություն ունեցող ճարտարապետության մեջ առկա տրամաբանական բջջին և կազմում է ընդհանուր համակարգի զբաղեցրած մակերեսի 5...7%-ը, այդ պատճառով համակարգի մակերեսը հաշվելիս այն կարող է անտեսվել:

Համեմատելով 2 ճարտարապետությունների ֆիզիկական նախագծերը՝ ստացվում է, որ առկա մեթոդից դուրս են եկել հոսանքի աղբյուրը, մուլտիպլեքսորը, համեմատիչը, և ավելացել է կրկնիչը: Դուրս եկած ենթահանգույցների գումարային մակերեսը կազմում է ավելի քան 1200 մկմ², իսկ առաջարկվող կրկնիչի մակերեսը՝ մոտ 520 մկմ² է (նկ. 8):



Նկ.8. Առաջարկվող կրկնիչի ֆիզիկական նախագիծը

Այսպիսով, առաջարկվող մեթոդի կիրառման դեպքում ամբողջ համակարգի ֆիզիկական նախագիծը փոքրանում է ավելի քան 2 անգամ, չվատացնելով ճշտությունը: Մոդելավորման ժամանակ արտաքին դիմադրությունը ընտրվել է 50 Օհմ: Արդյունքներն ամփոփված են աղյուսակում:

Պարամետր	Աղյուսակ					
	Գոյություն ունեցող			Առաջարկվող		
	Նվ.	Տիպ.	Առ.	Նվ.	Տիպ.	Առ.
Դիմադրություն, Օհմ	48,31	50,02	52,43	48,41	49,97	52,62
Մակերես, մկմ ²	1354			638		

Եզրակացություն: Ներկայացված է դիմադրությունների համաձայնեցման մեթոդ, որի զբաղեցրած մակերեսը փոքր է ավելի քան 2 անգամ դասական մեթոդի համեմատ: Առաջարկված մեթոդի կիրառման դեպքում համակարգի ճշտությունը չի փոխվում:

Առաջարկվող ճարտարապետությունը կարող է օգտագործվել արագագործ մուտք/ելք այնպիսի ստանդարտում, ինչպիսին է ունիվերսալ հաջորդական դողը (USB):

References

1. **Samuel P.** High-Speed Serial I/O Design for Channel-Limited and Power-Constrained Systems / Texas A&M University. - 2010. - 57p.
2. Precise analytical eye-diagram estimation method for non-ideal high-speed channels / **Ch. Jeonghyeon, S. Eakhwan, Sh. Jongjoo, et al** // IEEE Electrical Performance of Electronic Packaging and Systems (EPEPS). - 2009. - P. 159-162.
3. **Melikyan V.Sh., Balabanyan A.H., Hayrapetyan A.G., Melikyan N.V.** Receiver/Transmitter Input/Output Termination Resistance Calibration Method // 2013 IEEE XXXIII International Scientific Conference Electronics and Nanotechnology (ELNANO). - Kiev, April 2013. - P. 126-130.
4. Hspice Reference Manual, Synopsys Inc.- 2017. - 846 p.

19.10.2018.

О.А. Петросян, А.А. Мартиросян, А.С. Трдатын, А.С. Петросян, М.К. Мартиросян

МЕТОД КАЛИБРОВКИ СОПРОТИВЛЕНИЙ

В узлах ввода-вывода смешанных сигналов данные передаются по каналу от передатчика к приемнику. Чтобы избежать отражений сигнала, сопротивления выходного сигнала передатчика и вход приемника должны быть откалиброваны с каналом. Представлен метод калибровки сопротивлений. При использовании указанного метода площадь значительно уменьшается по сравнению с известными методами.

Ключевые слова: интегральная схема, узел ввода-вывода, отражения, калибровка сопротивлений, диаграмма-глаз.

O.H. Petrosyan, A.A. Martirosyan, A.S. Trdatyan, A.S. Petrosyan, M.K. Martirosyan

THE METHOD OF RESISTANCE CALIBRATION

In mixed signal input/output systems data transmits from transmitter to receiver through channel. In order to avoid signal reflections resistances of transmitter's output and receiver's input should be equalized with channel. Resistance calibration method is presented. By using the mentioned method, the area is significantly decreasing compared with known methods.

Keywords: integrated circuit, input/output node, reflections, resistance calibration, eye-diagram.

Պետրոսյան Օլեգ Հարությունի – տ.գ.դ. պրոֆ., ՀԱՊՀ

Մարտիրոսյան Արմեն Արայիկի – ՀԱՊՀ ասպիրանտ, «Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ

Տրդատյան Արման Ստեփանի – ՀԱՊՀ ասպիրանտ, «Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ

Պետրոսյան Արման Սերգոյի – ՀԱՊՀ ասպիրանտ, «Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ

Մարտիրոսյան Մերուժան Կարապետի – ՀԱՊՀ ասպիրանտ, «Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ

УДК 620.9: 504.06

ХИМИЧЕСКИЕ, БИОЛОГИЧЕСКИЕ И
ПРИРОДООХРАННЫЕ ТЕХНОЛОГИИ

Л.В. Массель, С.А. Минасян, Т.Г. Зорина, А.Р. Барсегян

**ОЦЕНКА ВЛИЯНИЯ ЭНЕРГЕТИКИ НА ГЕОЭКОЛОГИЮ С
ИСПОЛЬЗОВАНИЕМ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ**

Представлены подходы адекватной оценки влияния энергетики на геоэкологию с использованием информационных технологий. Приведена онтология влияния энергетики на окружающую среду, а также описана архитектура Web-ориентированной информационной системы. Предлагается для реализации информационной системы применять принцип ситуационного анализа.

Ключевые слова: энергетика, геоэкология, онтология, ситуационный анализ, Web-ориентированная информационная система.

В последние годы проблема влияния энергетики на окружающую среду получила широкое распространение в научном мире. Предприятия электроэнергетики, теплоэнергетики и добычи топливно-энергетических ресурсов (ТЭР) оказывают разнонаправленное воздействие на качество жизни населения и окружающую среду. Во многом это зависит от географического расположения страны, ее климатических условий, вида и характера энергетических объектов.

Данная проблема особенно важна для Республики Армения, где самая большая доля производимой электроэнергии приходится на ТЭС (Ереванская и Разданская) - 41%, затем идут ГЭС - 28% и Армянская АЭС - 31% [1]. ТЭС и Армянская АЭС оказывают вредное влияние на окружающую среду из-за сброса в водоемы горячей воды после конденсаторов турбин. Это приводит к недопустимому температурному режиму, нарушающему экологическое равновесие, установившееся в естественных условиях в реках и озерах, что неблагоприятно влияет на флору и фауну. Эксплуатация ГЭС сопровождается затоплением земель, переносом населенных пунктов, повышением давления на сушу от веса воды в водохранилище, изменением экологического равновесия в водоемах. Согласно отчету Национального кадастра антропогенных выбросов и абсорбции парниковых газов, самая большая доля вредных выбросов в атмосферу приходится сегодня именно на долю энергетической сферы - 72,8 % [2].

Различные ученые пытаются исследовать негативные последствия функционирования энергетических предприятий для геоэкологии и определить зоны вредного влияния. В настоящее время оценка влияния энергетики на геоэкологию Армении, Беларуси и Байкальской природной территории России ведется в рамках международного многостороннего проекта ЕАРИ2017-027. Основным оценочным методом является онтологический инжиниринг проблемы с использованием ситуационного анализа, предложенный российским партнером [3]. Задачей такого анализа является выявление основных параметров и существенных факторов, определяющих ситуацию, взаимосвязей между факторами и степени их взаимовлияния. С применением данного метода нами проведены предварительные оценки перечня нежелательных рек для строительства малых ГЭС в Армении [4]. Однако следует отметить, что наличие многочисленных факторов и их неопределенность усложняют адекватную оценку состояния объекта и среды. Решение проблемы состоит в применении современных инструментальных средств и технологий.

Предлагаемая статья посвящена вопросам разработки, интеграции и использования информационных технологий для оценки влияния энергетики на геоэкологию методом онтологического инжиниринга.

На рис. 1 представлена онтология влияния энергетики на окружающую среду. Видно, что предприятия энергетики могут загрязнять воду, воздух и почву. Негативное влияние на качество жизни человека может быть как прямым, так и опосредованным (через растительный и животный мир, т.е. через пищевую цепочку).




Рис. 1. Онтология влияния энергетики на окружающую среду

Для практической реализации метода онтологического инжиниринга предлагается разработка Web-ориентированной информационной системы (WIS), интегрирующей математические и семантические методы, инструментальные средства, базы данных и знаний, а также геоинформационную систему (ГИС).

Предложенная архитектура WIS представлена на рис. 2. В архитектуре выделяются четыре уровня:

1) уровень математических методов, моделей и программ, включающий разработанные на основе выбранных методов и моделей программы расчета объемов загрязняющих веществ и их влияния на качество жизни населения с учетом мощности энергетических объектов (обеспеченность энергоресурсами) и заселенности (плотности населения) на рассматриваемой территории;

2) уровень семантического моделирования, включающий семантические (в первую очередь когнитивные) модели для описания взаимосвязи факторов, определяющих качество жизни, с учетом антропогенных факторов: обеспеченность энергоресурсами и влияние загрязняющих веществ от предприятий энергетики на экологию;

3) уровень представления знаний, объединяющий базу знаний, хранящую описание знаний для построения семантических моделей, и систему онтологий для описания знаний предметной области. Последняя может использоваться как при построении базы знаний, так и при проектировании базы данных;

4) уровень представления данных, интегрирующий ГИС и базу данных, включающую в том числе географические координаты объектов энергетики. ГИС может использоваться как для иллюстрации результатов расчетов, так и для наглядной интерпретации семантических моделей.



Рис. 2. Архитектура Web-ориентированной информационной системы

Метаописание информации, представленной на всех четырех уровнях, хранятся в *Репозитории*. При реализации *Интерфейса* пользователя предполагается применить ситуационное исчисление и компоненты языка ситуационного управления - CML (Contingency Management Language) [5].

Исчисление ситуаций рассматривается как одно из средств формализации ситуации в динамике, позволяющее фиксировать совокупность фактов и свойств объектов и среды, в которой эти объекты функционируют. Исчисление ситуаций является формальной системой, базирующейся на логике предикатов первого порядка. Ситуационное управление основано на следующем положении: каждому классу ситуаций, возникновение которых считается допустимым в процессе функционирования системы, ставится в соответствие некоторое решение по управлению. Ситуационное управление в контексте энергетической безопасности рассматривается как управление в условиях экстремальных ситуаций в энергетике.

Метаонтология CML представлена на рис. 3. Она включает две составляющие: средства описания знаний $D(X,Y,Z)$ (для описания ситуаций, сценариев, управляющих воздействий), реализующие совокупность отношений, и средства манипулирования знаниями $M(A,O)$ (для вызова инструментальных средств и использования семантических моделей и моделей знаний, в т.ч. ГИС и расчетных программ). Отметим, что состав отношений в первой подсистеме может быть ограничен или изменен в соответствии с конкретными задачами исследования.




Рис. 3. Метаонтология языка CML

Разработка предложенного программного продукта позволит адекватно оценить влияние энергетики на геоэкологию, моделировать влияние критически важных объектов на качество жизни населения и принять решения по повышению качества жизни с учетом требований геоэкологии, включающих усовершенствованный аналитический инструментарий для оценки выбросов энергетических объектов и распространения загрязнений.

Исследование выполнено при финансовой поддержке ГКН МОН РА в рамках многосторонней научной программы EAPI2017-027.

Литература

1. **Минасян С.А.** Энергетическая политика РА // Вестник Инженерной академии Армении (ВИАА). – 2014.- Т. 11, № 1.- С. 452-454.
2. Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազդային կադաստրի հաշվետվություն. - Եր., 2017.- 131 էջ:
3. **Массель Л.В., Ворожцова Т.Н., Пяткова Н.И.** Онтологический инжиниринг для поддержки принятия стратегических решений в энергетике // Онтология проектирования. – 2017. – Т. 7, №1 (23). – С. 66-76.
4. **Մինասյան Ս.Ա., Եղիազարյան Գ.Մ., Բարսեղյան Ա.Ռ., Մասսել Ա.Գ.** Հայաստանում հիդրոէներգետիկայի գեոէկոլոգիական հետևանքները և խնդիրները // ՀՃԱ-ի Լրաբեր. - 2018.- Հ. 15, № 2.- Էջ 307-312:
5. **Массель Л.В., Кузьмин В.Р.** Ситуационное исчисление как развитие семиотического подхода к построению интеллектуальной системы поддержки принятия решений // Вестник НГУ. Серия: Информационные технологии.- 2017. - Т. 15, № 4. - С. 43–52.

17.10.2018.

Լ.Վ. Մասսել, Ս.Ա. Մինասյան, Տ.Գ. Զորինա, Ա.Ռ. Բարսեղյան

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԳԵՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ՎՐԱ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ներկայացվել են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գեոէկոլոգիայի վրա էներգետիկայի ազդեցության ադեկվատ գնահատման մոտեցումները: Տրված է շրջակա միջավայրի վրա էներգետիկայի ազդեցության օնթոլոգիան, ինչպես նաև նկարագրված է Web-կողմնորոշմամբ տեղեկատվական համակարգի ճարտարապետությունը: Առաջարկվում է տեղեկատվական համակարգի իրագործման համար կիրառել իրավիճակային վերլուծության սկզբունքը:

Առանցքային բառեր. էներգետիկա, գեոէկոլոգիա, օնթոլոգիա, իրավիճակային վերլուծություն, Web-կողմնորոշմամբ տեղեկատվական համակարգ:

L.V. Massel, S.A. Minasyan, T.G. Zorina, A.R. Barseghyan

ESTIMATION OF ENERGY IMPACT ON GEOECOLOGY USING INFORMATION TECHNOLOGIES

